



# Ձիաց մեր հանապազորդ

ՀՈՒՆՎԱՐ | ՓԵՏՐՎԱՐ | ՄԱՐՏ 2022

**ԼԳ. ՏԱՐԻ**

**Ա. ԵՌԱՄՍԾԱԿ**

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Radio Bible Class ընկերությունը, որի թույլտվությամբ Our Daily Bread գրքույկից թարգմանել ենք հաջորդ էջերի խորհրդածությունները:

---

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն  
AAMA

31 West Century Road

Paramus, New Jersey 07652, USA

E-mail: [amaa@amaa.org](mailto:amaa@amaa.org), Website: [www.amaa.org](http://www.amaa.org)

---

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության

Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18

Հեռ.՝ (010) 54-35-76; (010) 54-35-78

Էլփոստ՝ [amaa.armenia@amaa.am](mailto:amaa.armenia@amaa.am)

Կայքէջ՝ [www.amaa.am](http://www.amaa.am)

Սկզբում էր Բանը, և Բանն Աստծու մոտ էր, և Բանն Աստված էր: (Հոզի. 1.1)

## **ԽՈՍՔԸ ԵՎ ԱՄԱՆՈՐԸ**

**Մ**եծանալով Ֆիլիպիններում՝ Միշելանը զանազան մարտահրավերներ էր դիմագրավել, բայց նա սիրում էր խոսքերը և մխիթարություն էր գտնում դրանցում: Հետո, արդեն համալսարանական տարիներին, երբ կարգաց Հովհաննու Ավետարանի առաջին գլուխը, նրա «քար սիրտն ասես փշրվեց»: Նրան թվում էր, թե մեկն իրեն ասում է. «Այո՛, դու սիրում ես խոսքեր, բայց գիտե՞ս, որ կա մի Հավիտենական Խոսք, որը հիմա և միշտ կարող է ցրել խավարը: Խոսք, որը մարմին է առել: Խոսք, որ սիրում է քեզ»:

Նա կարգում էր Ավետարանը, որի առաջին խոսքերը Ծննդոց գրքի սկիզբն էին հիշեցնում. «Ի սկզբանե...» ( Ծնն. 1.1): Հովհաննեսը փորձում է ցույց տալ, որ Հիսուսը ոչ միայն Աստծո հետ ժամանակի սկիզբն էր, այլև հենց Աստված էր (Հովհ. 1.1): Ու այդ կենդանի Խոսքը մարմին առավ և «մեր մեջ բնակվեց» (Հմ.14): Իսկ նրանք, ովքեր, հավատալով Նրա անվանը, ընդունեցին Նրան, դարձան Նրա զավակները (Հմ.12):

Միշելանն այդ օրը ընդունեց Աստծո սերը և «վերստին ծնվեց Աստծուց» (Հմ.13): Նա փառավորում է Աստծուն՝ իրեն փրկելու և իր ընտանիքի մոլուկները հետևելու հեռանկարից ազատելու համար: Նա այժմ գրում է Հիսուսի Բարի լուրի մասին՝ Կենդանի Խոսքը հասցնելով ուրիշներին:

Եթե հավատում ենք Քրիստոսին, մենք նույնպես ուրիշներին հայտնենք Աստծո պատգամն ու սերը: Սկսելով նոր՝ 2022 թվականը, ի՞նչ շնորհալի խոսքեր կարող ենք ասել այս տարի:

**Աղոթք** - Հիսու՛ս, տու՛ր ինձ խոսքեր, որպեսզի կարողանամ Քո շնորհքով ու սիրով այսօր ու այս տարի օրհնել մեկիմ: Ամեն:

**Հիսուսն Ասծո Խոսքն է: Թող Նա այս օրի փոփոխություն մտցնի քո կյանքում:**

Եվ նոր մարդուն հագեք, որ գիտությամբ նորոգված է իրեն ստեղծողի պատկերի պես:

### **ՆՈՐ ՍԿԶԲԵՆԱԿԵՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ**

**Ե**րբ Բրայընը դարձավ երեսուն տարեկան, տխուր էր, որ դեռ չարունակում է զբաղվել իր չսիրած գործով՝ վաճառքով և որոշեց նոր աշխատանք գտնել: Դավիթի համար Նոր տարվա նախօրյակը առիթ դարձավ, որ նա վճռականորեն որոշի նիհարել: Իսկ Ջեյմսն ամեն ամիս ավելի էր հուսահատվում՝ տեսնելով, որ իր նյարդային բռնկումները չեն նվազում:

Եթե դու էլ երբևէ որոշել ես նոր տարվա, ամսվա սկզբում կամ տարեդարձի օրվանից ինչ-որ փոփոխություն ձեռնարկել, ուրեմն մենակ չես: Նույնիսկ այդ թեմայով ուսումնասիրություններն ունեն որոշակի անուն. նոր մեկնակետի ազդեցություն: Ըստ այդ տեսություն՝ մարդիկ հակված են օրացուցային որևէ նիշ դարձնել փոփոխության մեկնակետ: Ցանկանալով ավելի լավը լինել՝ մենք մի նոր սկիզբ ենք ուղղում: Հիսուսի հանդեպ մեր ունեցած հավատքը ցույց է տալիս մեր այդ ցանկությունը՝ առաջարկելով մի տեսլական, թե ինչպիսին կարող է լինել մեր լավագույնն եսը (Կող. 3.12-14), կոչ է անում դեն նետել մեր անցյալի եսերը (Հմ.5-9): Այդ փոփոխություններն առաջարկում է ոչ թե որոշումներով ու ուխտերով, այլ երկնային զորություններով: Հիսուսին հավատալով՝ մենք կլինենք նոր ժողովուրդ, Աստծո Հոգին կգործի մեր մեջ և ամբողջական կդարձնի մեզ (Հմ.10. Տիտ. 3.5):

Հիսուսով փրկություն ստանալը գերագույն նոր մեկնակետ է, և պետք չէ սպասել օրացուցային ինչ-որ ամսաթվի: Քո նոր կյանքը կարող է սկսվել հենց հիմա:

**Աղոթք** - Հիսու՛ս, Քեզ հետևելու համար հրաժարվում եմ իմ անձնական ծրագրերից: Խնդրում եմ՝ տու՛ր ինձ մի նոր սկիզբ: Ամեն:

**Ասված դասրաս է մեզ ցալու մի նոր սկիզբ, եթե դասրաս լինենք ընդունելու Իր հրավերը:**

Տերը պահպանում է բոլոր նրանց, ովքեր սիրում են իրեն: (Մաղմ. 144.20)

## **ԵՐԲ ՍԵՐՆ ԱՆՍՊԱՌ Է**

**Ս**անդրան հիշում է, որ երբ իր հայրն իրեն տանում էր ծովափ, միշտ հանում էր ժամացույցը, դնում մի կողմ: Իր հետաքրքրությունն էլ մի անգամ ժպտալով պատասխանել էր.«Ուզում եմ՝ իմանաք, թե որքան կարևոր են ինձ համար ձեզ հետ անցկացրածս պահերը»:

Սանդրան այս հուշերը մեզ պատմեց հոր հուղարկավորության ժամանակ՝ անդրադառնալով այն հանգամանքին, թե որքան զնահատելի է, երբ ուրիշները ժամանակ են տրամադրում մեզ և հիշեցնում Աստվածաշնչի խոսքերը Աստծո հոգատարության ու սիրո մասին:

Աստված միշտ ժամանակ է հատկացնում մեզ: 144-րդ սաղմոսում Դավիթն աղոթում է.«Բացում ես ձեռքը քո և քո քաղցր կամքով հագեցնում ես բոլորին: Արդար է Տերն իր բոլոր ճանապարհներին, և սուրբ է նա իր բոլոր գործերում: Տերը մոտ է բոլոր նրանց, ովքեր կանչում են իրեն» (Հմ.16-18):

Աստծո բարուկեցությունն ու ուշադրությունը պահպանում են մեր կյանքի յուրաքանչյուր պահը՝ ապահովելով մեզ համար օղ ու սնունդ: Իր առատ սիրով ու գլխարտությունմբ էլ Արարիչը հյուսում է նույնիսկ մեր գոյության ամենաբարդ մանրամասնությունները:

Աստծո սերն այնքան խորն ու անսահման է, որ Իր ներկայությունմբ նա նույնիսկ ճամփա է բացում դեպի հավիտենական կյանք և ուրախություն՝ կարծես ասելով.«Ես քեզ այնքան եմ սիրում, որ պարզապես ուզում եմ քեզ հետ հավիտյան մնալ»:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ Քո կատարյալ սիրո համար: Խնդրում եմ՝ օգնիր ինձ, որ զովաբանեմ Քեզ ու իմ զգացումների մասին հայտնեմ ուրիշներին: Ամեն:

**Ասված մեզ հետ ժամանակ է անցկացնում, մենք էլ դասրաս լինենք ուրիշների հետ ժամանակ անցկացնելու:**

Ով իմ այս խոսքերը լսում է ու դրանք չի կատարում, մի անխելք մարդու կնմանվի, որ իր տունն ավազի վրա շինեց: (Մատթ. 7.26)

## **ԱՆՆԿՈՒՆ ՀԱՎԱՏՔ**

**Ա**րծաթե լճի հյուսիսային ափին գտնվող սողացող ավազաբլուրները վտանգի տակ էին դրել մոտակա տները: Թեև բնակիչները փորձել էին փոխել ավազի ուղղությունը, բայց անօգուտ էր, ու հիմա մարդիկ հուսահատ հետևում էին, թե ինչպես են իրենց կառուցած տները թաղվում ավազի մեջ: Տեղացի կառավարիչը, որը վերահսկում էր տների մաքրման գործընթացը, հայտարարեց, որ հնարավոր չէր կանխել աղետը, որովհետև ավազային գրունտը ուղղակի չի կարող ամուր հիմք դառնալ:

Հիսուսը գիտեր ավազի վրա տուն կառուցելու անօգուտ լինելը: Երբ իր աշակերտներին զգուշացնում էր սուտ մարգարեներից, վստահեցրեց, որ սիրով հնազանդությունը իմաստություն ուղիին է ցույց տալիս (Մատթ. 7. 15-23): «Նրան, ով իմ այս խոսքերը լսում է ու դրանք կատարում, մի իմաստուն մարդու կնմանեցնեմ, որ իր տունը ժայռի վրա շինեց» (Հմ.24),-սուտ է Նա: -Իսկ «ով իմ այս խոսքերը լսում է ու չի կատարում, մի անխելք մարդու կնմանվի, որ իր տունն ավազի վրա շինեց (Հմ. 26):

Երբ մենք էլ ունենանք ավազակույտերի տակ թաղվելու նման զգացողություն, կարող ենք մեր հույսը դնել Քրիստոսի մեր ժայռի վրա, որը կօգնի մեզ զարգացնելու իր անփոփոխ նկարագրի վրա հիմնված տոկոն հավատք:

**Աղոթք** - Տե՛ր, խնդրում եմ օգնի՛ր, որ կարողանամ զարգացնել աննկուն հավատք: Ձորացրու՛ ինձ, որ կարողանամ Քո հանդեպ ունեցած սիրո և հնազանդության միջոցով ցույց տալ վստահությունս: Ամեն:

**Երբ մեզ զգանք սողացող ավազների վրա, ցույց անք, որ վստահում ենք Աստծոն:**

Հեռու վանեցեք անիրավությունն ու զրկանքը, օրենքով ու արդարությանը վարվեցեք: (Եզ. 45.9)

## **ԴԱՐՁ ԴԵՊԻ ՀԻՄՆԱԿԱՆԸ**

**Ա**յնպիսի տպավորութիւն է, կարծես որոշումներն ընդունվում են չկատարելու համար: Ոմանք նույնիսկ զվարճանում են Ամանորի մի շարք խոստումներով, որոնք կարելի է ասել՝ իրագործելի են: Ահա սոցիալական ցանցից վերցված մի քանի այդպիսի օրինակ.

-Բարեկեցե՛ք լուսացույցին սպասող այլ վարորդներին:

-Դադարեցրե՛ք գործերը վաղվան թողնելը:

-Մի՛ օգտագործեք համացանցային ճանապարհացույցը և մոլորվեք:

-Անջատեք ձեր բոլոր այն ընկերներին, որոնք համացանցում տեղադրում են իրենց սննդակարգը:

Հուզայի աքսորված ժողովուրդը նրա կարիքը շատ ուներ: Յոթանասնամյա աքսորից քսան տարի անց Աստված Եզեկիել մարգարեի միջոցով նրանց խոստացավ. «Հետ եմ դարձնելու Հակոբի գերեվարվածներին» (Եզ. 39.25): Բայց նախ ազգը պետք է վերադառնար իր արմատներին, ութ հարյուր տարի առաջ Մովսեսի միջոցով Աստծո տված հրահանգներին: Դա ներառում էր նաև Նոր տարին: Հին հրեաների համար այն դարնան սկիզբն է (Հմ. 45. 18): Տոնակատարութիւնների գլխավոր նպատակն էր հիշեցնել Աստծո նկարագիրն ու ակնկալիքները: Նրանց ղեկավարներին Նա ասել էր. «Հեռո՛ւ վանեցեք անիրավութիւնն ու զրկանքը, օրենքով ու արդարութեամբ վարվեցեք» (Հմ.9) և շեշտը դրել անկեղծութեան վրա (Հմ.10):

Այս Նոր տարում երբ Աստված ապահովում է մեզ պետք եղածը, թող որ ամրապնդենք՝ մեր հավատքը վերադառնալով հիմնականին. «Միրի՛ր քո Տեր Աստծուն» և «Քո ընկերոջը քո անձի պե՛ս սիրիր» (Մատթ. 22. 37-39):

**Աղոթք** - Հայր, թող Քո Հոգին ինձ ցույց տա այն տեղը, որտեղ ես իմ անձից առաջ պիտի ուրիշներին դնեմ: Օգնի՛ր, որ ամբողջ սրտով սիրեմ Քեզ: Ամեն:

**Անհրաժեշտ է վերադառնալ հիմնական արժեքներին:  
Գործնականացրե՛ք այս կարևոր դասականությունը:**

Բոլոր լսողներն էլ զարմացան այն բաների վրա, որ հովիվները պատմեցին իրենց: (Պուկ. 2.18)

## **ԻՆՉՈՒ՞ ԶԱՐՄԱՆԱԼ**

**Ի**՞նչ է զարմանքը: Մարդ զարմանում է, երբ իր համար բնական ու սպասելի երևույթից տարբեր բան է պատահում: Այդպես Հիսուսի ծննդյան օրը Բեթղեհեմում մարդիկ զարմացան, երբ լսեցին հովիվների պատմածը: Նույնկերպ էլ հետագայում Տեր Հիսուսի խոսքերը լսողները պիտի զարմանային Նրա վարդապետությունից:

Համեստ մսուրի մեջ ծնված մանուկը՝ աշխարհի Փրկիչը, միշտ էլ զարմացրել է շատերին: Նա Նազովրեցի Հիսուսն է, բարոյականություն ուսուցիչը՝ իր պարզություն և միաժամանակ կատարելություն մեջ: Տեր Հիսուսը՝ արդար Դատավորն ու մեծ դատարար կը սովորեցնում է բարիք գործել և սիրել միմյանց, ինչպես Ինքը սիրեց մեզ, աշխարհ եկավ մեզ համար և սովորեցրեց իսկական քրիստոնյայի մաքուր ու բարի սկզբունքները: Հնդիկ մի մանկավարժ ասել է. «Ես սիրում եմ Լեռան քարոզի ու Խաչի Հիսուսին»: Իսկ իսլամ դավանող սուֆիստը գրել է. «Երբ կարդացի Լեռան քարոզը, արցունքներս չկարողացա զսպել»: Լեռան քարոզի հեղինակը՝ գերբնական ուժի ու կարողություն տեր Հիսուսը, Աստված է, որի մեծ հեղինակությունը գրավեց աշակերտների ու ժողովրդի ուշադրությունը և զարմացրեց շատերին: Բեթղեհեմի մսուրում ծնված Քրիստոսը Աստծո երկնային հեղինակությամբ եկավ օրենքը իրագործելու և դառնալու աշխարհի Փրկիչը: Նա պատրաստ էր մարդկանց մեղքերի համար իր կյանքը զոհել խաչի վրա: Ի՞նչ կա այստեղ զարմանալու: Հիսուս Քրիստոսը Աստծո միածին Որդին է, Աշխարհի լույսը և մեր Տերն ու Փրկիչը: Այստեղ զարմանալու ոչինչ չկա:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմք, որ հաճեցիր Որդուդ աշխարհ ուղարկել մեզ փրկելու համար: Օգնիր, որ Քո սուրբ Խոսքը լսելով ու կարդալով՝ չզարմանանք: Ամեն:

**Քրիստոս ծնվեց և հայտնվեց: Թագավորությունը հաստատվեց, Քրիստոսը եկավ, խոսեց, և մեր փրկությունը հնարավոր եղավ: Զեղ և մեզ մեծ ավետիս:**

Աստված ... իր առատ ողորմությամբ, Հիսուս Քրիստոսի՝ մեռելներից հարուբյուն առնելով, մեզ վերստին ծնեց դեպի կենդանի հույսը: (Ա.Պետ. 1.3)

## **ԻՐԱԿԱՆ ՀՈՒՅՍ**

**1** 1960-ականների սկզբին ԱՄՆ-ում պայծառ ապագայի ակնկալիք կար: Երիտասարդ նախագահ Ջոն Քենեդին ներկայացրել էր «Նոր սահմաններ. խաղաղության կորպուս» գաղափարը և Լոուիսն Հասնելու առաջադրանքը: Տնտեսության բարգավաճումը շատերին հույս էր տալիս հավատալու և լավ օրերի սպասելու: Սակայն սկսվեց Վիետնամի պատերազմը, ծավալվեցին ժողովրդական անկարգություններ, Քենեդին սպանվեց, և նախկին լավատեսությունը փոխարինվեց հիասթափությունամբ:

1967-ին աստվածաբան Յուրգեն Մոլթմանն իր «Հույսի աստվածաբանություն» մեջ ավելի հստակ տեսլական մատնանշեց: Դա ոչ թե լավատեսություն, այլ հույսի ճանապարհն էր: Մոլթմանը հաստատում էր, որ լավատեսությունը հիմնված է տվյալ պահի հանգամանքների վրա, իսկ հույսը Աստծո հավատարմության՝ անկախ մեր իրավիճակից:

Ո՞րն է այդ հույսի աղբյուրը: Պետրոսը գրում է. «Օրհնյալ է Աստված և մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայրը, որ իր առատ ողորմությամբ, Հիսուս Քրիստոսի՝ մեռելներից հարուբյուն առնելով, մեզ վերստին ծնեց դեպի կենդանի հույսը» (Ա. Պետ. 1.3): Մեր հավատարիմ Աստվածը իր Որդու՝ Հիսուսի միջոցով հաղթեց մահին: Այս մեծագույն իրողությունը մեզ լավատեսությունից տեղափոխում է դեպի ամուր ու մշտական հույսի դաշտ:

**Աղոթք** - Հայր, այս աշխարհը տառապալից ու շփոթեցնող է, և շատ ձայներ ինձ մղում են դեպի անհուսություն: Օգնիր, որ սիրտս արմատավորեմ Հիսուսի հարության խոստման և գորության մեջ, որոնք ապագայի հույսն են: Ամեն:

**Անկախ մեր լավատեսության կամ հոռետեսության իրավիճակներից՝ մեզ կարող է ֆաջալեռել իրական հույսը:**



Քո եղբայր Ահարոնին ասա՝ թող ամեն վայրկյան վկայության տապանակի առաջ գտնվող վարագույրից ներս անցնելով՝ սրբարան չմտնեն: (Ղև. 16. 2)

## **ՄՈՏԵՆԱԼՈՒ ԶՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ**

**Թ**ագավարակի հետևանքով բանկից գումար ստանալու համար անհրաժեշտ է մի շարք հաստատված կանոնների ենթարկվել: Նախ պետք է ժամադրություն նշանակել, հասնելուն պես զանգահարել, որպեսզի մուտքի մոտ փաստաթղթերն ստուգելուց հետո քեզ ներս թողնեն: Ներս մտնելուց հետո էլ ծանր դռները կրկին փակվում են, որտեղ զբված է լինում այն, ինչի համար եկել ես բանկ:

Հին կտակարանում էլ Աստված ուներ հատուկ արձանագրություններ խորանի այն մասը մտնելու համար, որ կոչվում է «Սրբություն Սրբոց» (Ելք 26.33): Հատուկ վարագույրը Սուրբ վայրն առանձնացնում է Ամենասուրբ տեղից, որտեղ տարեկան մեկ անգամ միայն քահանայապետը կարող է մտնել (Եբ. 9.7): Ահարոնն ու իր հետևից եկող քահանայապետները բերելու էին ընծաներ, լվացվեին ու ներս մտնելուց առաջ սրբազան հանդերձներ հագնեին (Ղև. 16.3-4): Աստծո ցուցումները առողջություն կամ անվտանգության համար չէին, այլ նախատեսված էին իսրայելցիներին Աստծո սրբության և ներում ստանալու անհրաժեշտության մասին սովորեցնելու համար:

Երբ Հիսուսը մեռավ, այդ հատուկ վարագույրը պատուվեց (Մատթ. 27.51), որպես խորհրդանիշ այն բանի, որ բոլոր նրանք, ովքեր հավատում են իրենց մեղքերի թողություն համար՝ Նրա զոհողությանը, կարող են մտնել և վայելել Աստծո ներկայությունը: Տապանակի խորանի վարագույրի պատուվելը մեզ համար անսպառ ուրախության պատճառ է, որովհետև Հիսուս մեզ տվել է միշտ Աստծուն մոտենալու հնարավորություն:

**Աղոթք** - Տե՛ր Հիսուս, շնորհակալ եմ, որ հնարավոր ես դարձնում իմ մոտենալը Աստծուն: Ամեն:

**Ասծոն մոտենալը հնարավոր է Տե՛ր Հիսուսի միջոցով:  
Ուրախանա՞նաք այս ճշմարտությամբ:**

Բայց լվացվեցիք, բայց սրբվեցիք, բայց արդարացաք Տեր Հիսուսի անու-  
նով: (Ա.Կորնթ. 6.11)

## **ԼՎԱՑՎԱԾ**

**Ը**նկերս՝ Բիլը, պատմեց Ջերարդ անունով իր ծանոթներից մեկի մասին, որը տարիներ շարունակ շատ հեռու է եղել Աստծուց: Երբ Բիլը նրան բացատրել է, թե ինչպես է Աստված մեզ փրկելու համար ճանապարհ ցույց տվել, Ջերարդը հավատացել է, արտասովելով զղջացել իր մեղքերի համար և իր կյանքը հանձնել Հիսուսին: Դրանից հետո, երբ Բիլը հարցրել է, թե ինչպես է զգում, նա պարզապես ասել է.«Լվացված»:

Հիանալի պատասխան: Դա է իսկական փրկություն էությունը, որը հնարավոր դարձավ Հիսուսի՝ մեզ համար խաչվելով: Ա.Կորնթ. 6-ում Պողոսը, թվարկելով Աստծո արքայությունը հասնելու անարժաններին, ասում է.«Եվ մի քանիսդ այսպիսին էիք, բայց լվացվեցիք, բայց սրբվեցիք, բայց արդարացաք Տեր Հիսուսի անունով»(Հմ.11):

«Լվացված», «սրբված», «արդարացած» բառերը ցույց են տալիս հավատացյալների ներումն ու արդարացումը իր միջոցով:

Փրկություն կոչված հրաշալիքի մասին ավելին է ասվում Տիտոս 3. 4-5-ում. «Մեր Փրկիչ Աստծու քաղցրությունը և մարդասիրությունը հայտնվեց, ոչ թե արդարության գործերից, որ մենք արեցինք, այլ իր ողորմության համաձայն փրկեց մեզ՝ կրկին ծնվելու ավագանով և Սուրբ Հոգու նորոգությամբ»: Մեր մեղքերը մեզ հեռացնում են Աստծուց, սակայն Հիսուսի հանդեպ մեր հավատը սրբում ու մաքրում է այդ մեղքերի պատիժը: Միայն Նա կարող է ապահովել լվացվելու համար անհրաժեշտ ամեն բան:

**Աղոթք** - Սիրելի՛ Հիսուս, գիտեմ, որ մեղք եմ գործել Քո դեմ, և դրա պատիժը Քեզանից բաժանվելն է: Շնորհակալ եմ Քո տված փրկության համար, որի միջոցով կկարողանամ մոտենալ Քեզ: Ամեն:

**Որդես թույլ եակներ՝ մե՛նք մի՛ս հակված ենք մեղք գործելու, սակայն գոհությու՛ն Ասծո՝ Տեր Հիսուսի շնորհիվ ներվում ենք ու լվացվում:**



Որքան հեռու է արևելքն արևմուտքից, այնքան հեռացրեց նա մեր անօրինությունները մեզնից: (Սաղմ. 102. 12)

## **ՆԵՐՈՒՄԻ ՈՒՐՎԱԳԻԾԸ**

«**Քծի՛ր ուրվագիծը**» կոչվող խաղալիքը կարմիր, ուղղանկյունաձև փոքրիկ մի տուփ է, որի վրայի կոճակները սեղմելով ու տարբեր ուղղություններով թափահարելով շատ տարբեր պատկերներ կարող ես ստանալ: Ճիշտ է, այն նախատեսված է երեխաների համար, բայց մեծերն էլ հաճույքով են զբաղվում այդ կախարդական տուփով: Հատկապես, երբ այն առաջարկում է դատարկ պաստառի վրա մի նոր գծագիր սկսել: Այդ խաղում ասես Աստծո ներողամտությունը ցուցադրված լինի, երբ Նա սրբելով մեր մեղքերը՝ մեզ առաջարկում է մաքուր կտավ, մի նոր սկիզբ: Եթե նույնիսկ մենք հիշում ենք մեր գործած սխալները, Աստված ներում ու մոռանում է դրանք: Նա հիշաչար չէ, մեզ հետ չի վարվում մեր գործած մեղքերի համեմատ (Սաղմ. 102.10): Աստծո ներողամտությունը խնդրելով՝ մենք հնարավորություն կունենանք ազատվել հանցանքից ու ամոթից և մեզ վերապահված մի նոր կյանք սկսել մաքուր էջից:

Սաղմոսերգուն ասում է, թե մեր մեղքերը մեզանից հեռու են, ինչպես արևելքը արևմուտքից (Հմ.12): Դա շատ մեծ տարածություն է: Աստծո աչքով մեր մեղքերն այլևս չեն կառչի մեզ՝ որպես սխալ կամ վատ գծագիր: Սա ուրախանալու և իր ողորմություն ու հիանալի շնորհի համար Աստծուն շնորհակալություն հայտնելու առիթ է:

**Աղոթք** - Սիրո՛ղ Աստված, շնորհակալ եմ Քո ներումի համար: Դիչեցրո՛ւ ինձ, որ մոռացել ես իմ մեղքերը: Ամեն:

**Ասված մեզ հետ չի վարվում մեր գործած մեղքերի համեմատ: Ուսի երախսադարս լինենք Նրան:**

Այս բաները խոսեցի ձեզ հետ, որպեսզի իմձանով խաղաղություն ունեցաք: Աշխարհում նեղություն կունենաք, բայց քաջացե՛ք. ես հաղթել եմ աշխարհին: (Հովհ. 16.33)

## **ԽՈՒՍԱՓՈՒՄ, ԹԵ՞ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ**

**Ո**րոշել էինք ջեռուցման կաթսա գնել: Դրա մաքրությունը, սպառած էներգիայի քանակն ու ապահոված ջերմությունը գրավիչ էին: Սակայն մեզ մի փոքր մտահոգում էր «Խուսափել» գրառումը, որ նշված էր գովազդի ցուցանակին:

Այդ բառը բավական ազդեցիկ է, մանավանդ երբ նշվում է խոստացված բարիքների կողքին: Սփոփանք, հանգստություն, ապահովություն և խուսափում: Դա նշանակում է, որ կյանքում կլինեն դժվարություններ, որոնցից հարկավոր է խուսափել:

Հովհաննու 16-ում Հիսուսն Իր աշակերտներին ասում է, որ փորձելու է նրանց հավատը: «Աշխարհում նեղություն կունենաք, -ասում է Նա,-բայց քաջացե՛ք. ես հաղթել եմ աշխարհին: (Հմ. 33): Հիսուսը չէր ուզում, որ Իր աշակերտները հուսահատվեն: Նա հորդորում էր վստահել Իրեն և իմանալ Իր տված հանգստի մասին. «Այս բաները խոսեցի ձեզ հետ, որպեսզի ինձանով խաղաղություն ունենաք» (Հմ.33):

Հիսուսը մեզ անցավ կյանք չի խոստանում: Բայց խոստանում է, որ Իրեն վստահելու դեպքում կունենանք խաղաղություն, որն ավելի խորն ու գոհացնող է, քան որևէ խուսափում կամ զգուշացում, որ աշխարհը փորձում է տալ մեզ:

**Աղոթք** -Հայր, երբեմն ենթարկվում եմ աշխարհի մատուցած խուսափելու առաջարկներին: Օգնի՛ր, որ կարողանամ աճել՝ վստահելով Քեզ: Հոգ չէ, թե ինչ դժվարություն եմ դիմագրավում, թող որ Քո մեջ գտնեմ հանգիստ ու խաղաղություն: Ամեն:

**Աշխարհը մեզ խուսափելու առաջարկներ է մատուցում, բայց որքանով եմ վստահ, որ կկատարվեն սրված խոստումները:**

Երկնքից լսիր նրանց աղոթքն ու խնդրանքը, իրավադատ եղիր նրանց նկատմամբ: (Թագ. 8. 45)

## **ԵՐԿՆՔԻՑ ՄԵՉ ԼՍՈՒՄ Է**

**Փ**ոքրիկ Մեյսընը առաջին անգամ մոր ձայնը լսեց տասնութ ամսականում: Երբ բժիշկները տեղադրեցին լսողական գործիքը, մայրը հարցրեց նրան.«Բարև, փոքրիկս, դու լսու՞մ ես ինձ»: Երեխայի աչքերը լուսավորվեցին, և նա ժպտաց: Հուզված մորը թվաց, թե ինքը ականատես է իսկական հրաշքի: Մեյսընը վաղաժամ էր ծնվել՝ 500 գրամ քաշով, 158 օր մնաց վերականգնացման բաժանմունքում, և ոչ ոք հույս չունեեր, որ նա կապրի, առավել ևս որևէ խնդիր չի ունենա:

Այս սրտահույզ պատմությունն ինձ հիշեցնում է Աստծուն, որ միշտ լսում է մեզ: Սողոմոն թագավորը Աստծոն ջերմեռանդ աղոթում էր հատկապես տազնապալի պահերին. երբ «անձրև չլինի» (Գ. Թագ. 8.35), «Եթե երկրի վրա սով լինի, ժանտախտ, խորշակահարույթուն» (Հմ.37), «պատերազմ» (Հմ.44) և նույնիսկ՝ մեղք: Եվ նա խնդրեց. «Երկնքից լսի՛ր նրանց աղոթքն ու խնդրանքը, իրավադատ եղիր նրանց նկատմամբ» (Հմ.45):

Աստված այդ աղոթքին պատասխանեց մի շատ բարի ու սրտառուչ խոստովով. «Եթե իմ ժողովուրդը, որի վրա իմ անունն է դրված, գղջա, աղոթի և իմ երեսը փնտրի ու հետ դառնա իր չար ճանապարհներից, ես էլ երկնքից կլսեմ, կներեմ նրանց և կբուժեմ նրանց երկիրը» (Բ.Մնաց. 7.14): Երկինքը կարող է հեռու թվալ, բայց Հիսուսը բոլոր նրանց հետ է, ովքեր հավատում են Իրեն: Աստված լսում է մեր աղոթքները և պատասխանում դրանց:

**Աղոթք** - Երկնավոր Հայր, իմ ամենադժվարին

մարտահրավերների ու նեղությունների մեջ շնորհակալություն եմ հայտնում քեզ, որ լսում ես իմ խոնարհ աղերսները: Ամեն:

**Մսահոգիչ վիճակներ մի՞ս էլ կունենանք, սակայն հավասանք, որ Աստված լսում է մեր աղոթքները:**

Այն ժամանակ ես հասկացա, որ դա Տիրոջ խոսքն է, և գնեցի ազարակը: (Եր. 32.8-9)

## **ԾԻԾԱՂԵԼԻ ՀԱՅՈՒՄ**

**1** 929-ին Միացյալ Նահանգների տնտեսական ճգնաժամի ժամանակ միլիոնավոր մարդիկ կորցրին ամեն ինչ: Բայց ո՛չ Ճլոյդ Օդլումը: Նա հայտնի է որպես ամերիկացի միակ մարդը, որը հսկայական կարողություն է դիզել ամերիկյան մեծ ճգնաժամից: Երբ բոլոր մեծահարուստները խուճապի մատնված վաճառում էին իրենց բաժնետոմսերը, Օդլումը «հիմարաբար» գնեց դրանք ցածր գնով և շատ լուրջ շահույթ ունեցավ, որը շարունակվեց տասնամյակներ:

Աստծո առաջարկը Երեմիային նման անհեթեթ քայլ էր թվում. «Գնի՛ր ազարակը, որը գտնվում է Անաթոթում, Բենի-ամինի երկրում» (Եր. 32.8): Դաշտեր գնելու հարմար պահ էր, երկիրը կործանման եզրին էր. «բաբելացիների արքայի զորքը պաշարել էր Երուսաղեմը» (Հմ. 2), և ինչ էլ գներ Երեմիան, մնալու էր Բաբելոնին: Ո՞ր անմիտը նման բան կձեռնարկեր:

Այն մարդը, ով լսում է Աստծուն, որը ապագա է տեսնում այնտեղ, որտեղ որևէ մեկը չի պատկերացնում: Որովհետև «Այսպես է ասում Ամենակալ Տերը, Իսրայելի Աստվածը. «Այս երկրի մեջ տները, ազարակներն ու այգիները նորից պիտի գնվեն» (Հմ.15): Աստված ավերակներից ավելին տեսավ և խոստացավ բերել փրկություն, բուժում ու վերականգնում: Հետևաբար անլուրջ թվացող շահութաբեր գործողությունը հարաբերություններում կամ Աստծո ծառայության մեջ հիմարություն է, դա հնարավոր ամենախմաստուն քայլն է, երբ Աստված է առաջնորդում: Երբ Աստված մեզ առաջնորդում է «անմիտ» թվացող քայլ անելու, իմաստ ունի հետևել դրան:

**Աղոթք** - Հայր, լավ է, որ Դու տեսնում ես ապագան, որովհետև ես երբեմն տեսնում եմ միայն աղետ ու կործանում: Ցու՛յց տուր՝ ուր գնալ և կյանքս որտեղ տալ: Ամեն:

**Եթե մտածում ես, որ ֆեզանից Աստծո խնդրածը ծիծաղելի է կամ անլուրջ, վստահի՛ր Նրան, որ ամեն բան բարությանը է անում:**

Խոսքը կատարողներ եղեք և ոչ միայն լսողներ՝ ձեր անձերը խաբելով: (Յակ.1. 22)

## **ԳՈՐԾԱԴՐԵՔ ԶԵՐ ՔԱՐՈՉԱԾԸ**

**Ա**ստվածաշունչը սկսեցի երեխաներիս համար կարգալ, երբ կրտսեր որդիս՝ Զավիերը սկսեց մանկապարտեզ հաճախել: Գտնում էի հարմար պահեր և սովորեցնում հատկապես այն մասերը, որոնք հարմար էին մեր պարագաներին, ու նրանց քաջալերում էի, որ ազդեցին ինձ հետ: Զավիերը շատ արագ ու դյուրին անգիր սովորեց խոսքը: Ու երբ այնպիսի վիճակներում էինք հայտնվում, որ իմաստնություն կարիք էր լինում, նա արտասանում էր համապատասխան հատվածները, որոնք լույս էին սփռում Աստծո ճշմարտության վրա: Մի օր բարկացա ու կոպիտ խոսեցի նրա հետ: Որդիս գրկեց ինձ ու ասաց. «Մայրիկ, գործադրե՛ք խոսքը»: Զավիերի մեղմ հիշեցումը ասես արձագանքը լինի Հակոբոս առաքյալի իմաստուն խորհրդի, երբ նա խոսում էր տարբեր երկրներում ցրված Հիսուսին հավատացող հրեաների հետ (Հակ. 1.1): Նկատելով, թե ինչպես կարող է մեզքը խանգարել Քրիստոսի մասին եղած վկայությունը, Հակոբոսը նրանց խրախուսեց. «Խոնարհուլթյա՛մբ ընդունեցեք ձեր մեջ սերմանված խոսքը» (Հմ.21): Լսելով, բայց չհնազանդվելով խոսքին՝ մենք նմանվում ենք այն մարդկանց, որոնք նայում են հայելուն և իսկույն մոռանում, թե ինչպիսին էին (Հմ.23-24): Հիսուսին հավատացողներին պատվիրված է ավետարանի մասին պատմել ուրիշներին: Սուրբ Հոգին փոխում է մեզ՝ միաժամանակ գորացնելով ու դարձնելով ավելի լավ ներկայացուցիչներ ու բարի լուրի պատգամախոսներ: Ինչպես մեր սիրալիր հնազանդությունն է օգնում մեզ արտացոլելու Աստծո ճշմարտության ու սիրո լույսը՝ որտեղ էլ լինենք, այնպես էլ մենք կարող ենք ուրիշներին առաջնորդել դեպի Հիսուսը՝ գործադրելով մեր իսկ քարոզածը:

**Աղոթք** - Սիրո՞ղ Աստված, խնդրում եմ, ինձ ավելի նմանեցրո՛ւ Քեզ, որպեսզի կարողանամ օգտագործել յուրաքանչյուր առիթ և այլոց հետ խոսել Քո սիրո մասին: Ամեն:

**Հաճախ եմ տայաբարում Աստծո խոսքին հնազանդվելու համար՝ մոռանալով, որ լինելու եմ այն գործադրողները:  
Ուսի խնդրեմք Աստծո օգնությունը:**

Ես, տեսնելով այդ արյունը, պիտի խնայեմ ձեզ: (ԵԼՔ 12.13)

## ՄԱՅՈՎ՝ ԿՅԱՆՔ

**Կ**արլը պայքարում էր քաղցկեղի դեմ և կարիք ուներ երկու թոքերի փոխպատվաստման: Նա Աստծուց խնդրեց նոր թոքեր, բայց նաև վատ զգաց իր այդ խնդրանքից, քանի որ մեկը մեռնելու էր, որպեսզի ինքն ապրեր: Կարլի այդ երկսայրի դժվարությունը շեշտում է սուրբգրային մի հիմնական ճշմարտություն. Աստված մահն օգտագործում է կյանք բերելու համար: Դա երևում է «Ելքի» պատմության մեջ: Ստրկություն մեջ ծնված իսրայելցիները տանջվում էին եգիպտացիների կեղեքիչ լծի տակ: Փարավոնը էլք հրաժարվում իր բռնակալական նկրտումներից, մինչև որ Աստված որոշեց լուծել խնդիրը: Նա պատվիրեց, որ յուրաքանչյուր ընտանիք սպանի անարատ մի գառ, խորովի և ուտի միսը, այրի ոսկորները: «Թող վերցնեն նրա արյունից ու քսեն տան դռան սեմին երկու տեղ ու դռան շրջանակի վերևը» (Ել.12. 6-7): Դա լինելու էր նշան, որ կատարվել է Տիրոջ պահանջը, և ընտանիքի անդրանիկ որդին փրկվելու էր մահից: Մենք էլ չէինք ձերբազատվի սատանայի ճնշումից ու մեղքերից, եթե Աստված մեզ չօգներ ու իր կատարյալ Որդուն չզոհաբերեր: Հիսուսը մեզ կանչում է միանալու Իրեն՝ այնտեղ: Պողոսը գրում է. «Ես Քրիստոսի հետ խաչվեցի: Եվ կենդանի եմ, այլևս ոչ թե ես, այլ Քրիստոսն է իմ մեջ կենդանի» (Գաղ. 2. 19-20): Երբ մենք հավատանք Աստծո անարատ Գառնուկին, պարտավորված կլինենք ամեն օր իր հետ մեռնել, որպեսզի կարողանանք Նրա հետ նոր կյանք ունենալ (Հռոմ. 6.4-5): Այս հավատքը մենք արտահայտում ենք ամեն անգամ, երբ մերժում ենք մեղքի կապանքները և հաստատում Քրիստոսի ազատությունը: Մենք երբեք ավելի կենդանի չենք, քան այն ժամանակ, երբ մեռնում ենք Հիսուսի հետ:

**Աղոթք** - Տեր Գիսուս, Քո մահն ինձ կյանք է բերում: Օգնի՛ր, որ մեռնեմ մեղքի համար և իմ կյանքն ապրեմ Քո միջոցով: Ամեն:

**Քրիստոսով նոր կյանք ունենալու միակ միջոցը մահն է՝ Քրիստոսի մահը մեր փրկության համար:**



Ես եմ աշխարհի լույսը. ով իմ հետևից գա, նա խավարի մեջ չի գնա, այլ կյանքի լույսը կընդունի: (Յուդի. 8. 12)

## ԽԱՎԱՐ ԵՎ ԼՈՒՅՍ

**Ռ**ատարանի դաճիճուճում ականատես ես լինում մարդկային տարբեր ճակատագրերի, աշխարհի անկատարությունների բազում օրինակների. դուստրն օտարացել է մորից, երբեմնի սիրող ամուսինները դարձել են թշնամիներ, մեկ այլ դեպքում ամուսինը փափագում է հաշտվել կնոջ հետ ու միանալ ընտանիքին և այլն: Ու հասկանում ես, որ այդ բոլորին անհրաժեշտ են փոխված սրտեր, բուժված վերքեր և Աստծո գերակայող սեր: Երբ մեզ թվում է, որ շրջապատող աշխարհը միայն խավարի ու ցավերի մեջ է, շատ դյուրին է հուսահատվելը: Սակայն Հոգին, որ ապրում է Քրիստոսին հավատացողների մեջ (Հովհ. 14.17), հիշեցնում է, որ Հիսուսը մեռավ այդ ընկճվածությունում ու ցավի պատճառով: Երբ նա աշխարհ եկավ որպես մարդ, լույս բերեց խավարի մեջ (1. 4-5, 8.12): Դա տեսնում ենք նաև Նիկողեմոսի հետ Նրա խոսակցության ժամանակ: Նա գիշերային խավարում գաղտնի եկել էր Հիսուսի մոտ, սակայն գնաց Լույսից ազդված (3.1-2, 19.38-40):

Հիսուսը Նիկողեմոսին սովորեցրեց. «Աստված այնպես սիրեց աշխարհը, որ իր Միածին Որդուն տվեց, որպեսզի ամեն նրան հավատացողը չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա» (3.16):

Թեև Հիսուսը լույս էր և սեր բերեց աշխարհին, բայց այնուամենայնիվ շատերը թաղված են մնում իրենց մեղքերի խավարում (Հմ. 19-20): Եթե մենք Նրա հետևորդներն ենք, ուրեմն ունենք խավարը ցրող լույս: Որպես երախտագիտություն՝ եկե՛ք աղոթենք, որ Աստված մեզ դարձնի իր սիրո փարոսները (Մատթ. 5. 14-16):

**Աղոթք** - Շնորհակալ եմ, Աստված, որ եկել ես մեղքի խավարից ու հուսահատությունից փրկելու ինձ: Օգնի՛ր, որ մնամ Քո լույսի ներքո: Ամեն:

**Հի՛սի՛ր, որ Աստված սիրում է քեզ: Ուստի նորոգի՛ր հավատքդ ու Քրիստոսի լույսը բաժանի՛ր ուրիշներին:**

Նայենք հավատի զորագլխին ու կատարողին՝ Հիսուսին... որպեսզի ձեր անձերով չհոգնեք և չթուլանաք: (Եբ. 12. 2-3)

### **ՀԵՐՈՍԱԲԱՐ ԴԻՍԱԳՐԱՎԻՐ ՔՈ ՓՈԹՈՐԻԿԸ**

**1** 968-ի ապրիլի 3-ի երեկոյան Թենեսի նահանգի Մեմֆիս քաղաքում կատաղի ամպրոպ սկսվեց: Հոգնած ու վատառողջ վեր. դոկտ. Մարտին Լյուլթեր Քինգը մտադիր չէր իր ծրագրած ուղերձն արտասանել ի պաշտպանութուն եկեղեցու սրահում հավաքված առողջապահության ոլորտի գործադուլավորների: Սակայն երբ նրան հեռախոսով հայտնեցին, որ չնայած վատ եղանակին՝ մեծ բազմութուն է հավաքվել, նա գնաց դահլիճ ու քառասուն ըոպե խոսեց: Դա նրա վերջին ելույթն էր, որում, մասնագետների կարծիքով, նա տվել է իր մեծագույն պատգամը՝ «Ես եղել եմ լեռան գագաթին» խորագրով: Հաջորդ օրը Քինգը սպանվեց, սակայն նրա ուղերձը շարունակում է ներշնչել ճնշված մարդկանց «Խոստացված երկրի» հույսով:

Հիսուսի առաջին հետևորդները նույնպես ներշնչվել էին հույսի մի պատգամով: Եբրայեցիների գիրքը, որ գրվել է հրեա հավատացյալներին քաջալերելու համար, առաջարկում է չհուսահատվել. «զորացրե՛ք թուլացած ձեռքերն ու տկարացած ծնկները» (12.12): Որպես հրեաներ՝ նրանք կիմանային, որ այդ կոչը ի սկզբանե գալիս է Եսայի մարգարեից (Ես. 35. 3):

Որպես Քրիստոսի աշակերտներ՝ կոչ ունենք, որ «համբերությամբ վազենք մեր առաջ դրած ասպարեզի ընթացքը՝ նայելով Հիսուսին՝ մեր հավատքի զորագլխին ու կատարողին» (Եբ. 12.1-2): Երբ դա կատարենք, «չենք հոգնի և չենք թուլանա» (Հմ.3): Հիսուսով մենք կկարողանանք գոյատևել կյանքի փոթորիկների մեջ և ամուր կանգնել Նրա առջև:

**Աղոթք** - Տեր Հիսուս, Դու հանգստացնում ես յուրաքանչյուր հոգեկան փոթորիկ: Երբ այդ փոթորիկները մոլեգնեն, խաղաղությամբ խոսիր իմ հոգու հետ, երբ ես հույս դնեմ Քեզ վրա: Ամեն:

**Հոգեկան փոթորիկներ մի՛ս էլ կուճենանք, սակայն փրկության համար կարևորը Տեր Հիսուսին նայելն ու Նրան վստահելն է:**

Ամենքն էլ մոլորված ոչխարներ են: (Ես. 53.6)

## ՍԻՐՈ ՄԵԾԱԳՈՒՅՆ ՊԱՐԳԵՎԸ

**Ո**րդիս՝ **Ջեֆը**, խանութից դուրս գալիս նկատեց մի լքված քայլակ: Ցանկանալով գտնել դրա տիրոջը՝ նա հայացք գցեց շուրջը և շենքի հետևում տեսավ մայթին ընկած մի թափառաշրջիկի:

**Ջեֆը** արթնացրեց նրան, հարցրեց որպիսությունը: Մարդը պատասխանեց, որ խմում է, որպեսզի մեռնի, որովհետև փոթորկի պատճառով քանդվել է վրանը, նա կորցրել է ամեն ինչ և այլևս չի ուզում ապրել: **Ջեֆը** զանգահարեց Քրիստոնեական վերականգնման նախարարություն, և մինչ օգնությունը կգար, ինքը գնաց տուն և բերեց իր անձնական ճամբարային վրանը: Հարցրեց անձանոթի անունը: «**Ջեֆրի**», -ասաց նա, և **Ջեֆը** մտածեց, որ այդ մարդու տեղում կարող էր և ինքը լինել:

Որոշ ժամանակ նա պայքարում էր թմրանյութերի դեմ և այդ մարդուն օգնեց Աստծուց ստացած բարություն շնորհիվ: Եսայի մարգարեն, կանխագգալով Տեր Հիսուսով մեր հանդեպ եղած Աստծո ողորմածությունը ասաց. «Ամենքն էլ մոլորված ոչխարներ են. մարդն իր ճանապարհին մոլորվեց, բայց Տերը նրա՛ն մատնեց մեր մեղքերի համար» (Ես. 53.6):

Մեր Փրկիչ Քրիստոսը մեզ չթողեց մենակ ու անհույս, որ կորչենք: Նա նախընտրեց նույնանալ մեզ հետ և սիրով բարձրացնել մեզ, որպեսզի մենք ազատ լինենք՝ Իրենով մի նոր կյանք ապրելու: Չկա սրանից ավելի մեծ պարգև:

**Աղոթք** - Տեր, շնորհակալ եմ, որ եկար ինձ փրկելու: Օգնի՛ր, որ միանամ Քեզ փնտրող փնտրողներին և բաժնեկցեմ սերդ մեկի հետ, ով ունի դրա կարիքը: Ամեն:

**Ի՞նչ դիտի լինե՞ր մե՞ր վիճակը առանց Հիսուսի ու Նրա փրկարար սիրո: Եկե՛ք լինե՞նք Նրա ձեռքերն ու nsfերը և հասնե՞նք որևէ կարոսյալի:**

Արթո՛ւն կացեք ու աղոթեցե՛ք, որ փորձության մեջ չընկնեք. հոգին հոժար է, բայց մարմինը՝ տկար: (Մատթ. 26. 41)

### **ԱՐԹՈՒՆ ԿԱՅԵՔ**

**Գ**երմանացի մի բանկային աշխատող հաճախորդի հաշվե-համարին 62.40 եվրո փոխանցելիս ննջել էր, և մատով սեղմած լինելով 2 թիվը՝ 222 միլիոն եվրո ( 300 մլն. ամերիկյան դոլար) էր փոխանցել: Այդ սխալի հետևանքով աշխատանքից ազատվեց ոչ միայն այդ, այլև այն աշխատակիցը, որը վավերացրել էր փոխանցումը: Մխալն, իհարկե, ուղղվեց, սակայն այդ դեպքը բանկի համար մղձավանջ դարձավ:

Հիսուսը զգուշացրել էր իր աշակերտներին, որ եթե նրանք արթուն չմնան, կարող են շատ ծանր սխալներ գործել: Նրանց տարավ Գեթսեման կոչվող մի վայր՝ որոշ ժամանակ այդտեղ աղոթելու: Աղոթելիս Նա հանկարծ անասելի տրտմեց: Այդպիսի զգացողություն իր երկրային կյանքում Նա երբեք չէր ունեցել: Նա խնդրել էր Պետրոսին, Հակոբոսին ու Հովհաննեսին, որ արթուն մնան ու աղոթեն իր հետ (Մատթ. 26. 38), բայց նրանք քնել էին (Հմ. 40-41): Այդ պատճառով էլ Նա մնաց անպաշտպան, հատկապես երբ եկավ Նրան ուրանալու պահը: Քրիստոսի ամենամեծ կարիքի պահին աշակերտներին պակասում էր հոգևոր զգոնությունը:

Հոգեպես արթուն մնալու համար թող որ մենք ուշադիր լինենք Տեր Հիսուսի խոսքերին և ավելի նվիրվելով՝ աղոթքով ժամանակ անցկացնենք իր հետ: Երբ մենք դա անենք, Հիսուսը կգորացնի մեզ՝ դրանով իսկ կկանխվի Նրան ժխտելու ծանր սխալը:

**Աղոթք** - Տե՛ր Դիսուս, հոգևոր առուևով քնած եմ, չեմ աղոթում: Ասել է, թե՛ Քեզ չեմ վստահում: Խնդրում եմ՝ ների՛ր ինձ և օգնի՛ր, որ ավելի շատ ժամանակ տրամադրեմ աղոթելու: Ամեն:

**Դարկավոր է ավելի մեծ նվիրումով ժամանակ տրամադրել աղոթքին: Արթո՛ւն մնանք և աղոթենք:**

Դրանք լսելով՝ իմաստունն ավելի իմաստուն լինի: (Առ.1.5)

## **ՀՄՈՒՏ ՍԵՐ**

**Ե**րբ մի լրագրողի հարցրին, թե ինչպես եղավ, որ ընտրեց այդ մասնագիտությունը, նա պատմեց, որ այդ գործում մեծ է եղել իր մոր ներդրումը: Ամեն օր մետրոյով երթեկեկելիս նա հավաքել է նատարաններին դրված օրաթերթերն ու տվել որդուն: Սկզբում իրեն ավելի շատ հետաքրքրել են մարզական թեմաներով նյութերը, սակայն ամեն օր ամենաբազմազան լուրերի ընթերցումը նրան տվել է գիտելիքներ աշխարհի մասին և առաջացրել հետաքրքրություն այդ ամենի վերաբերյալ: Երեխաները բնական հակում ու սեր ունեն սովորելու: Հետևաբար նրանց փոքր տարիքից հարկավոր է ներկայացնել Աստվածաշունչը: Նրանց մեջ հետաքրքրություն կառաջանա Աստծո արտասովոր խոստումների և աստվածաշնչային հերոսների պատմությունների հանդեպ: Հետագայում, երբ նրանց գիտելիքները խորանան, իրենք արդեն կկարողանան հասկանալ մեղքի հետևանքները, ապաշխարելու կարևորությունն ու Աստծուն վստահելու ուրախությունը: Առականների գրքի առաջին գլուխը հիանալի ներածական է իմաստության օգուտների մասին (Առ.1.1-7), հատկապես դրա ոսկե համարները լույս են սփռում իրական կյանքի իրավիճակների վրա: Սովորելու հանդեպ սերը, հատկապես հոգևոր ճամբարությունների ուսանումը մեզ կօգնեն ավելի ուժեղանալ մեր հավատքում: Նրանք, ովքեր տասնամյակներով քայլել են հավատքով, կարող են Աստծո մասին գիտելիքներն ամբարել ամբողջ կյանքի ընթացքում: Առականների 1.5-ում ասվում է «Դրանք լսելով՝ իմաստունն ավելի իմաստուն լինի»: Աստված երբեք չի հոգնի մեզ սովորեցնել, եթե մենք սիրահոժար բացենք մեր սրտերն ու մտ-

**Աղոթք** - Հայր, երբ կարդում եմ Քո խոսքը, խնդրում եմ՝ շարունակիր բանալ միտքս ու սիրտս, որպեսզի աճեմ գիտելիքներով ու իմաստունությամբ: Ամեն:

**Ասվածաճուռնը լի է հոգևոր գիտելիքներով: Կարևորը այն կարդալն ու յուրացնելն է:**

Ես պետք է նրա՝ գործերը կատարեմ, ով ինձ ուղարկեց, քանի դեռ ցերեկ է: (Հովհ. 9.4)

## **ՏՈՒՐ, ՔԱՆԻ ԴԵՌ ԱՊՐՈՒՄ ԵՍ**

Նախորդ գործարարը իր կյանքի վերջին մի քանի տասնամյակ-ներին հնարավոր ամեն ինչ անում էր իր կարողությունից ուրիշներին բաժին հանելու համար: Քանի որ նա միլիարդատեր էր, կանխիկ գումարներ ներդրեց այնպիսի նպատակների համար, ինչպիսիք են Հյուսիսային Իռլանդիայում խաղաղության հաստատումը, Վիետնամի առողջապահական համակարգի արդիականացումը, իսկ մահից ոչ շատ առաջ էլ 350 միլիոն դոլար հատկացրեց Նյու Յորքի Ռուզվելտ կղզին տեխնոլոգիական կենտրոն դարձնելու համար: Նա ասում էր. «Ես ճիշտ եմ համարում կենդանություն օրոք տալը, քան մահից հետո նվիրելը: Եվ որևէ պատճառ չունեմ դա հետաձգելու: Տվե՛ք, քանի դեռ ապրում եք: Դա հիանալի բան է»:

Ի ծնե կույր մարդու մասին Հովհաննեսի պատմության մեջ Հիսուսի աշակերտները փորձում էին պարզել, թե «ո՞վ է մեղանչել» (9.2), որ նա այդպիսին է ծնվել. ծնողները, թե ինքը: Հիսուսը, անդրադառնալով նրանց հարցին, ասաց. «Ո՛չ դա է մեղանչել, ո՛չ էլ իր ծնողները, այլ որ դրա միջոցով Աստուծո գործերը հայտնի լինեն: Ես պետք է նրա՝ գործերը կատարեմ, ով ինձ ուղարկեց, քանի դեռ ցերեկ է» (Հմ.3-4): Թեև մեր գործերը շատ տարբեր են Հիսուսի կատարած հրաշքներից, և մեր տվածը խիստ տարբեր կարող է լինել, այնուամենայնիվ, մենք դա պետք է անենք պատրաստակամ ու սիրահոգ: Մեր կարողություններով, ժամանակով, թե գործերով կատարված բարերարություններով ցույց տալ Աստծո գործերը. սա պիտի լինի մեր նպատակը: Որովհետև Աստված այնքան սիրեց աշխարհը, որ տվեց ամենաթանկը: Դրա փոխարեն եկեք մենք էլ տանք, քանի դեռ ողջ ենք:

**Աղոթք** - Պարզևներ տվող Աստված, խնդրում եմ ցույց տուր ինձ, թե որտեղ կարող եմ այսօր տալ: Ամեն:

**Քեզ ի՞նչն է խանգարում տալ: Հի՛տի՛ր՝ ավելի լավ է տալ, քանի դեռ ողջ եմ: Այդդեպ Աստուծո ավելի հաճելի կլինի:**

Տեր Աստված կանչեց Ադամին ու ասաց նրան. «Ո՞ւր ես»: (ԾՆ. 3.9)

## **ԹԱՔՆՎԵԼ ԱՍԾՈՒՑ**

**Փ**ակեցի աչքերս ու սկսեցի բարձրաձայն հաչվել: Դասընկերներս սենյակից դուրս վազեցին՝ թաքնվելու: Երկար ժամանակ ամեն տեղ փնտրելուց հետո էլ չէի կարողանում գտնել նրանց: Ծիծաղելի վիճակում հայտնվեցի, երբ վերջապես նրանցից մեկը դուրս թռավ թաքստոցից: Նա պահվել էր առաստաղից կախված թաղարի մեջ դրված վայրի ձարխոտի հետևում: Բույսը հազիվ նրա գլուխն էր ծածկել, իսկ ամբողջ մարմինը այդ ընթացքում փաստորեն տեսանելի էր:

Երբ Ադամն ու Եվան «Տեր Աստծուց թաքնվեցին դրախտի ծառերի մեջ» (ԾՆ. 3.8), Աստված տեսավ նրանց, որովհետև նա ամենազեռ է ու ամենատես: Բայց նրանք մանկական խաղ չէին խաղում, այլ հանկարծ գիտակցել ու ամաչել էին իրենց գործած անօրինությունից. կերել էին այն պտուղը, որն Աստված արգելել էր:

Ադամն ու Եվան Աստծուց ու Նրա սիրո նախատեսությունից հեռացան, որովհետև չհնազանդվեցին Նրա պատվիրանին: Բայց Աստված, փոխանակ զայրացած հեռանալու նրանցից, փնտրեց՝ հարցնելով. «Ո՞ւր ես» (Հմ.9): Այնպես չէ, որ Աստված չգիտեր նրանց տեղը: Նա ուղղակի ուզում էր ցույց տալ Իր կարեկցությունն ու հոգատարությունը:

Ես չէի տեսնում իմ թաքնված ընկերոջը, բայց Աստված միշտ տեսնում ու ճանաչում է մեզ: Ճիշտ այնպես, ինչպես Նա հետապնդեց Ադամին ու Եվային, այդպես էլ Հիսուսն էր մեզ հետապնդում, «երբ դեռ մեղավոր էինք»: Մեռնելով խաչի վրա՝ Նա ցույց տվեց Իր սերը մեր հանդեպ (Հռոմ. 5.8): Մենք այլևս թաքնվելու կարիք չունենք:

**Աղոթք** - Հայր Աստված, շնորհակալ եմ, որ ցույց տվիր Քո սերն ու հոգատարությունը իմ հանդեպ՝ հակառակ իմ գործած սխալների ու մեղքերի: Ամեն:

**Մեր գործած մեղքերի համար փորձում ենք թափնվել Աստծուց, սակայն Նա Իր սիրով մոտենում է մեզ փրկելու:**

Աստված նրան Տեր ու Օծյալ արեց, այս Հիսուսին, որին դուք խաչ հանեցիք: (Գործք. 2.36)

## **ՍԱ ՇՆՈՐՀՔ Է**

**Վ**. Հյուսիսի «Թշվառները» վեպն սկսվում է դատապարտ-յալ ժան Վալթանի՝ քահանայից արծաթ գողանալով: Նա բռնվում է, բայց շատ էր ուզում վերադառնալ հանքերը: Սակայն բոլորը ցնցվում են, երբ քահանան հայտարարում է, որ ինքն է այդ արծաթը տվել ժան Վալթանին: Ոստիկանների հեռանալուց հետո նա ասում է գողին. «Դու այլևս չարիքը չես, այլ բարունն ես»:

Նման շռայլ սեր է նկարագրված նաև հետևյալ պատմություն մեջ: Հոգեգալստյան օրը Պետրոսն իր ունկնդիրներին ասաց, որ երկու ամիս էլ չի անցել այն օրվանից, երբ հենց այդ նույն քաղաքում նրանք խաչեցին Հիսուսին: Բազմությունը զղջաց ու հարցրեց՝ ի՞նչ անել: «Ապաշխարեցե՛ք և ձեզանից ամեն մեկը թող Հիսուս Քրիստոսի անունով մկրտվի՝ մեղքերի թողության համար» (Գործք 2.38),-պատասխանեց Պետրոսը: Հիսուսը կրեց նրանց արժանի պատիժը: Այժմ նրանց պատիժը կներվի, եթե հավատան իրեն:

Սա հեղնանքի է նման: Ժողովուրդը կարող է ներվել միայն Քրիստոսի մահվան գնով, մահ, որի համար իրենք էին պատասխանատու: Որքա՛ն շնորհալի ու գորեղ է Աստված: Մեզ փրկելու համար Նա գործածեց մարդկության մեծագույն մեղքը: Եթե Աստված կատարել է դա, ուրեմն կարելի է ենթադրել, որ չկա մի բան, որ Նա չկարողանա բարիքի վերածել: Վատահի՛ր նրան, որ «բոլոր բաները գործակից են լինում նրանց բարիքի համար, ովքեր կանչված են նրա սահմանումով» (Հռոմ. 8. 28):

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ Քո շռայլ սիրո համար, որը փրկեց ինձ: Խնդրում եմ վերացրու՛ բոլոր վախերս և օգնի՛ր ինձ, որ վստահեմ Քեզ: Ամեն:

**Ի՞նչն է խանգարում, որ դեռ չես հանձնվել Հիսուսին: Նա փարատում է մեր վախերն ու կասկածները և փրկում մեզ:**



Ու մի աման, որը նա պատրաստում էր կավից, ընկավ նրա ձեռքից, բայց նա դարձյալ այն վերածեց մի ուրիշ ամանի, ինչպես որ իր աչքին հաճելի թվաց անել: (Եր.18.4)

## **ԲՐՈՒՏԻ ԱՆԻՎԸ**

**1** 952-ին, որպեսզի անշնորհք կամ անփուլթ մարդիկ չփչացնեն խանութի ապրանքները, Մայամիի ծովափի խանութներինց մեկի տերը այսպիսի ցուցանակ փակցրեց.«Եթե ջարդեցիր, կգնես»: Այսպիսի զգուշացում-գրառումներ այժմ շատ վաճառակետերում կարելի է տեսնել:

Բրուտի խանութում էլ թերևս կարելի է տեղադրել այսպիսի գրառմամբ ցուցանակ.«Եթե փշրեք, մենք այդ փշրվածն ավելի լավ բանի կվերածենք»: Եվ դա շատ նման կլինի Երեմիա 18-ում նկարագրվածին:

Երեմիան բրուտի խանութում տեսնում է, թե ինչպես է նա ձեռքից ընկած ու «փչացած» կավը ձևավորում ու վերածում մեկ այլ ամանի «ինչպես որ իր աչքին հաճելի թվաց անել» (Հմ.4): Մարգարեն մեզ հիշեցնում է, որ Աստված իսկական Հմուտ բրուտն է, իսկ մենք՝ կավը: Նա գերիշխան է և կարող է օգտագործել իր իսկ ստեղծածը՝ թե՛ չարը վերացնելու, և թե՛ մեր մեջ գեղեցկություն ստեղծելու համար:

Աստված կարող է մեզ ձևավորել նույնիսկ երբ մենք փշրված, ավերված ու կոտրված ենք: Նա՝ վարպետ բրուտը, մեր փշրված կտորներից կարող է և ուզում է ստեղծել նոր ու թանկարժեք անոթ: Նա մեր կոտրված կյանքերին, սխալներին ու անցյալի մեղքերին չի նայում որպես անօգտագործելի նյութեր: Այլ վերցնում է մեր կտորները և վերափոխում դրանք լավագույն ձևով:

Վարպետ բրուտի՝ Աստծո ձեռքերի մեջ մեր կյանքի կոտրված մասերը կարող են դառնալ գեղեցիկ անոթներ, որոնք կարող են օգտագործվել Նրա կողմից (Հմ.4):

**Աղոթք** - Աստված, Դու բրուտն ես, ես՝ կավը: Ձուլի՛ր ինձ, ինչպես ցանկանում ես և հիշեցրու՛ ինձ, որ ես Քո հոգատար ու հմուտ ձեռքերում եմ: Ամեն:

**Որքա՞ն մխիթարական է իմանալ, որ Աստված բրուտն է, որը կարող է կոտրված մասերից մի նոր բան ստեղծել ու մեզ վերափոխել:**

Մենք ճանաչեցինք սերն ու հավատացինք այն սիրուն, որ Աստված ունի մեր նկատմամբ: (Ա.Յովհ. 4.16)

## ՍԻՐՈՂ ԱՍՏՎԱԾ

**Ո**ւսուցիչը սովորաբար առցանց դասն ավարտում էր երկու ձևով՝ ասում էր.«Կհանդիպենք հաջորդ անգամ» կամ «Հավ հանգստյան օր ձեզ»։ Ուսանողներն էլ պատասխանում էին.«Շնորհակալ ենք, Ձեզ նույնպես»։ Բայց մի օր նրանցից մեկն ասաց.«Ես սիրում եմ քեզ», ինչին ի պատասխան՝ նա դարձացավ ու ասաց. «Ես էլ քեզ եմ սիրում»։ Այդ երեկո դասընկերները պայմանավորվեցին հաջորդ դասին, որպես գնահատանք իրենց ուսուցչին, որն ստիպված էր դասավանդել ոչ թե իր սիրած առերես եղանակով, այլ համակարգչի էկրանից, կազմակերպել «Ես քեզ սիրում եմ» թեմայով մի շղթա։ Եվ մի քանի օր անց, երբ հերթական անգամ ուսուցիչն ասաց.«Հաջորդ անգամ կտեսնվենք», ուսանողները մեկ առ մեկ հայտնեցին իրենց սիրո մասին։ Այդ սովորությունը շարունակվեց ամիսներ, և ուսուցչի բնորոշմամբ՝ ուսանողների միջև ստեղծված կապն այնքան ուժեղ էր, որ նրանք մեկ ընտանիքի նման էին դարձել։

Մենք՝ որպես Աստծո ընտանիքի մաս, Հովհաննեսի առաջին նամակի 4.10-21-ում զանազան պատճառներ ենք գտնում ասելու՝ ես քեզ սիրում եմ։ Նա իր Որդուն ուղարկեց մեր մեղքերի քավության համար (Հմ.10), մեզ տվեց իր Հոգին, որ մեր մեջ բնակվի (Հմ. 13, 15)։ Նրա սերը միշտ վստահելի է (Հմ.16) և երբեք կարիք չունենք դատաստանից վախենալու (Հմ.17)։ Նա մեզ հնարավորություն է տալիս սիրելու իրեն և ուրիշներին, «որովհետև առաջ Նա՛ սիրեց մեզ» (Հմ.19)։ Հաջորդ անգամ Աստծո ժողովրդի հետ հանդիպելիս ուրիշներին պատմի՛ր Նրան սիրելու պատճառների մասին։ Աստծո համար այդ սիրո շղթան կփառավորի Նրան և քեզ ավելի կմոտեցնի իրեն։

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ Քեզ իմանալու և Քո ընտանիքի մի մասը լինելու համար։ Յու՛յց տուր այդ սերը ստեղծագործորեն արտահայտելու ձևերը։ Ամեն։

**Եթե սիրում եմք Ասծուն, դե՛ս է ցույց տալ այդ սերը ուրիշներին։**

Ես հասկացա, որ մարդկանց համար չկա ուրիշ լավ բան, քան ուրախ լինել և բարիք գործել իրենց կյանքում: (Ժող. 3.12)

## **ԻՍԿԱԿԱՆ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ**

**Տ**ասներորդ դարում Աբդ ալ Ռահմանը իսպանական Կորդոբա քաղաքի տիրակալն էր: Հիսուն տարվա հաջող գահակալությունից հետո «հպատակներից սիրված, դաշնակիցներից հարգված և թշնամիների ահ ու սարսափ ալ Ռահմանը հայացք գցեց իր անցած կյանքի վրա: «Հարստությունն ու պատիվները, ուժն ու հաճույքը սպասում էին իմ կոչին», - արձանագրեց նա: Բայց երբ ուզեց հաշվել, թե քանի օր է իսկական երջանկություն ունեցել, պարզվեց՝ 14: Իսկապես հիասթափեցնող է:

Ժողովողի գրքի հեղինակը նույնպես հարստության ու պատվի (Ժող. 2. 7-9), ուժի ու հաճույքի տեր մարդ էր (1.12, 2. 1-3), իսկ սեփական կյանքի նրա գնահատումը՝ դարձյալ հիասթափեցնող: Նա հասկացավ, որ հարստությունները ավելին ունենալու ցանկություն են առաջացրել (5.10-11), հաճույքները քիչ արդյունք են տվել (2. 1-2), իսկ հաջողությունը ավելի շատ պատահականության արդյունք է եղել, քան՝ կարողության (9.11): Բայց նրա գնահատականը այդպիսով չի վերջանում, ինչպես ալ Ռահմանինը: Հավատալով, որ Աստված է իր երջանկության վերջին աղբյուրը, նա տեսավ, որ ուտելը, աշխատելը և բարիք գործելը հաճելի կլինեն, եթե Նրա հետ կատարվեն, քանի որ «ով ուտում, խմում և իր աշխատանքի բարիքն է վայելում, Աստծու պարգևն է դա» (3. 13):

Ալ Ռահմանը եզրակացրել էր. «Ո՛վ մարդ, մի՛ վստահիր այս աշխարհին»: Ժողովողի հեղինակը ևս համակարծիք է, քանի որ մարդ ստեղծված է հավերժության համար (3.11), հաճույքներն ու նվաճումները նրան չեն գոհացնում: Իսկ Աստծո հետ հնարավոր է գտնել իսկական երջանկություն բոլոր բնագավառներում:

**Աղոթք** - Երկնավոր Հայր, այսօր, երբ Դու իմ կողքին ես, ես ամեն ինչ անում եմ Քեզ հետ: Ամեն:

**Ինչի՞ մեջ ենք փնտրում մեր երջանկությունը: Եկե՛ք այսօր ուսենք, աշխատենք և բարիք գործենք Ասծո հետ:**

Վրեժխնդիր մի՛ լինիր և քո ժողովրդի դեմ ոյս մի՛ ունեցիր: Պիտի սիրես քո ընկերոջը՝ ինչպես ինքդ քեզ, քանզի ես եմ Տերը: (Ղև. 19.18)

## **ՆԱԽԱՆՁ ՈՒ ՈՒՆ ՉՊԱՅԵԼ**

**2**011-ին գովազդային մի միջոցառման ժամանակ բռնցքամարտի բռնվեցին Կանադայի ֆուտբոլի լիգայի 73-ամյա նախկին երկու խաղացողներ, որոնց թշնամանքն ու ատելութունը գալիս էր դեռևս հեռավոր 1963 թվականից: Երբ նրանցից մեկը մյուսին բեմից դուրս նետեց, բազմությունը գոչում էր, որ այլևս չչարունակեն, մոռանան նախանձն ու ատելութունը:

Աստվածաշնչում բազմաթիվ օրինակներ կան մարդկային ատելության վերաբերյալ: Կայենք նախանձում ու ատում էր իր եղբորը՝ Աբելին, որովհետև Աստված ընդունել էր նրա գոհաբերությունը, (Ծնն. 4. 5): Դա այնքան ուժեղ զգացում էր, որ իր վերջի հանգեցրեց ոճրագործության, «Կայենք հարձակվեց իր եղբայր Աբելի վրա և սպանեց նրան» (Հմ.8): Հետոն ատում էր Հակոբին, որովհետև վերջինը գողացել էր իրեն պատկանող անդրանիկության օրհնությունը (27. 41): Այդ ատելությունն այնքան ուժեղ էր, որ Հակոբը, վախենալով իր կյանքի համար, ստիպված եղավ փախչել: Աստվածաշնչում ոչ միայն նախանձով ու ատելությամբ լի մարդկանց օրինակներ է ցույց տալիս, այլև սովորեցնում է, թե ինչպես մարել ատելության այդ կրակը, ներել ու հաշտվել: Աստված մեզ կոչում է սիրել ուրիշներին (Ղև. 19.18), ներել ու աղոթել նրանց համար, ովքեր նախատում ու վիրավորում են մեզ (Մատթ. 5. 43-47), խաղաղ ապրել մարդկանց հետ՝ վրեժխնդրությունը թողնելով Աստծո վրա ու չարին հաղթել բարությունամբ (Հռոմ. 12. 18-21): Աստծո զորությունամբ թող որ մոռանանք նախանձն ու ատելությունը:

**Աղոթք** - Տե՛ր Իիսուս, շնորհակալ եմ, որ կարող եմ ներել ուրիշներին, որովհետև Դու ներել ես ինձ: Ամեն:

**Մոռանա՛նք ատելությունն ու նախանձը և վերականգնենք խզված ու խաթարված հարաբերություններն այս օրվա:**

Օրհնյալ լինի այն մարդը, որ հույսը Տիրոջ վրա կդնի, որ Տերը նրա հույսը կդառնա: (Եր. 17. 7)

## **ՎՍՏԱՅԵԼ ԱՍԾՈՒՆ**

**Ե**րեխայի ծնվելուն դեռ վեց շաբաթ կար, բայց բժիշկը Ուրիթ-նիի մոտ լյարդի հիվանդություն էր հայտնաբերել, և նրան տեղափոխեցին հիվանդանոց: Նա ստացավ իրեն անհրաժեշտ բուժումը, և բժիշկներն ասացին, որ առաջիկա 24 ժամում երեխան պետք է ծնվի: Բայց քանի որ հիվանդանոցում օդափոխիչներ էին տեղադրում թագավարակից պաշտպանվելու համար, Ուրիթնիին տուն ուղարկեցին: Նա որոշեց հույսը դնել Աստծու և Նրա ծրագրի վրա, ու մի քանի օր անց առողջ բալիկ ունեցավ: Երբ Սուրբ Գիրքը արմատավորվում է մեր մեջ, այն փոխակերպում է մեր վարվելակերպը փորձություն պահերին: Երեմիան ապրում էր այնպիսի ժամանակաշրջանում, երբ գերակշռում էր կուռքերի պաշտամունքը և հասարակությունը բաժանված էր տարբեր խմբերի: Մարգարեն «մարմնին ու բազկին ապավինողներին, որոնց սիրտը կապտամբի Տիրոջ դեմ» (Եր. 17.5), հակադրում է նրանց, ովքեր վստահում են Տիրոջը. «Օրհնյալ լինի այն մարդը, որ հույսը Տիրոջ վրա կդնի: Նա կլինի ինչպես հոսող ջրերի մոտ աճած ծառ և իր արմատները կձգվի դեպի ջրերի հոսանքը. երբ տոթը հասնի, չի վախենա. նրա սաղարթն անտառի պես կտարածվի իր շուրջը. երաշտ տարուց չի վախենա և չի դադարի պտուղ տալուց» (Հմ. 7-8): Որպես հավատացյալներ՝ մենք կոչված ենք հավատքով ապրել, երբ դիմում ենք իրեն մեր հարցերին լուծում գտնելու համար: Երբ Նա մեզ ուժ է տալիս, մենք կարողանում ենք ընտրություն կատարել վախի ու վստահության մեջ: Աստված ասում է, որ իր վրա հույս դնելով՝ մենք լիովին բավարարված ու օրհնված կլինենք:

**Աղոթք** -Յայր, շնորհակալ եմ, որ բոլոր իրավիճակներում կարող եմ վստահել Քեզ ու գալ Քեզ մոտ: Դու իմ պայքարների մեջ ես և ուժ ես տալիս ինձ: Ամեն:

**Մեր կյանքում վախերի ու մտահոգությունների դակաս չկա, կարևորը այդ բոլոր իրավիճակներում Ասծուն վստահելն է:**

Դուք կատարյալ եղեք, ինչպես որ կատարյալ է ձեր Դայրը, որ երկնքում է: (Մատթ. 5.48)

### **ՔՐԻՍՏՈՍԻ ՆՄԱՆ ԿԱՏԱՐՅԱԼ**

**Կ**ատարելությունն հասկացությունն ժամանակակից ըմբռնումը համեմատելով Մատթեոսի ժամանակների կատարելության հետ՝ Կաթիլին Նորիսն այն համարում է հոգեբանական լուրջ տառապանք, որը մարդուն դարձնում է չափազանց երկչոտ անհրաժեշտ վտանգները նկատի առնելիս: Իսկ Մատթեոսի մոտ «կատարյալ» բառը նշանակում է հասուն, ամբողջական, լրիվ: Նորիսը եզրակացնում է. «Կատարյալ լինելու համար պետք է աճել, բավարար չափով հասունանալ, որպեսզի կարողանանք մեր անձը ուրիշներին տրամադրել»:

Կատարելության այսպիսի ըմբռնումը կօգնի հասկանալ Մատթեոս 19-ի պատմության իմաստը. մի մարդ Հիսուսին հարցրեց. «Ի՞նչ բարի գործ անեմ, որ հավիտենական կյանքն ունենամ» (Հմ.16): Հիսուսը պատասխանեց. «Պատվիրանները պահիր» (Հմ.17): Ասելով, որ մանկուց ինքը պահել է Հիսուսի նշած պատվիրանները, մարդը հարցրեց. «Էլ ի՞նչ է ինձ պակասում» (Հմ.20): «Եթե ուզում ես կատարյալ լինել, գնա՛, ունեցածներդ վաճառի՛ր ու աղքատների՛ն տուր և գանձ կունենաս երկնքում, և եկ ի՛նձ հետևիր» (Հմ. 21),-եղավ պատասխանը:

Լսենք Հիսուսի մեղմ հրավերը Իրեն հանձնվելու մասին և փրկություն գտնենք այն ամբողջության մեջ, որը միայն Իր հետ է հնարավոր (Հմ. 26):

**Աղոթք** - Սիրո՛ղ Աստված, ների՛ր, որ հաճախ սխալվում ու ինքս ինձ կատարելագործելու հավակնություն եմ ունենում: Օգնի՛ր, որ դրա վերահսկողությունը հանձնեմ Քեզ և ընդունեմ ազատ կյանքը՝ Քեզ ու մարդկանց հետ: Ամեն:

**Մեր անձնական նղասակներ ունենալը չփոթենք Աստվածաճշի նշած կատարելության հետ:**

Տե՛ր, մի՛նչև ե՞րբ: (Սաղմ. 6.3)

## ԱՆՊԱՏԱՍԽԱՆ ԱՂՈԹՔՆԵՐ

**Ե**րբ մեր երեխաները դեռ փոքր էին, Կոլորադոյից մինչև Արկանզաս՝ մեր տուն, 12 ժամ տևող ճանապարհի առաջին խկ ժամից սկսում էին հարցնել՝ հասա՞նք: «Դեռ ոչ, բայց շուտով»,- լինում էր իմ պատասխանը: Դա կարծես մի զվարճալի խաղ լիներ, որ շարունակվում էր մինչև մեր տեղ հասնելը:

Թեև բարձրաձայն չենք խոստովանում, բայց մեծահասակներս էլ ճշմարտությունը լսելու համար ընտրում ենք այդ հարցի մեկ այլ տարբերակը՝ մինչև ե՞րբ: Մենք էլ խնդրում ենք նույն պատճառով. հոգնած ենք լինում. «սրտնեղությունից այլայլեց աչքն իմ, ես հյուսիսեցի բոլոր թշնամիներիս ձեռքից» (Սաղմ.6.7): «Ես հոգնեցի իմ հառաչանքներից» (Հմ.6.7),- ասում է սաղմոսագրուհի: Մենք էլ ենք հառաչում տարբեր առիթներով՝ օրվա լուրերի, աշխատանքային ամենօրյա դժվարությունների, անվերջանալի առողջական խնդիրների և այլն: Այդ թվարկումն ասես անվերջանալի լինի, և մենք գոչում ենք.«Հասա՞նք տեղ: Մինչև ե՞րբ, Տե՛ր, մի՛նչև ե՞րբ»:

Սաղմոսագրուհի լավ գիտեր հոգնածություն այդ տեսակը և անկեղծորեն տվեց այդ հարցը Աստծուն: Հոգատար ծնողի նման նա լսեց Դավթի աղաղակը և Իր մեծ ողորմությունք ընդունեց զբանք (Հմ.9): Հարցնելը ամոթ չէ: Ես և դու էլ մեր անկեղծ հարցերով կարող ենք մոտենալ երկնքում գտնվող մեր Հորը: Եվ Նրա պատասխանը կլինի. «Դեռ ոչ, բայց շուտով: Ես բարի եմ, վստահի՛ր ինձ»:

**Աղոթք** - Ո՛վ Հայր, այս աշխարհի դժվարությունները մի՛նչև ե՞րբ եմ շարունակվելու: Խնդրում եմ ինձ ուժ տուր, որ կյանքիս ճանապարհին վստահեմ Քեզ: Ամեն:

**Թափառումներից հոգնած հարցնում եմ՝ մինչև ե՞րբ: Վստահեմ Աստուն և Նրա սված հոգասարությանը:**

Հետևից նրա ոտքերի մոտ կանգնած լաց էր լինում, և սկսեց արտասուքով նրա ոտքերը թրջել. ու իր գլխի մագերով սրբում էր, նրա ոտքերն էր համբուրում, յուզով օծում: (Դուկ. 7.38)

## **ՆԵՐՈՂՈՒԹՅԱՆ ԱՐՑՈՒՆՔՆԵՐ**

**Ա** մուսնու մահից հետո Կարենը ամեն ջանք գործադրում էր իր ղեռահաս երեխաների կարիքները հոգալու համար: Եկեղեցու անդամները մի օր ճամբարային շրջագայություն կազմակերպեցին նրանց համար: Երախտագիտությունից Կարենը արտասովեց՝ ներողություն խնդրելով իր արցունքների համար:

Ինչու՞ ենք ներողություն խնդրում արցունքների համար: Փարիսեցի Սիմոնը Հիսուսին իր տուն էր հրավիրել՝ ընթրիքի: Ճաշի ժամանակ մի մեղավոր կին եկավ ու իր հետ մի շիշ անուշահոտ յուղ բերեց: «Հետևից նրա ոտքերի մոտ կանգնած լաց էր լինում, և սկսեց արտասուքով նրա ոտքերը թրջել. ու իր գլխի մագերով սրբում էր, նրա ոտքերն էր համբուրում, յուզով օծում» (Դուկ. 7.38): Առանց ներողություն խնդրելու՝ այս կինն ազատորեն արտահայտեց իր սերը: Երախտագիտությամբ ու Հիսուսի հանդեպ իր սիրով ու արտասովալից համբույրներով նա հակադրվեց տանտիրոջ պատշաճ, բայց սառնասիրտ վերաբերմունքին:

Ի՞նչ պատասխան տվեց Հիսուսը այս կնոջ արարքին: Դուկ. 7.38-ում նրա սիրո արտասովոր ու անկեղծ արտահայտությունը, հակադրեց Սիմոնի գործողություններին և ասաց.«Քո մեղքերը ներված լինեն» (Հմ. 44-48):

Մենք էլ կարող ենք երախտագիտության արցունքներ թափել: Աստված մեզ իբրև զգացմունքային էակ է ստեղծել, և մենք կարող ենք օգտագործել մեր զգացմունքները իրեն պատվելու համար:

**Աղոթք** - Սիրո՞ղ Աստված, շնորհակալ եմ իմ կարիքների համար քո տված շնորհի համար: Այսօր երախտագիտության արցունքներ եմ թափում: Ամեն:

**Մեր հույզերի միջոցով ազատեն արտահայտեն մեր երախտագիտությունը Աստուն՝ Իր դարգևած սիրո ու ներումի համար:**



Ճշմարիտ եմ ասում ձեզ. քանի որ այս իմ եղբայրներից մեկին արեցիք, ինձ արեցիք: (Մատթ. 25.40)

## **ՍԵՐ՝ ՈՒՐ ԷԼ ՈՐ ԳՆԱՆՔ**

**Ք**արափին նստած Աստվածաշունչն էի կարգում, իսկ ամուսինս ձուկ էր որսում: Այդ պահին մեզ մոտեցավ մի երիտասարդ և առաջարկեց ուրիշ խայծ օգտագործել: Տեսնելով իմ ձեռքի գիրքը՝ նա ասաց, որ ինքը բանտում է եղել և հառաչելով հարցրեց. «Ի՞նչ եք կարծում, Աստված ինձ նման մարդկանց մասին կհոգա՞»:

Բացելով Մատթեոսի 25-ը՝ ես բարձրաձայն կարդացի այն հատվածը, որում Հիսուսը խոսում է իր այն հետևորդների մասին, որոնք այցելում են բանտարկյալներին: Նա հուզվեց, երբ լսեց, որ Աստված իր զավակների հանդեպ մարդկանց ցուցաբերած բարությունը դիտարկում է որպես իր հանդեպ սիրո արտահայտություն (Հմ. 31-40):

«Երանի՛ ծնողներս էլ ինձ ներեն»,-ասաց նա ու խոստանալով վերադառնալ՝ հեռացավ: Քիչ անց եկավ մաշված Աստվածաշունչը ձեռքին և խնդրեց, որ ես ցույց տամ իմ նշած հատվածները:

Ես ու ամուսինս գրկեցինք երիտասարդին, աղոթեցինք նրա ու իր ծնողների համար, փոխանակեցինք հեռախոսահամարներ հետագայում կապվելու համար: Ինչ-որ տեղ մենք էլ կարող ենք չսիրված, չընդունված, հետևաբար բանտարկված զգալ (Հմ.35-36): Այդ պահերին մեզ պետք են Աստծո սիրո, կարեկցություն ու ներման մասին հիշեցումները: Կամ կարող ենք ինքներս առիթ ունենալ օգնելու մարդկանց, ովքեր տանջվում են այդ նույն զգացումներով: Այսինքն՝ մենք որտեղ էլ լինենք, տարածելով Նրա ճշմարտությունն ու սերը, կարող ենք ընդգրկված լինել Աստծո փրկարար ծրագրում:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ, որ սիրում ու ներում ես ինձ և առիթներ տալիս քո ճշմարտության մասին հայտնել ուրիշներին: Այլոց սիրելով՝ ես Քեզ եմ սիրում: Ամեն:

**Ասված իր սերը հայտնում է ուրիշների միջոցով, ուսի մեմ էլ դարձավոր ենք իր սերը ցույց տալ ուրիշներին:**

Տիրոջն ասացի. «Իմ Տերն ես դու, ինձ արված բարիքները քեզնից են: (Մաղմ.15. 2)

## **ԽՈՆԱՐՅ ԿԵՑՎԱԾՔ**

«Ձեռքերդ հետևում պահիր ու լավ կլինի», -Ջենի ամուսինը միշտ այս խորհուրդն էր տալիս կնոջը, երբ վերջինը գնում էր խմբերի հետ զրուցելու: Երբ զգում էր, որ տպավորություն գործելու և իրավիճակը վերահսկելու կարիք կա, նա այդ կեցվածքն էր ընդունում և, իրոք, մտնում էր սովորողի և լսողի դերի մեջ: Այդպես էր վարվում մշտապես հիշելու համար, որ պետք է սիրել նրանց, ում հետ խոսում է և լինել խոնարհ ու մատչելի Սուրբ Հոգուն:

Խոնարհության մասին Ջենի ընկալումը արմատավորված է Դավիթ թագավորի այն դիտարկման մեջ, թե ամեն ինչ գալիս է Աստծուց: Դավիթն ասաց Աստծուն. «Իմ Տերն ես դու, ինձ արված բարիքները քեզնից են» (Սաղմ.15. 2): Նա սովորեց վստահել Աստծոն և փնտրել Նրա խորհուրդը. «Գիշերն անգամ երկամներս ինձ խրատում էին» (Հմ.7), գիտեր, որ Տերը մշտապես իր կողքին է.«Նա իմ աջ կողմում է, որպեսզի չսասանվեմ» (Հմ.8), կարիք չուներ իր ուժին վստահելու, որովհետև վստահում էր հզոր Աստծուն: Ամեն օր նայելով Աստծուն ու խնդրելով, որ օգնի մեզ հուսահատության պահերին, բառեր տա, երբ մեր լեզուն կապված լինի՝ մենք կտեսնենք, որ Նա գործում է մեր կյանքում: Ինչպես Ջենին է ասում.«մենք Աստծո հետ գործընկերներ ենք դառնում», և եթե լավ ենք անում մեր գործը, Աստված կօգնի մեզ ծաղկել:

Մենք կարող ենք ձեռքներս հետևում պահած, խոնարհ կեցվածքով ու սիրով նայել ուրիշներին՝ հիշելով, որ մեր ունեցածը գալիս է Աստծուց:

**Աղոթք** - Արարի՛չ Աստված, Դու ես ստեղծել աշխարհը և նրա մեջ ամեն բան: Բայց ինձ սիրում և ուզում ես օգտագործել Քրիստոսի համար: Օգնի՛ր, որ աջակցության ու զորության համար նայեմ Քեզ: Ամեն:

**Գիտակցելով, որ կախված եմ Աստուց՝ հեզ ու խոնարհ լինեմ:**

Ուրեմն եթե մեկը Քրիստոսի մեջ է՝ նոր ստեղծված է. հմերն անցան, ահա ամեն բան նոր եղավ: (Բ. Կորնթ. 5.17)

## ՄԻ ՆՈՐ ՍԿԻԶԲ

**Չ**ինական Նոր տարին կապված է լուսնային օրացույցի հետ: Այն սովորաբար նշվում է հունվարի վերջին կամ փետրվարի կեսերին. կազմակերպվում են ընտանեկան հանդիպումներ՝ բազմաթիվ ավանդույթներով, որոնք շատ կարևոր են: Նոր հագուստներ գնելն ու նվիրելը, տները լավ մաքրելն ու պարտքերը վճարելը նշանակում են, որ մենք անցյալը թողնում ենք հետևում և Նոր տարին սկսում մաքուր ու նոր էջից:

Այս ավանդույթները հիշեցնում են նաև մեր քրիստոնեական կյանքի մասին: Անկախ նրանից, թե ով ենք և ինչ ենք արել, մենք կարող ենք այդ ամենը թողնել անցյալում, մոռանալ ու հեռանալ մեղքից՝ իմանալով, որ ամբողջովին ներված ենք խաչի վրա Հիսուսի մահվան շնորհիվ: Մենք կարող ենք նորից սկսել՝ մեզ վստահելով Սուրբ Հոգուն, որպեսզի ամեն օր վերափոխի մեզ ու ավելի շատ նմանեցնի Հիսուսին:

Ահա թե ինչու է Պողոսը հավատացյալներին հիշեցնում. «Հներն անցան, ահա ամեն բան նոր եղավ» (Բ.Կորնթ. 5.17): Մենք նույնպես կարող ենք ասել նույնը այն պարզ, սակայն ազդեցիկ պատճառով, որ «Աստված էր Քրիստոսի մեջ, որ աշխարհն իր հետ հաշտեցրեց, և նրանց հանցանքներն իրենց ներեց և հաշտության խոսքը մեր մեջ դրեց» (Հմ.19):

Մեր շրջապատի մարդիկ կարող են չցանկանալ մոռանալ անցյալի սխալները, բայց կարող են քաջալերվել, որ Աստծո աչքին նրանց համար դատապարտություն չկա (Հռոմ.8.1): Ինչպես Պողոսն է ասում. «Եթե Աստված մեր կողմն է, ո՞վ է մեզ հակառակ» (Հմ.31): Եկե՛ք վայելենք Աստծո կողմից մեզ տրված այս նոր սկիզբը՝ Հիսուսի միջոցով:

**Աղոթք** - Տե՛ր, շնորհակալ եմ Քո փրկարար գործի համար, որ արեցիր խաչի վրա, որպեսզի ինձ հաշտեցնես Աստծո հետ ու նոր կյանք պարգևես Քո մեջ: Ամեն:

**Եթե համոզված ես, որ Հիսուսի մահով դու հաճաված ես Աստծո հետ, խրախուսի՛ր հավատքի նոր եկողներին, որ նոր կյանք սկսեն:**

Աստված ասաց. «Թող երկիրը իր տեսակի ու իր նմանության սերմը պարունակող դալար բույս և իր տեսակի ու իր նմանության սերմը պարունակող, իր տեսակի միզ տվող պտղաբեր ծառ աճեցնի երկրի վրա»: (ԹՄ.1.11)

### **ՀՐԱՇԱԼԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ**

**Ե**րբ Թիմն անցնում էր Ալյասկայի Արմատային սառցադաշտով, տարօրինակ բան տեսավ: Թեև նա հանգամանորեն ուսումնասիրել էր սառցադաշտերը, սակայն իր տեսած մամուռի փոքրիկ զնդաձև կույտերը նորություն էին: Երկար տարիներ Թիմն ու իր ընկերները հետևելով այդ փայլուն, կանաչ զնդակներին, պարզեցին, որ ի տարբերություն ծառերին աճող մամուռի՝ սառցադաշտի մամուռները ոչ միայն կպած չեն սառույցին, այլև որ ամենազարմանալին է, միասին շարժվում են, ինչպես նախիրը կամ հոտը: Սկզբում նրանք կասկածում էին, որ դրանք քամին կարող է բերած լինել, բայց հետազոտությունները այդ վարկածն էլ բացառեցին: Գիտնականները դեռ չեն հայտնաբերել մամուռի շարժման պատճառը: Իսկ այդպիսի խորհրդավոր երևույթներն ավելի են արժևորում Աստծո ստեղծագործությունը: Իր ստեղծագործության մեջ Աստված երկիրը հայտարարեց որպես «իր տեսակի ու իր նմանության սերմը պարունակող դալար բույս» (ՄՆ. 1.11): Նրա ծրագիրը ներառում է նաև սառցադաշտի մամուռը, չնայած շատերս հնարավոր է՝ չիմանայինք այդ մասին, եթե չայցեկեինք: 1950-ականներին հայտնաբերված այդ սառցամամուռներն իրենց կանաչ առեղծվածային գոյությունը ավելի գրավիչ են դարձնում այդ միջավայրը: Երբ Աստված նայեց իր ստեղծած բուսականությանը, գոհունակությամբ հայտարարեց. «Լավ է» (Հմ.12): Մենք շրջապատված ենք Աստծո ստեղծած բազմազան բուսատեսակներով, որոնք ցուցադրում են Նրա ստեղծագործական մեծ ուժը՝ հրավիրելով մեզ երկրպագելու Նրան: Եվ մենք կարող ենք ուրախանալ այդ ամենով, որովհետև դրանք բարի են:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ Քո հրաշալի ստեղծագործության ու դրա միջոցով Քո մասին իմանալու բարեբախտության համար: Ամեն:

**Ոււադիր գննելով Ասծո ձեռքի գործերը՝ կեսնենք, թե ինչ հոյակապ է Նրա անունը ամբողջ երկրի վրա:**

Եվ ոչ միայն այսքան, այլ նեղությունների մեջ էլ ենք պարօժնում գիտեցա-  
լով, որ նեղությունը համբերություն է առաջացնում, համբերությունը՝ փորձա-  
ռություն, փորձառությունը՝ հույս: (Քրիստոսի Գործեր 5.3-4)

## **ՈՉ ՄԵՐ ՀԱՆԳՍՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**

**Դ** ենք հեծանվով երթևեկում էր, և մի մեքենա խփեց նրան  
ու գցեց հանդիպակաց գոտի: Երբ նա հիվանդանոցում  
գիտակցությունը եկավ, վիճակը ծանր էր, իսկ ամենավատն այն  
էր, որ ողնաշարն էր վնասվել՝ դարձնելով նրան հաշմանդամ:  
Դենն աղոթեց ապաքինվելու համար, բայց՝ ապարդյուն: Այնու-  
ամենայնիվ, նա հավատում է, որ այս կյանքի նպատակը Քրիս-  
տոսի կերպարին նմանվելն է: Դժբախտաբար, մենք այդ մասին  
հիշում ենք միայն դժվարություն ու նեղության պահերին, երբ  
ստիպված աղոթքով ապավինում ենք Աստծուն:

Պողոս առաքյալը Աստծո հետ հաշտ լինելու երկու օգուտ է  
նշում՝ համբերել և ուրախանալ նեղությունների մեջ: «Նեղու-  
թյունը համբերություն է առաջացնում, համբերությունը՝ փոր-  
ձառություն, փորձառությունը՝ հույս (Հռոմ. 5.3-4): Սրանք  
Աստծո հանդեպ անսասան հավատի կոչեր են: Դրանք բխում  
են այն վստահությունից, թե Հայրը չի լքի մեզ, այլ կրակների  
միջով մեզ հետ կքայլի դեպի ապագա:

Աստված հանդիպում է մեզ մեր տառապանքների մեջ և օգ-  
նում, որ աճենք իրենով: Այդ տառապանքները չընդունենք  
որպես Նրա անբարեհաճ վերաբերմունքի արտահայտություն,  
այլ փնտրենք ձևեր, որոնք ինքն օգտագործում է մեր նկարա-  
գիրը կերտելու համար, երբ մենք զգում ենք, որ «Աստծու սե-  
րը սփռված է մեր սրտերի մեջ Սուրբ Հոգու միջոցով» (Հմ.5):

**Աղոթք** - Տե՛ր Գիտու, կյանքում հարատևելու համար թող որ  
հույս և ուրախություն գտնեմ Քո մեջ: Ամեն:

**Կյանքի նեղությունները հաղթահարելու համար դե՛ս է համբերել  
ու հավասով դիմագրավել բոլոր մարտահրավերները:**

Եթե մատես, աներկյուղ կլինես, եթե քնես, քունդ անուշ կլինի: (Առ. 3.24)

### **ՔԱՂՅՐ ՔՈՒՆ**

**Ը**նկերս՝ Յիսուսը, գիշերը արթուն պառկած մտածում է «Հիսուս, սիրում եմ Քեզ» երգի բառերի մասին և այն անվանում կեսգիշերային երգ, որովհետև օգնում է հիշել Աստծո խոստումները և այն բազմաթիվ պատճառները, թե ինչու է ինքը սիրում Նրան:

Քունը կյանքի անհրաժեշտ, բայց երբեմն էլ խուսափողական մասն է: Իսկ երբ չի հաջողվում քնել, երբեմն զգում ենք Սուրբ Հոգու ձայնը, որ մեզ հիշեցնում է մեր չխոստովանած մեղքերը: Սկսում ենք անհանգստանալ մեր աշխատանքի, հարաբերությունների, մեր տնտեսություն, առողջության կամ մեր զավակների համար: Շուտով մեր ուղեղն ավելի մեծ շրջանակ է ընդգրկում, մտածում ենք, թե քնել ենք, բայց նայելով ժամացույցին՝ հասկանում ենք, որ ընդամենը մի քանի րոպե է անցել:

Առակների 3.19-24-ում Սողոմոն թագավորն առաջարկում է, որ մենք կարող ենք ստանալ քնի օգուտները, եթե ընդունենք Աստծո իմաստնությունը, էությունն ու իմացությունը: Նա պնդում էր. «Որպեսզի ապրի քո հոգին... Եթե նստես, աներկյուղ կլինես, եթե քնես, քունդ անուշ կլինի» (Հմ.22, 24):

Հավանաբար, բոլորս էլ կարիք ունենք, որ կեսգիշերային այդպիսի մի երգ, մի աղոթք կամ սուրբգրային մի իմաստնություն մեղմորեն շնչա մեր ականջին, հանգստացնի մեր խառը մտքերը և տեղափոխի դրանք դեպի Աստծո կերպարը: Մեզ քաղցր քուն կարող է բերել մաքուր խիղճն ու Աստծո հավատարմությունը շնորհակալ սիրտը:

**Աղոթք** - Յայր, շնորհակալ եմ, որ սիրում ես ինձ: Օգնի՛ր, որ այս կյանքի հոգսերի փոխարեն կենտրոնանամ Քո հավատարմության վրա: Ամեն:

**Եթե գիտեր ինչու դժվարություն ունենաս, մածո՛ր մի երգի, աղոթքի կամ սուրբգրային հասկածի մասին, որը քեզ կդարձնի խաղաղություն:**



Աղոնիան վեր-վեր թռչելով ասաց. «Ես պետք է թագավորեմ»:  
(Գ. Թագ.1.5)

## **ՍՏԱՆԱԼ ԱՅՆ, ԻՆՉ ՈՒԶՈՒՄ ԵՆՔ**

**1** 800 թ. նախագահական ընտրապայքարում Ահարոն Բուրը անհամբեր սպասում էր Միացյալ Նահանգների Ներկայացուցիչների պալատի քվեարկության արդյունքներին: Թոմաս Ջեֆերսոնի հետ պայքարում նա տանուկ տվեց: Մեղադրելով Ալեքսանդր Համիլտոնին, որ հարկ եղած չափով չի սատարել իրեն, Բուրը մենամարտի հրավիրեց և սպանեց նրան: Այդ սպանությունից վրդովված հասարակությունը երես թեքեց Բուրից, և նա մահացավ օտարություն մեջ՝ հիվանդ ու մենակ:

Քաղաքական ուժերի խաղերը պատմության ողբերգական դրվագներից են: Երբ Դավիթ թագավորը մահամերձ էր, նրա որդին՝ Ադոնիան, կանչեց Դավթի հրամանատարին ու քահանայապետին, որ իրեն թագավոր նշանակեն (Գ. Թագ. 1. 5-8): Բայց Դավիթը Սողոմոնին էր ընտրել որպես թագավոր (Հմ.17): Նախանձարեցի օգնությամբ ինքնակոչ թագադրումը չեղարկվեց (Հմ. 11-53), և Սողոմոնը հռչակվեց թագավոր: Սակայն Ադոնիան չէր համակերպվում և երկրորդ անգամ դավադրություն կազմակերպեց դահլ զոդանալու համար, բայց Սողոմոնը նրան մահապատժի ենթարկեց (2.13-25):

Մարդկանց հատուկ է ցանկանալ այն, ինչ իրենցը չէ: Եվ անկախ նրանից, թե ինչքան զորություն, հեղինակություն կամ ունեցվածք ենք մենք խնդրում, երբեք մեր ունեցածով չենք բավարարվում: Հիսուսը «Իրեն խոնարհեցրեց, ու հնազանդեղավ մինչև մահ, այն էլ խաչի մահվան» (Փիլ. 2.8):

Միայն մեր եսասիրությամբ ու փառասիրությամբ առաջնորդվելը երբեք չի բերի մեր իսկական ու խորը ցանկությունների կատարում: Արդյունքը թողնենք Աստծո վրա:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, խնդրում եմ օգնի՛ր, որ կարողանամ կատարել այն դերը, որ տվել ես ինձ: Օգնի՛ր, որ ամեն բանում Քեզ կատահեմ: Ամեն:

**Մեր ցանկություններն ու նղասակները բացահայտում են մեր սիրսն ու էությունը:**

ճանաչեցինք Քրիստոսի սերը, որ նա իր անձը տվեց մեզ համար: (Ա.Յովհ. 3.16)

## **ՐԱԶՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶՈՅՈՂՈՒԹՅՈՒՆ**

**Ո**րդիս կարգում էր մի տղայի մասին, որը նպատակադրվել էր բարձրանալ Ալպեր: Երբ ամեն ինչ պատրաստ էր եղել լեռնագագաթ բարձրանալու համար, նրա ընկերներից մեկը հիվանդացել էր, և տղան որոշել էր մնալ ու ընկերոջն օգնել:

Դասարանում գրքի քննարկման ժամանակ ուսուցիչը հարցնում է, թե հերոսը արդյո՞ք ձախողել էր, որ չէր հասել իր նպատակին: Աշակերտներից մեկի կարծիքով այդպես էր, բայց մեկ ուրիշը համաձայն չէր, որովհետև նա մտածում էր, որ տղան իր նպատակից հրաժարվել էր մեկ ուրիշին օգնելու համար:

Երբ մի կողմ դնենք մեր ծրագրերը և հոգանք ուրիշների մասին, մեր վարմունքը կլինի այնպիսին, ինչպիսին Հիսուսինն էր: Նա զոհաբերեց ամեն ինչ՝ տուն, ապահովություն, եկամուտ և իրեն նվիրեց ճամփորդելուն ու Աստծո ճշմարտությունը մարդկանց հայտնելուն: Ի վերջո մեզ մեղքից փրկելու և Աստծո սերը ցույց տալու համար նա հրաժարվեց իր կյանքից (Ա.Հովհ. 3.16):

Երկրային հաջողությունը շատ տարբեր է Աստծո աչքին եղած հաջողությունից: Նա զնահատում է կարեկցանքը, որ մեզ մղում է օգնելու անապահովներին ու վիրավորներին (Հմ.17): Նա հաստատում է այն որոշումները, որոնք պաշտպանում են մարդկանց: Աստծո օգնությամբ մենք կարող ենք մեր արժեքները համապատասխանեցնել Նրա արժեքներին, մեր անձերը նվիրել Նրան և սիրել ուրիշներին, ինչը ամենակարևոր նվաճումն է:

**Աղոթք** - Սիրելի՛ Յայր, ուզում եմ հաջողակ լինել Քո աչքին: Սովորեցրու՛ ինձ ինչպես ուրիշներին սիրեմ այնպես, ինչպես Դու ես սիրում ինձ: Ամեն:

**Հաջողությունների հասնելու ցանկությունը երբեմն մեզ հեռու է դրահում ուրիշների կարիքները ճեսնելուց: Աժխատե՛մք իմանալ, թե ինչն է կարևորը Աստծո համար:**



Ի՞նչ բան է ձեր կյանքը. մի գոլորշի է, որ մի քիչ ժամանակ երևում է ու հետո աներևութանում: (Յակ. 4.15)

### **ՄԱՅԿԱՆԱՑՈՒ ԼԻՆԵՆՈՒ ԵՎ ԽՈՆԱՐՀՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

**Վ**աղ քրիստոնեական դպրագետներ Հիերոնիմոսն ու Տերտուղիանոսը պատմություններ են փոխանցել այն մասին, թե ինչպես Հին Հռոմում զորավարներից մեկը հերոսական հաղթանակներից հետո առավոտից երեկո կառքով շրջում էր երկրում: Բազմությունը երկրպագում էր նրան ու պատիվներ տալիս: Ավանդության համաձայն՝ հրամանատարի սպասավորներից մեկը ամբողջ օրը հետևում էր նրան ու ականջին շնչում. «Հիշի՛ր, որ դու մահկանացու ես»: Այդ ճշմարտությունը պետք էր, որպեսզի իր հպարտության պահերին անգամ նա չկորցներ խոնարհությունը:

Հակոբոսը գրել է մի ժողովրդի մասին, որ տարված էր գոռոզությունամբ ու ամբարտավանությունամբ: Դիմակայելով նրանց մեծամտությունը՝ Հակոբոսը գրում է.«Աստված ամբարտավաններին հակառակ է, բայց խոնարհներին շնորհ է տալիս» (Հակ. 4. 6): «Խոնարհվեցե՛ք Տիրոջ առաջ, և նա ձեզ կբարձրացնի» (Հմ.10): Իսկ ինչպե՞ս էին ընդունելու խոնարհության առաջարկը: Հռոմեացի զորավարների նման նրանք էլ պետք է անընդհատ հիշեին, որ իրենք մահկանացու են: Հակոբոսը պնդում է.«Դուք, որ վաղվա օրը չգիտեք: Ի՞նչ բան է ձեր կյանքը. մի գոլորշի է, որ մի քիչ ժամանակ երևում է ու հետո աներևութանում» (Հմ.14): Դյուրաբեկ ու թույլ լինելու գիտակցումը նրանց օգնեց, որ ապրեն «Տիրոջ ուժեղ կամքի» ներքո:

Երբ մոռանանք, որ մեր օրերը հաշված են, դա կարող է գոռոզության պատճառ դառնալ: Իսկ եթե մեր մահկանացու լինելով խոնարհվենք, յուրաքանչյուր պահ ու յուրաքանչյուր շնչառություն կընդունենք որպես շնորհ:

**Աղոթք** - Յայր, սիրում եմ մտածել, որ ինքս կարող եմ տնօրինել իմ կյանքը: Երբեմն այնպես եմ վարվում, ասես հավերժ եմ ապրելու: Խոնարհեցրո՛ւ ինձ և օգնի՛ր կյանքը միայն Քո մեջ գտնել: Ամեն:

**Չողարձանանք մեր ունեցվածքով ու դիրքով: Հռոմեացի զորավարների նման հիշենք, որ մենք էլ ենք մահկանացու:**

Նա ձյուն է տեղացնում ինչպես բուրդ: (Մաղմ. 147.6)

## **ՆՐԱ ՀԻԱՆԱԼԻ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ**

**Կ**առավարիչը զարմացավ, երբ 2020-ի աշնանը Կոլորադոյի լեռներում բռնկված սարսափելի հրդեհի առիթով հարյուր հազարավոր կամ գուցե միլիոնավոր մարդիկ աղոթք բարձրացրին: 12 ժամում հրո ճարակ դարձավ 400 հազար քմ տարածք՝ չոր անտառներ, 300 տուն: Հետո եկավ «Աստծո պարգևը», ինչպես ասել էր օգերևութաբաններից մեկը: Բայց ոչ թե անձրև, այլ՝ ձյուն: Տարվա այդ եղանակին ոչ բնորոշ թաց ձյունը եկավ ու ծածկեց ամբողջ հրդեհի գոտին՝ որոշ տեղերում հանգցնելով կրակը, որոշ տեղերում՝ մեղմացնելով:

Երևույթը չափազանց զարմանալի էր ու դժվար բացատրելի: Արդյո՞ք Աստված լսում է մեր աղոթքները ձյունի ու անձրևի համար: Աստվածաշունչը Նրա տված բազմաթիվ պատասխաններ է արձանագրում, ներառյալ՝ Եղիայի հույսը անձրև գալու մասին (Գ. Թագ. 18. 41-46): Մեծ հավատքի տեր Եղիան հասկացել էր Աստծո գերիշխանությունը նաև օրվա եղանակի հարցերում: Ինչպես 147-րդ սաղմոսն է ասում Աստծո մասին. «Երկրի համար պատրաստեց անձրևն իր» (Հմ.8), «Նա ձյուն է տեղացնում ինչպես բուրդ... ո՞վ կարող է դիմանալ նրա ցրտին» (Հմ. 16-17):

Եղիան կարողանում էր «ուժեղ անձրևի ձայնը» լսել ամպերը ձևավորելուց շատ առաջ (Գ. Թագ. 18.41) : Արդյո՞ք այդքան ուժեղ է մեր հավատը Նրա գործության հանդեպ: Աստված մեզ հրավիրում է վստահել Իրեն՝ անկախ Իր տված պատասխանից: Մենք կարող ենք դիմել Իրեն՝ Իր հիանալի օգնության համար:

**Աղոթք** - Հիանալի՛ Աստված, խոնարհվում եմ ոտքերիդ առաջ Քո ողորմած օգնության համար, երբ որ այն գա: Շնորհակալ եմ, որ խրախուսում ես մեզ Քո գերիշխան գորությանը: Ամեն:

**Ծանր ու դժվարին վիճակներն անդակաս են մեր կյանքում, սակայն Աստված Իր սկած օգնությամբ խրախուսում է մեզ:**

Դա է իմ սիրելի որդին, որին ես հավանեցի: (Մատթ. 3.17)

## **ՀՈՐ ԶԱՅՆԸ**

**Վ**երջերս ընկերոջս հոր առողջական վիճակը կտրուկ վատացավ, ու մի քանի օր անց նա մահացավ: Ընկերս հոր հետ շատ էր կապված, և հիմա բազում հարցեր էին նրան տանջում, պատասխաններ էր փնտրում: Միաժամանակ նա լավ էր հասկանում վշտի ելևէջները, գիտեր՝ ինչպես օգնել ուրիշներին, որ կարողանան նավարկել փոթորկալից ջրերում: Եվ նա ինձ ասաց. «Ես երբեմն ուղղակի պիտի լսեմ հայրիկիս ձայնը, նրա սիրո հավաստիացումը: Նա ինձ համար միշտ էլ աշխարհն էր նշանավորում»:

Հիսուսի երկրային ծառայությունից սկիզբն ու առանցքային իրադարձությունը Հովհաննեսի ձեռքով մկրտվելն է: Հովհաննեսը փորձում էր դիմադրել, բայց Հիսուսը պնդեց, որ դա անհրաժեշտ է, որպեսզի ինքը կարողանա նույնանալ մարդկության հետ. «Հիմա թո՛ւյլ տուր, որովհետև մեզ այսպես է վայել, որ ամեն արդարություն կատարենք» (Մատթ. 3.15): Եվ Հովհաննեսն արեց այնպես, ինչպես Հիսուսը խնդրել էր: Հիսուսի մկրտվելուց հետո «երկինքը բացվեց նրա համար. նա տեսավ Աստծու Հոգին, որ աղավնու պես վայր էր իջնում ու նրա վրա գալիս» (Հմ.16): Ապա երկնքից լսվեց Հոր ձայնը. «Դա է իմ սիրելի որդին, որին ես հավանեցի» (Հմ.17):

Այդ նույն ձայնը հնչում է մեր սրտերում ու վստահեցնում նրա մեծ սիրո մասին (Ա.Հովհ. 3.1)

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ քո հուսադրող ձայնի համար, որն ինձ ասում է, թե ես ունն եմ և որքան եմ սիրված: Ամեն:

**Ասված խոսում է մեզ հե՛ս Ի՛ր հուսադրող խոսքերով, հե՛տևաբար մեզանից ակնկալում է, որ մենք էլ նույն հորդորներով փառալերենք ուրիշներին:**

Որովհետև հավատով ենք ընթանում և ոչ թե երևույթով: (Բ.Կորնթ. 5.7)

## ԱՊՐԵԼ ՅԱՎԱՏՔՈՎ

**Գ**արին քայլելիս հավասարակշռությունը չէր կարողանում պահել, և բժիշկը նրան ֆիզիկական վարժություններ էր նշանակել: Բուժման ընթացքում բժիշկը նրան մի օր ասաց. «Դու շատ ես վստահում քո տեսածին, եթե նույնիսկ այն սխալ է: Եվ բավականաչափ չես օգտագործում քո ներքին ձայնի ու այլ զգացողությունների ազդանշանները, որոնք նույնպես քեզ հավասարակշռելու համար են տրված»:

«Դու չափազանց վստահում ես քո տեսածին», - հիշեցնում է նաև պատանի Հովիվ Դավթի պատմությունը և նրա հանդիպումը Գողիաթի հետ: Քառասուն օր այլազգի թշնամին «առավոտ կանուխ ու երեկոյան, գալիս արձանացած կանգնում էր իսրայելացիների առաջ», ծաղրում նրանց ու մարտահրավեր ուղարկում (Ա.Թագ. 17.16): Մարդիկ, բնականաբար, վախենում էին: Հետո հայտնվեց պատանի Դավիթը, որին հայրը խնդրել էր պատերազմող ավագ եղբայրներին սնունդ հասցնել և լուր բերել (Հմ.18): Դավիթն իրավիճակին նայեց ոչ թե իր տեսածով, այլ Աստծուն հավատալով: Նա տեսավ հսկային, բայց վստահ էր, որ Աստված կիրկի իր ժողովրդին: Թեև նա պատանի էր, բայց Սավուղ թագավորին ասաց. «Գողիաթի պատճառով իմ տիրոջ սիրտը թող չկոտրվի: Քո ծառան կգնա ու կմենամարտի այդ այլազգու դեմ» (Հմ.32,33): Իսկ դիմելով Գողիաթին՝ ասաց. «Սա Տիրոջ պատերազմն է, և Տերը ձեզ մեր ձեռքը պիտի մատնի» (Հմ.47): Աստված այդպես էլ արեց:

Աստծո նկարագրին ու զորությունն ապավինելը կարող է օգնել, որ մենք ապրենք ոչ թե տեսածով, այլ հավատով:

**Աղոթք** - Տեր, ինձ ցույց տուր, թե ինչ է նշանակում իմ մարտահրավերների մեջ Քեզ ու Քո նկարագրին վստահելը: Դու հզոր ու սիրող Աստված ես: Ամեն:

**Կյանքում զանազան մարտահրավերներ ենք դիմագրավում: Այդ ամենում կարևոր Աստծուն վստահելն է:**

Որովհետև Աստված անիրավ չէ, որ մոռանա ձեր գործերը և այն սիրո աշխատանքը, որ նրա անվան համար ցույց տվեցիք, որ ծառայում էիք սրբերին և ծառայում եք: (Եբ. 6.10)

## **ՔՈ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒԱՅՎԱԾ ԶԷ**

**Պ**ատմության մեջ ակնառու հետք ունեցող միսիոներներից է Ջորջ Լայլը: Ծնված լինելով Ջորջիա նահանգում, ստրկության մեջ՝ նա հավատաց Աստծուն և ամերիկյան հեղափոխությանը առաջ ազատվեց ստրկությանից: Նա, ծառայելով տնկարաններում աշխատող ստրուկներին, Հիսուսի պատգամը հասցրեց Ջամայկա, Հիմնեց աֆրոամերիկյան երկու եկեղեցի, որոնցից մեկը սևամորթ մկրտականների մայր եկեղեցին է:

Լայլի ծառայության տարիները գուցե և մոռացվեն, բայց նրա հոգևոր ծառայությունը երբեք չի մոռացվի Աստծո կողմից: Ոչ էլ այն գործը, որ դու ես անում Աստծո համար: Եբրայեցիներին ուղղված նամակն այս խոսքերով է քաջալերում մեզ. «Որովհետև Աստված անիրավ չէ, որ մոռանա ձեր գործերը և այն սիրո աշխատանքը, որ նրա անվան համար ցույց տվեցիք, որ ծառայում էիք սրբերին և ծառայում եք» (Եբ. 6.10): Աստծո հավատարմությունը երբեք չպետք է թերազնահատել, որովհետև Նա իսկապես գիտի և հիշում է հանուն Իրեն կատարված յուրաքանչյուր ծառայություն: Ինչպես ասված է վերոհիշյալ նամակում. «խոստումները ժառանգողներին նմանվող լինեք հավատով ու համբերատարությամբ» (Հմ.12):

Եթե ծառայելիս լինենք մեր եկեղեցում, համայնքում կամ վարագույրի հետևում, գուցե և մեր աշխատանքը չհրեա ու չզնահատվի մեզ շրջապատողների կողմից: Սակայն պետք չէ հուսահատվել, որովհետև Աստված միշտ հավատարիմ է ու միշտ նկատում է: Նա երբեք չի մոռանում մեզ:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, իմ ծառայությունը հեռու է կատարյալ լինելուց, բայց ես գիտեմ, որ Դու կհիշես ու կգնահատես այն:

Շնորհակալ եմ, որ ինձ տալիս ես Քեզ ծառայելու համար անհրաժեշտ ամեն բան: Ամեն:

**Ասծուն ծառայելով հիշեմ, որ Նա գնահատում է ու վարձատրում, նույնիսկ երբ մարդիկ անեստում են:**

Առատ ջրերը չեն կարող սերը մարել: (Երգ երգ. 8.7)

## ՍԻՐՈ ՈՒԺԸ

**Ո**ւթսունամյա կի՛նն ու տղամարդը հրաշալի զույգ էին դարձել: Նրանցից մեկն ապրում էր Գերմանիայում, մյուսը՝ Դանիայում: Նախքան միմյանց հանդիպելը՝ յուրաքանչյուրը 60 տարի ամուսնացած էր եղել: Երկուսի բնակավայրերն իրար շատ մոտ էին, բայց տարբեր երկրներում էին: Զույգը ծանոթացել էր, սիրահարվել ու միասին ժամանակ էին անցկացնում: Դժբախտաբար, համավարակի պատճառով Դանիայի կառավարությունը սահմանը փակեց: Բայց դա չխանգարեց նրանց, որ ամեն օր կեսօրից հետո հանդիպեին սահմանին գտնվող մի գյուղում, նստեին ամենքն իր կողմում և միասին ճաշեին: «Սերն է մեզ բերում այստեղ», - ասում էին նրանք: Փաստորեն նրանց սերն ավելի ուժեղ էր, քան սահմաններն ու համավարակը:

«Երգ երգոցում» սիրո ուժը այսպես է նկարագրվում. «Հզոր է սերը մահվան պես» (8.6): Մեզանից ոչ մեկը չի կարող խուսափել մահից: Եվ սերը համեմատված է այդ ամենազոր ուժի հետ: Ավելին, այն «դաժան է դժոխքի նման, նրա թռիչքը նման է հրի բոցի թռիչքին» (Հմ.6): Երբեք տեսե՞լ ես, թե ինչպիսի մոլեգնությունք է բռնկվում ու տարածվում կրակը: Սերն անհնար է զսպել, ինչպես այդ կրակը. «Առատ ջրերը չեն կարող սերը մարել» (Հմ.7):

Մարդկային սերը, երբ անձնագոհ է ու ճշմարիտ, ունի այդ նույն հատկությունը: Սակայն Աստծո սերն է միայն, որ ունենում է նման ուժ, անսահման խորություն և տոկունություն: Եվ որ ամենազարմանալին է, Աստված մեզանից յուրաքանչյուրին սիրում է այդ անանց սիրով:

**Աղոթք** - Հայր, ինձ պետք է Քո ուժեղ ու խոր սերը: Այն սերը, որ չի հանգչում ու չի թողնում, որ ես գնամ: Դու այսօր ինձ ցույց կտա՞ս այդ սերը: Ամեն:

**Եթե րո մեջ զգում ես Ասծո ուժեղ սերը, այն արժանապի՛ր ուրիշներին սեր ցույց տալով:**

Մի՛ կերպարանվեք այս աշխարհի կերպարանքով, այլ նորոգվեցե՛ք ձեր մտքի նորոգությամբ: (Քռմ.12. 2)

## ՄԵՆՔ ՄԵԿ ԵՆՔ

**Փ**որք համայնքում լուրերն արագ են տարածվում: Տասնամյակներ շարունակ իր ընտանեկան սեփականությունը եղած ազարակը բանկին հանձնելուց հետո Դեյվիդը լսեց, որ հողամասը դարձյալ աճուրդի է հանվել: Տարբեր տեղերից հայթայթելով անհրաժեշտ գումարը՝ նա հասավ աճուրդի վայր և միացավ գրեթե երկու հարյուր տեղացի հողատերերին: Նա կատարեց իր առաջին առաջարկը և թեթևացած շունչ քաշեց, երբ ի պատասխան ոչ մեկը ավելի բարձր գին չասաց: Հնչեց մուրճի ձայնը, և աճուրդը կայացավ: Համազյուղացիները Դեյվիդի ու նրա ընտանիքի շահը ավելի բարձր դասեցին, քան իրենց անձնականը:

Ազարակապանների ցուցաբերած այս ազնիվ զոհաբերությունը հենց այն կենսաձևն է, որը Պողոս առաքյալը հորդորում էր Քրիստոսի հետևորդներին: Նա մեզ զգուշացնում է. «չկերպարանվե՛ք այս աշխարհի կերպարանքով» (Հռոմ.12.2)՝ մեր եսասիրական ցանկությունները գերադասելով ուրիշների կարիքներից: Փոխարենը կարող ենք վստահել Աստծուն, որը հոգում է մեր բոլոր կարիքները, երբ մենք ծառայում ենք ուրիշներին: Երբ Սուրբ Հոգին նորոգում է մեր միտքը, մենք կարողանում ենք ասվածահաճ սիրով ու դրդապատճառներով արձագանքել իրավիճակներին: Ուրիշներին տալով նախապատվությունը՝ մենք կկարողանանք խոստափել ինքներս մեզ գերադասելուց, որովհետև Աստված հիշեցնում է, որ մենք ավելի մեծ բանի՝ եկեղեցու մաս ենք կազմում (Հմ.3-4):

**Աղոթք** - Յայր Աստված, խնդրում եմ փրկի՛ր ինձ

եսասիրությունից, որպեսզի կարողանամ անձնուրացություն դրսևորել և իմ հավատակից քույրերի ու եղբայրների հետ միասնական լինել: Ամեն:

**Ասծո կոչը հսակ է. ուրիշների կարիքները մեր կարիքներից առաջ դասել, որովհետև մենք մեկ ենք մեր Տիրոջով:**

ԱՆՄԻՍՏՈՒՆԻՆ իրենց ճանապարհները թվում են ուղիղ: Իմաստունն ունկնդիր է լինում խրատին: (Առ.12.15-16Ձեզ

## **ԻՄԱՍՏՈՒՆ ԽՐԱՏ**

**Ե**րբ 2019-ին հրդեհ բռնկվեց Փարիզի Աստվածամոր տաճարի տանիքում, հին փայտե գերաններն ու կապարե ծածկը այնպես էին այրվում, որ անհնար էր հանգցնել: Տաճարի աշտարակի ընկնելուց հետո բոլորի ուշադրությունը սևեռված էր զանգակատան աշտարակներին. եթե այդ հսկա պողպատյա զանգերի փայտե շրջանակներն այրվեին, դրանք կփլուզվեին և ամբողջ տաճարը կվերածվեր ավերակի:

Ապահովության համար հետ քաշելով իր հրշեջներին՝ Փարիզի հրշեջ ծառայության ղեկավար Գալեթը մտածում էր իր հետագա անելիքների մասին, երբ Ռեմի անունով հրշեջը առաջարկեց ջրի խողովակները կրակին մոտեցնել աշտարակի դրսի կողմից: Նկատի ունենալով շենքի փխրուն վիճակը հրամանատարը մերժեց նրան, սակայն Ռեմին շարունակում էր պնդել: Եվ գալեթը ստիպված եղավ ընտրել. լսել իր ենթակայի<sup>ն</sup>, թե թողնել, որ տաճարը փուլ գա:

Սուրբ Գրքում շատ է խոսվում խրատներ լսելու մասին: Թեև այն հիմնականում ընկալվում է որպես երիտասարդների կողմից մեծերին հարգելու ձև (Առ. 6. 20-23), բայց մեծ մասամբ դա այդպես չէ: Առակներում ասվում է. «Իմաստունն ունկնդիր է լինում խրատին» (12.6), «Պատերազմի հաջողությունը կախված է սրտի խորհուրդներից» (24.6) և միայն «Անմիտներին են իրենց ճանապարհները թվում ուղիղ» (12.15):

Ի վերջո հրամանատար Գալեթը լսեց Ռեմիին: Այրվող զանգակատան շրջանակները ճիշտ ժամանակին ջրեցին, և տաճարը փրկվեց: Կա<sup>ն</sup> որևէ բան, որի համար քեզ այսօր աստվածաշին խրատ կամ խորհուրդ է պետք:

**Աղոթք** - Հայր, խնդրում եմ խոնարհություն տուր ինձ, որպեսզի ուրիշներից լավ խորհուրդ կամ խրատ ստանամ: Ամեն:

**Տարբեր իրավիճակներում երբեմն իմասուն խորհրդի կարիք ենք զգում: Ծիճ դաճեմք ու տարբերեմք լավ խրատ վաճից:**



Երբ Սողոսը Երուսաղեմ գնաց, ջանք էր թափում, որ աշակերտներին հարեր, սակայն բոլորը նրանից վախենում էին ու չէին հավատում, որ աշակերտ է: (Գործք. 9. 26)

## **ԽՈՐՔԸ ՏԵՍԵԼՈՒ ԿԱՐՂՈՒԹՅՈՒՆ**

**Խ**որհրդատվության մասին մի հորվածում Հաննա Շելը բացատրում է, որ խորհրդատուները պետք է աջակցեն, ներշնչեն, բայց «առաջին և գուցե ամենակարևոր բանն այն է, որ լավ խորհրդատուն տեսնի քեզ: Ճանաչել մարդուն, ոչ թե իմանալ նրա մրցանակների կամ տեսանելի ուրիշ բաների մասին, այլ տեսնել նրա խորքը»: Այո՛, մարդիկ կարիք ունեն, որ իրենց ճանաչեն, իմանան ու հավատան:

Նոր Կտակարանում Բառնաբասը, որի անունը նշանակում է «Քաջալերանքի որդի», իր շրջապատի մարդկանց «տեսնելու» հմտություն ուներ: Գործք 9-ում նա պատրաստ է Սողոսին հնարավորություն տալ, այն դեպքում, երբ մյուս աշակերտները «նրանից վախենում էին» (Հմ.26): Սողոսը, որ նաև Պողոս է կոչվում (13.9) ժամանակին հալածել է Հիսուսի հետևորդներին (8.3), այդ պատճառով էլ «չէին հավատում, որ աշակերտ է» (9.26):

Ավելի ուշ Պողոսն ու Բառնաբասը որոշեցին «մեր եղբայրներին այցելություն տանք բոլոր քաղաքներում, որոնց մեջ Տիրոջ խոսքը քարոզեցինք, և տեսնենք, թե ինչպե՛ս են նրանք ապրում» (15.36) և անհամաձայնություն ունեցան Մարկոսին իրենց հետ տանելու հարցում: Պողոսը մտածում էր, որ ճիշտ չէ Մարկոսին վերցնել իրենց հետ, որովհետև նա նախապես լքել էր իրենց: Հետաքրքիրն այն է, սակայն, որ հետագայում հենց Պողոսն է գնահատել նրան՝ պատվիրելով. «Մարկոսին կառնես հետդ կբերես, որովհետև ինձ ծառայելու համար պետք է» (Բ.Տիմ. 4.11):

Բառնաբասը ժամանակ գտավ «տեսնելու» թե՛ Պողոսին, և թե՛ Մարկոսին: Խնդրենք Աստծուց, որ մեզ առաջնորդի դեպի այն մարդիկ, ովքեր կարող են քաջալերել մեզ, և որոնց մենք կկարողանանք քաջալերել:

**Աղոթք** - Հայր, օգնիր ինձ տեսնել ու խրախուսել ուրիշներին և առաջնորդի ինձ դեպի նա, ով կկարողանա քաջալերել ինձ: Ամեն:

**Սեր Երջադասում միտ էլ կլինեն մարդիկ, որոնք կուցենան մեր քաջալերանքի կարիքը: Կարևորը նրանց տեսնել կարողանալն է:**

Զորացի՛ր և շա՛տ քաջ եղի՛ր: (Յես. 1.7)

## **ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ԳԻՆԸ**

**Ռ**ազմական ինքնաթիռով զբոսանքի ժամանակ օդաչուն բացատրում էր, որ նման կարճ թռիչքուղուց երկինք բարձրանալու համար անհրաժեշտ է, որ 56 կմ/ժամ արագությամբ քամի լինի: Դրա համար նա ինքնաթիռը վարում էր ոչ թե քամու ուղղությամբ, ինչպես մենք էինք ճիշտ համարում, այլ քամու հոսանքին հակառակ: «Դա է բարձրանալու միակ ձևը», - ասաց նա: Իր ժողովրդին դեպի խոստացված երկիր առաջնորդելու համար Աստված կանչեց Հեսուեին, որը երկու կարևոր բան պետք է ունենար. «Զորացի՛ր և շա՛տ քաջ եղի՛ր» (Հես.1.7) և պատրաստ լիներ բազում մարտահրավերների: Դա ներառում էր հազարավոր խրախույզիչներին ղեկավարելու ամենօրյա պարտականությունը, պարսպապատ քաղաքների շրջապատումը (6.1-5), պարտություններ կրելը (7.3-5), Աքարի գողությունը (Հմ. 16-26), շարունակական մարտերը (գլ. 10-11): Հեսուեի դեմքին փչող քամին նրա կյանքը պիտի բարձրացներ այնքան ժամանակ, մինչև որ նա վստահություն ստանար Աստծո տված հրահանգներից: Աստված ասաց. «Զորացի՛ր և շա՛տ քաջ եղի՛ր, որպեսզի պահես և կատարես բոլոր օրենքները:... Դրանցից չչեղվես աջ կամ ձախ, որ խելամտորեն անես այն ամենը, ինչ որ պիտի անես: Այս օրենքների գիրքը քո շուրթերից չհեռացնես, այլ գիշեր-ցերեկ դրա մասին մտածի՛ր, որպեսզի գիտենաս կատարել բոլոր դրա մեջ գրվածները. այն ժամանակ հաջողակ կլինես, ուղիղ ճանապարհով կընթանաս և խելամտորեն կգործես» (1.7-8): Դու վճռե՞լ ես հետևել Աստծո ճամփաներին՝ անկախ ամեն ինչից: Եթե այո, ուրեմն կկարողանաս դիմագրավել մարտահրավերներն ու համարձակ թռչել քամուն ընդառաջ՝ տեսնելով, թե ինչպես է ճախրում հոգիդ:

**Աղոթք** -Յա՛յր, կյանքը դժվար է ու հաճախ ցավոտ: Թող որ իմ հարցերն ու խնդիրները ինձ ավելի մոտեցնեն Քեզ: Ամեն:

**Կյանքում հաջողություն ունենալու համար մարտահրավերներ դեմ է հաղթահարել: Ասված մեզ կբարձրացնի, երբ դասրաս լինենք դրանք դիմագրավելու:**

Դոգում է ճշմարտության մասին և ապահովում խաղաղությունը: (Ես. 26.3)

## ԿԵՆՏՐՈՆԱՆԱԼ ԱՍՏԾՈ ՎՐԱ

**Բ**ալետի պարողները տիրապետում են մի ձևի, երբ մի ոտքի վրա շատ գեղեցիկ պտույտներ են կատարում: Մանկությանս տարիներին, երբ ժամանակակից պարի էի գնում, սիրում էի այդ շարժումը, այնքան էի կատարում, մինչև գլխապտույտից ընկնում էի: Ժամանակի ընթացքում, սակայն մի հնարք սովորեցի, որն օգնում էր պահել հավասարակշռությունը: Դրա համար հարկավոր էր ընտրել մի կետ և ամբողջ պարապտույտի ընթացքում հայացքը պահել վրան: Այսինքն՝ պարը գեղեցիկ ու ճիշտ ներկայացնելու համար պետք էր ընդամենը մեկ կիզակետ ունենալը:

Մեր կյանքում բոլորս էլ դիմագրավում ենք շրջադարձեր: Բայց երբ կենտրոնանանք Աստծո վրա, Նա «կհոգա ճշմարտության մասին և կապահովի խաղաղությունը» (Ես. 26.3): Իսկ կատարյալ խաղաղությունն նշանակում է հանգիստ ու վստահ լինել, որ Աստված մեզ հետ է մեր խնդիրների ու փորձությունների մեջ՝ անկախ դրանց քանակից: Նրան ենք «հավիտենապես ապավինել» (Հմ.4), Նա է մեր հայացքի վերջնական ու անփոփոխ կիզակետը, որովհետև Նրա խոստումը երբեք չի փոխվում:

Ամեն օր աղոթելով ու Նրա տված խոստումները սովորելով՝ մեր հայացքն ուղղենք Նրան, որպեսզի կարողանանք ամբողջ կյանքի ընթացքում շնորհալիորեն շարժվել:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, Երիցի ինձ, երբ կենտրոնանում եմ խնդիրների վրա: Օգնի՛ր, որ ամեն հարցում աչքս ու սիրտս դարձնեմ դեպի Քեզ: Ամեն:

**Խնդիրներ ու Ենդություններ մի՛ս կլինեն, կարևոր կենտրոնանալն է Աստծո ու Նրա զորության վրա:**

Անդադար աղոթք արեք: (Ա.Թես. 5.17)

## **ԱՍՏՈՆ ՎՐԱ ՅԵՆՎԵԼՈՎ**

**Հ**արիեթ Թաբմենը գրել-կարդալ չգիտեր: Փոքր ժամանակ նրա գլուխը վնասվել էր դաժան ստրկատիրոջ ձեռքով: Այդ պատճառով նա ամբողջ կյանքում նոպաներ էր ունենում: Բայց ստրկությունից ազատվելուց հետո Աստված նրան օգտագործեց, որ փրկի իր նման ևս երեք հարյուր հոգու:

Նրա ազատագրած մարդիկ Հարիեթին «Մովսես» էին անվանում, որովհետև այդ քաջարի կինը 19 անգամ վերադարձել է նույն շրջանը՝ նախ իր հարազատներին, ապա նաև այլոց ազատելու ստրկական լծից: Նա իր գործունեությունը շարունակում էր նաև այն ժամանակ, երբ գլխազին էր նշանակված իր համար, և փաստորեն կյանքը վտանգի մեջ էր: Նվիրված լինելով Հիսուսին՝ նա Աստվածաշունչն ու մի երգարան իր հետ տանում էր ամենուր, մարդկանց խնդրում էր, որ կարդան, իսկ ինքը անգիր էր անում ու հետագայում մեջբերում: «Ես միշտ խոսում էի Աստծո հետ, անընդհատ աղոթում իմ գործի համար»,- ասել է Թաբմենը: Նաև ամենափոքր հաջողության դեպքում անգամ փառաբանում էր Նրան: Նրա կյանքը իսկական օրինակ է այն բանի, ինչի մասին ասում էր Պողոս առաքյալը առաջին դարի քրիստոնյաներին.«Միշտ ուրախ եղեք: Անդադար աղոթք արեք: Ամեն բանով գոհացե՛ք, որովհետև սա է ձեր հանդեպ Աստծու կամքը Քրիստոս Հիսուսով» (Ա. Թես. 5.16-18):

Մենք էլ, երբ հենվենք Աստծո վրա, անդադար աղոթենք ու Նրան փառաբանենք, Նա մեզ ավելի բարդ մարտահրավերներ դիմագրավելու զորություն կտա:

**Աղոթք** - Սիրո՛ղ, ամենակարո՛ղ Յայր, խնդրում եմ օգնի՛ր, որ անընդհատ ապրեմ Քեզ հետ ու ստանամ Քո ուժը՝ տոկալու բոլոր դժվարություններից: Ամեն:

**Երբ թույլ ու նեղված զգանք, արժե դիմել Աստծոն ու աղոթո՞վ վստահել նրա զորությանը:**

Արդ, գնա՛, ես կբացեմ քո բերանը, քեզ կսովորեցնեմ, որ ասես այն, ինչ պետք է ասել: (ԵԼՔ 4.12)

## **ԵՐԲԵՔ ՄԻ՛ ԱՍԱ՛ ԶԵՄ ԿԱՐՈՂ**

**Ձ** ենը առանց ոտքի էք ծնվել, և նրան թողել էին հիվանդա-  
նոցում: Բայց հայտնվել էին բարի մարդիկ, որոնք որդեգ-  
րել էին տղային, օգնել, որ ոչ միայն մեծանա, այլև զբաղվի իր  
սիրած գործերով, նույնիսկ հաջողութուն ունենա լարախաղա-  
ցության մեջ: Ընտանիքը նրան սովորեցրել էր երբեք չընկճվել,  
երբեք չասել՝ չեմ կարող: Ու նա կյանքի բոլոր դժվարութուն-  
ները հաղթահարում է լուծումներ որոնելով և նույնը սովորեց-  
նում է ուրիշներին:

Աստվածաշնչում շատ պատմություններ կան նման մարդ-  
կանց մասին, որոնք կարծեք թե ընդունակ կամ պիտանի չեն  
իրենց կոչումը կատարելու, բայց Աստծո գորությունը հաջողել  
են: Մովսեսը դասական օրինակ է: Երբ Աստված նրան կանչեց,  
որ Իսրայելի ժողովրդին դուրս բերի Եգիպտոսից, նա հակա-  
ռակվեց (Ել. 3.11, 4.1) ու դժգոհեց. «Ես անվարժ եմ խոսում ու  
ծանրախոս եմ» (4.10): Աստված ասաց. «Ո՞վ է մարդուն բերան  
տվել, կամ ո՞վ է ստեղծել խուլին ու համրին, տեսնողին ու  
կույրին: Մի՞թե ոչ ես՝ Աստվածս: Արդ, գնա՛, ես կբացեմ քո  
բերանը, քեզ կսովորեցնեմ, որ ասես այն, ինչ պետք է ասել»  
(4.10-12): Մովսեսը էջը համաձայնում, և այդժամ Աստված նրա  
եղբայր Ահարոնին ուղարկեց որպես օգնական և վստահեցրեց,  
որ Ինքը կօգնի նրանց. «Ես կբացեմ քո բերանն ու նրա բերա-  
նը, ձեզ կսովորեցնեմ այն, ինչ պետք է անեք» (Հմ.15):

Ձենի ու Մովսեսի նման մենք էլ ենք ունենում այդպիսի  
մտավախություն, և Աստված սիրով օգնում է մեզ: Նա ուղար-  
կում է մարդկանց, որոնք օգնում են մեզ և տալիս է այն, ինչի  
կարիքն ունենք:

**Աղոթք** - Հայր, շատ ուրախ եմ, որ ինձ մեծակ չես թողնում  
դժվարությունների մեջ: Շնորհակալություն Քո սիրո ու այն  
մարդկանց համար, որոնց դրել ես իմ կյանքում: Ամեն:

**Երբ կմտածես, որ չես կարող կամ դիտանի չես ինչ-որ բան  
անելու, վստահի՛ր Նրան ու Իր սված զորությանը:**

Եթե ձեզ մոտ գա, նրան ընդունեք: (Կող. 4.10)

## **ՍԻՐԻՐ ԱՏԵՐԻՄՆԵՐԻԴ**

**Է**յմար գոռոզ ու եսասեր էր, իսկ Դենին՝ կասկածամիտ ու ինքնամիտ: Այս երկու արտառոց հանճարները, սակայն, լավ ընկերներ դարձան: Տասը տարի նրանք սովորում ու աշխատում էին միասին: Սպասվում էր, որ նրանց համատեղ աշխատանքը Նոբելյան մրցանակի էր արժանանալու, բայց Դենին, հոգնելով էյմսի եսակենտրոն դրսևորումներից, մի օր հայտարարեց, որ իրենք այլևս ընկերներ չեն:

Երեք օր անց էյմար զանգահարեց ու ասաց, որ իր մոտ քաղցկեղ է ախտորոշվել, և բժիշկներն իրեն վեց ամսվա կյանք են տվել: Դենի սիրտը կոտրվեց, և նա ասաց. «Մենք ընկերներ ենք, ինչպես էլ որ մտածելու լինես»: Պողոսը խիստ, տեսիլք ունեցող առաքյալ էր, Բառնաբասը՝ փափուկ սիրտ ուներ և քաջալերող էր: Հոգին միացրեց նրանց և ուղարկեց միսիոներական ճամփորդության (Գործք. 13. 2-3): Միասին նրանք քարոզեցին, հիմնեցին եկեղեցիներ, քանի դեռ չէր առաջացել Մարկոսի դասալքության շուրջ իրենց տարաձայնությունը: Բառնաբասն ուզում էր երկրորդ հնարավորություն տալ Մարկոսին, Պողոսն՝ ընդհակառակը: Եվ նրանք բաժանվեցին (15. 36-41):

Ի վերջո Պողոսը ներեց Մարկոսին: Ողջունի նամակներում Մարկոսի մասին ևս գնահատանքի խոսք էր ասում (Կող. 4.10, Տիմ. 4.11, Փիլիմ. 1.24): Անհայտ է Բառնաբասի ճակատագիրը: Արդյո՞ք երկար ապրեց, որ հաշտվեր Պողոսի հետ այս կյանքում: Հուսամ՝ այո: Ինչ վիճակում էլ լինես այսօր, փորձի՛ր օգնության ձեռք մեկնել այն մարդկանց, որոնց հետ տարաձայնություններ ես ունեցել: Ծիշտ ժամանակն է ասելու, թե որքան ես սիրում իրենց և ցույց տալու այդ սերը:

**Աղոթք** - Հայր, օգնի՛ր հասկանալ, որ կյանքի հիմնական նպատակներից մեկը մեր շուրջը եղողներին սիրելն է: Ամեն:

**Եթե կա մեկը, որի հետ գժսված ես. այսօր ժամանակն է հաճավելու: Մի՛ հեսաձգիր:**

Մարդն ի՞նչ է, որ հիշում ես նրան: (Սաղմ. 8.5)

## ԱՍՏԴԵՐԻ ՄԱՐՏԱՅՐՈՎԵՐԸ

**Ք**սաներորդ դարասկզբին իտալացի բանաստեղծ Մարինետտին սկիզբ դրեց ֆուտուրիզմ անունով մի շարժման, որը մերժում էր անցյալի ամեն տեսակ դրսևորում՝ արվեստի ու գեղեցկության մասին ավանդական պատկերացումները և գովերգում էր արագուլթյունը, շարժումը, երիտասարդուլթյունը, մեքենաները, այսինքն՝ այն ամենը, ինչն ապագայի հետ էր կապվում: 1909-ին նա նույնիսկ ապագայապաշտուլթյան մանիֆեստ գրեց, որում հայտարարվում էր արհամարհանք կանանց հանդեպ և գովերգվում բռնուլթյունն ու պատերազմը: «Կանգնած աշխարհի գլխին՝ մենք սկսում ենք մեր խրոխտ մարտահրավերը աստղերի դեմ»,~ այսպես էր եզրափակվում այդ մանիֆեստը: Այդ հայտարարուլթյունից հինգ տարի անց սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, որը դրա գաղափարախոսներին փաստորեն իրենց սպասած փառքը չբերեց: Մարինետտին մահացավ 1944-ին: Աստղերը շարունակում էին մնալ իրենց տեղում:

Դավիթ թագավորը բանաստեղծուլթյուն ձոնեց աստղերին, բայց բոլորովին այլ հայացքով: Նա գրում է. «Տեսնեմ երկինքը՝ քո մատների գործը, լուսինն ու աստղերը, որոնք դու հաստատեցիր: Մարդն ի՞նչ է, որ հիշում ես նրան, կամ մարդու որդին, որ այցի գաս նրան» (Սաղմ. 8. 4-5): Դավթի հարցը ոչ թե անհավատուլթյան արտահայտուլթյուն էր, այլ գարմանքի ու խոնարհուլթյան: Նա գիտեր, որ տիեզերքն ստեղծող Արարիչը ուշադիր է մեր հանդեպ և նկատում է յուրաքանչյուր մանրամասն՝ լավը, վատը, հեզը, խրոխտը և նույնիսկ արտառոցը:

Աստղերին մարտահրավեր նետելը անիմաստ բան է: Որովհետև նրանք են մեզ կոչում, որ գովաբանենք մեր Արարչին:

**Աղոթք** - Երկնավոր Հայր, գարմանքով, երկյուղով ու խոնարհուլթյամբ եմ ընդունում Քո սերն իմ հանդեպ: Ենորհակալ եմ, որ սիրում ես ինձ: Ամեն:

**Ժամանակակից փոխափայլուլթյունները կարող են մեզ հեռացնել Աստուղ: Հիշենք մեր Տիրոջն ու փառաբանենք Նրան:**



Հավատն էլ հուսացված բաների հաստատումն ու չերևացող բաների ապացույցն է: (Եբ. 11.1)

## **ՀՎՎԱՏԲ՝ ՀՈՒՅՍԻ ԱՊԱՑՈՒՅՑ**

**Ա** մեն ազգ կամ անհատ տարբեր ժամանակներում ունենում է ճգնաժամային օրեր: Նույնիսկ եղել են ժամանակներ, երբ մարդիկ ստիպված են եղել շատ թանկ վճարել իրենց ազգային արժեքների կամ էլ գոյատևման համար: Դրանք հիմնականում վշտի, տագնապի, նեղուլթյան, հալածանքի ու մահվան ժամեր են: Պողոս առաքյալը ճգնաժամային պահերին հավատացյալների վիճակն է ներկայացնում կորնթացիներին ուղղված նամակի 4-րդ գլխում (հմ. 16-18): Հայ ժողովուրդն իր պատմության ընթացքում այդպիսի պահեր շատ է ունեցել: Ժամանակներ են եղել, երբ մենք հարկադրված ենք եղել պայքարի դուրս գալ մեր հոգևոր ու ազգային սուրբ արժեքները պահպանելու համար: Հավատքի պահպանումը միշտ էլ ուղեկցվել է հալածանքով, ցավով, մահով ու պայքարով: Ու այդ պարագաներում գորավոր հավատի գոյուլթյունը միշտ էլ առաջնային է եղել: Հայոց պատմության այդպիսի վճռորոշ դրվագներից է 451 թ. Վարդանանց պատերազմը: Ծիշտ է, հայերն այդ ճակատամարտում ռազմական առումով պարտություն կրեցին, սակայն 484-ի Նվարսակի դաշնագրով բարոյական հաղթանակ արձանագրեցին: Ավարայրը դարձավ հանուն խղճի ու կրոնի մղվող պայքարի սկիզբ: Վարդանանց հերոսների պայքարն այն դրական արդյունքն ունեցավ, որ հավատքը դարձավ հույսի ապացույց: Նրանք հավատացին ճշմարիտ, հավիտենական ու հզոր Աստծուն և վստահ էին, որ «Հավատն էլ հուսացված բաների հաստատումն ու չերևացող բաների ապացույցն է» (Եբ.11.1): Վարդանանք այդ ճակատագրական պահին հույսի խարխախով հավատ ցուցաբերեցին ու պայքարեցին «վասն Քրիստոսի և վասն Հայրենյաց»: Փառք ու պատիվ մեր սուրբ նահատակներին ու հավատի հայրերին:

**Աղոթք** - Երկնավոր Հայր, խնդրում եմ հիշեցնես մեզ, որ երևացող բաներին նայելու փոխարեն, չերևացողներին նայենք հավատքով՝ որպես մեր հույսի ապացույց: Ամեն:

**Կյանքում դայքարն անխուսափելի է: Բայց կարևորը չընկրկելն է, հանուն հոգևոր գիտակցության ու փրկության աշխատելը:**



Քո ճանապարհները հեռացրո՛ւ նրանից և մի՛ մոտեցիր նրա տան դռներին: (Առ. 5.8)

## **ԽՈՒՍԱՓԵԼ ԴՈՆԵՐԻՑ**

**Ա**ռնետի քթին ինչ-որ համեղ հոտ կապվ, և նա շարժվեց դեպի թռչունների կերի սնդուկը, մտավ դռնակով ու ամբողջ գիշեր վայելեց կերը: Միայն առավոտյան հասկացավ, թե ինչ վիճակում է հայտնվել: Թռչունները նայում էին իրեն, իսկ ինքը ամբողջ հացահատիկը կերել ու տոզել էր, չէր կարողանում դուրս գալ: Դռները մեզ կարող են տարբեր տեղեր տանել՝ վտանգավոր կամ հրաշալի: Առակների գրքի 5-րդ գլխում Սողոմոնը որդուն խորհուրդ է տալիս՝ ինչպես խուսափել անհավատարմությունից: Չար կինը կարող է հրապուրել, ձգել, բայց «անզգամի ոտքերը դեպի մահ են տանում նրա մերձավորներին և դեպի դժոխք են իջեցնում նրանց. հաստատուն չեն նրա ոտնահետքերը» (Հմ.5. 5): Լավ կլինի հեռու մնալ նրանից, սովորեցնում է Սողոմոնը. «Քո ճանապարհները հեռացրո՛ւ նրանից և մի՛ մոտեցիր նրա տան դռներին, որպեսզի քո կյանքն օտարներին չմատնես, և քո ունեցվածքը՝ անողորմ մարդկանց: Մի՛ թող, որ օտարները լցվեն քո ուժով, և քո վաստակը մտնի ուրիշների տունը: Թող հետո այնպես չլինի, որ երբ մարմնիդ անդամները մաշվեն, զղջաս և ասես, թե՛ «Ինչո՞ւ ես ատեցի խրատը» (Հմ.8-11): Դրա համար պետք է վայելել միայն կողակցի սերն ու մտերմությունը (Հմ. 15-20): Սողոմոնի խրատը կարող է վերաբերվել նաև ընդհանրապես մեղքին (Հմ.21-23): Անկախ նրանից, թե ինչ փորձություն առաջ ենք կանգնած, Աստված կարող է օգնել մեզ, որ դեպի ծուղակ տանող դռներից խուսափենք:

Առնետի բախտը բերեց, տանտերը նրան գտավ իր թռչունների կերի սնդուկում և ազատեց: Բարեբախտաբար, Աստված էլ պատրաստ է մեզ փրկել, երբ հայտնվենք թակարդում: Բայց ավելի լավ է խնդրել Նրա ուժը, որպեսզի խուսափենք դեպի թակարդը տանող դռներից:

**Աղոթք** - Ամենազոր Աստված, օգնի՛ր ինձ խուսափել դեպի փորձություն տանող դռներից: Ամեն:

**Ո՞ր դուռն է քեզ փորձության ասնում: Ինչդե՞ս կարելի է խուսափել դրանից:**

Ուրեմն այսուհետև այլևս օտար ու պանդուխտ չեք, այլ սրբերի հետ քաղաքացիներ և Աստծու ընտանիքի անդամներ: (Եփ. 2.19)

## **ԸՆՏԱՆԻՔԻ ՄԻ ՄԱՍԸ**

«**Դառնելիք ձեր արքայությունը**» բրիտանական պատմական դրամատիկական հեռուստասերիալ է 20-րդ դարասկզբի մի արիստոկրատ ընտանիքի մասին: Դրամայի գլխավոր հերոսներից մեկը՝ Թոմ Բրենստոնը, ընտանիքի վարորդն էր, որին սիրահարվում է Քրոուլինների կրտսեր գուստրը: Բնականաբար, այդ կապը չէր ընդունվելու, և նրանք հեռանում են երկրից ու ամուսնանում: Տարիներ անց երիտասարդ գույզը վերադառնում է արքայություն, և Թոմ Բրենստոնը դառնում է այդ ընտանիքի լիիրավ անդամը՝ օգտվելով բոլոր իրավունքներից ու արտոնություններից, որոնցից մինչ այդ զրկված էր:

Որոշ ժամանակ մենք էլ էինք «օտար ու պանդուխտ» (Եփ. 2.19) և զրկված էինք Աստծո ընտանիքի անդամների իրավունքներից: Բայց Տեր Հիսուսի շնորհիվ բոլոր հավատացյալները, անկախ իրենց ծագումից ու գիրքից, հաշտվեցին Աստծո հետ ու կոչվեցին Նրա «ընտանիքի անդամներ» (Հմ.19):

Աստծո ընտանիքի անդամ լինելը բազմաթիվ իրավունքներ է տալիս: Մենք կարող ենք ունենալ «Համարձակություն և վստահություն մեր Նրան մոտենալու արտոնություն» (3.12), դառնալ ավելի մեծ ընտանիքի մաս, «որի անկյունաքարը Քրիստոսն է. նրա մեջ ամբողջ շինվածքը միասին հարմարված աճում է, որպեսզի սուրբ տաճար լինի Տիրոջով» (2.19-21): Աստծո ընտանիքի անդամներն կարող են օգնել միմյանց՝ ճանաչելու Քրիստոսի շռայլ ու անսահման սերը (Հմ. 3.19): Լսենք ու ընդունենք Աստծո սիրո ձրի ու առատ պարգևը (2.8-10) և ապավինենք Նրան պատկանելու հրաշքին:

**Աղոթք** - Երկնավոր Հայր, շնորհակալ եմ, որ ինձ ընդունում ես որպես Քո ընտանիքի անդամ՝ տալով ինձ բոլոր իրավունքներն ու արտոնությունները: Ամեն:

**Աստծո ընտանիքի անդամ լինելը ռաս առավելություններ ունի:**  
**Հավաստով մոտենանք Աստծուն, որդեսզի այլևս օտար ու դանդաղ չլինենք:**

Տերը օծեց ինձ, ուղարկեց ավետարանելու աղքատներին: (Ես. 61.1)

## **ԲԱՐԻ ԼՈՒՐԻ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ**

**1** 964 թ. Ալյասկայի մեծ երկրաշարժը 9, 2 բալ ուժգնությամբ տուժեցրեց և շարունակվեց ավելի քան չորս րոպե: Անքորիջ քաղաքում ամբողջական շենքեր ու թաղամասեր հողին հավասարվեցին: Այդ սարսափելի գիշերը լրագրող Ջենի Չենսը աղետի գոտուց տեղեկություններ էր հաղորդում հուսահատ ռազիոլստողներին. ըստ այդմ՝ դաշտում աշխատող ամուսինն իմացավ, որ իր կինը ողջ է, մեկ այլ ընտանիք լսեց, որ ճամբարում գտնվող իրենց որդին լավ է, մի զույգ ավետիս ունեցավ իր երեխաներից: Այդպես ռազիոն համատարած ավերակների ու փլատակների միջից մեջ ընդ մեջ ուրախ լուրեր էր հայտնում:

Այս պատկերը պետք է, որ նման լինի Իսրայելի ժողովրդի զգացածին, երբ լսեցին Եսայի մարգարեի խոսքերը. «Տերը օծեց ինձ, ուղարկեց ավետարանելու աղքատներին» (61.1): Այդ ձայնը բարի լուր բերեց ճիշտ այն պահին, երբ նրանք հուսահատված էին իրենց ավերակված ներկայով ու մշուշոտ ապագայով: Աստված նպատակ ուներ «բժշկելու սրտով բեկվածներին, գերիններին ազատություն քարոզելու և կույրերին՝ տեսողություն... Պիտի վերաշինեն դարավոր ավերակները, նախկինում ավերվածները պիտի վերականգնեն և նորոգեն դարերից ի վեր փլատակված քաղաքները» (Հմ. 1, 4): Իր սարսափի մեջ ժողովուրդը լսեց Աստծո հավաստի խոստումը և Նրա բարի լուրը:

Աստված մեր վախերի, ցավերի ու ձախողումների մեջ հաղորդում է բարի լուրը և մեր նեղությունը վերածվում է ուրախության:

**Աղոթք** - Հայր, ես անընդհատ վատ լուրեր եմ լսել և բարի լուրի կարիք ունեմ: Ուզում եմ լսել Քո խոսքը, որովհետև ինձ պետք է Քո բերած ուրախությունը: Ամեն:

**Վախի ու անհանգստության ժամանակ բարի լուր ստանալու համար դիմի՛ր Աստծուն:**

Հեգաբարո մարդը սրտի բժիշկ է, հոգս անող սիրտը՝ ոսկորների փտուքյուն: (Առ. 14.30)

## **ՈՆՏՐԵԼ ՏՈՆԱԽՄԲՈՒԹՅՈՒՆԸ**

**Գ**րող, մանկավարժ, բժշկական համատեղ նախագծերի մասնակից Մերիլին Մաքենթայրը, որը բազմաթիվ գրքերի հեղինակ է և արժանացել է շատ մրցանակների, իր կյանքի պատմությունները ու գիտական հետազոտություններով մարդկանց սովորեցնում է, թե որքան մեծ է բառի, խոսքի ուժը, նաև քարոզում, որ նախանձի հակառակը տոնախմբությունն է:

Այդ տեսությունը հիշեցնում է իմ մի քանի ընկերներին, որոնց համար կյանքի նպատակը ուրիշներին խոր և իսկական ուրախություն պարգևելն է: Նախանձը մի որոգայթ է, որի մեջ ընկնելը շատ հեշտ է: Այն սնվում է մեր ամենախոր թաքնված հատկություններով՝ վախերով, վիրավորանքներով ու թերարժեքության զգացումներով: Պետրոսը հավատացյալներին ուղղված առաջին նամակում հիշեցնում է, որ մեր անձերը նախանձի հրահրած ստերից փրկելու միակ ձևը թաքնված է ճշմարտության մեջ. «Արդ դեն գցելով ամեն չարություն, ամեն խաբեություն, կեղծավորություն, նախանձ և ամեն չարախոսություն՝ նորածին մանուկների պես այն բանական անխարդախ կա՛թը ցանկացեք, որպեսզի նրանով աճեք դեպի փրկություն: Եթե ճաշակել եք, որ Տերը քաղցր է» (2. 1-3): Մենք կարող ենք «մաքուր սրտով իրար ջերմորեն սիրել» (1.22), երբ իմանանք, որ մեր ուրախության իսկական աղբյուրը «ծնվել է անապական սերմից, Աստծու կենդանի ու հավիտենական խոսքով» (Հմ.23): Մենք կարող ենք ընտրություն կատարել՝ հիշելով, թե ով ենք իրականում. «...ընտիր սերունդ եք, թագավորական քահանայություն, սուրբ ազգ, սեփական ժողովուրդ, որպեսզի նրա՛ առաքինությունները քարոզեք, ով ձեզ խավարից դեպի իր զարմանալի լույսը կանչեց» (2.9):

**Աղոթք** - Սիրո՛ղ Հայր, օգնի՛ր կարողանամ հրաժարվել նախանձի ստերից և դրա փոխարեն տոնախմբություն դարձնեմ Քո տված անհամար գեղեցիկ պարգևները: Ամեն:

**Տոնախմբություն կատարելու շահաճանձներ կան: Հիշե՛նք, որ մենք մեր սեղն ունենք Քրիստոսի մարմնում:**

Ինձ համար էլ աղոթեցե՛ք, որպեսզի իմ բերանը բաց անելիս ինձ խոսք տրվի, որ Ավետարանի խորհուրդը համարձակ հասկացնեմ: (Եփ. 6.19)

### **ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ**

**Ք**եթրինն ու ես դպրոցական լավ ընկերներ էինք: Երբ հեռախոսով չէինք խոսում, դասի ժամանակ գրություններով էինք միմյանց տեղեկացնում մեր այդ օրվա ծրագրերի ու հաջորդ հանդիպման մասին:

Մի կիրակի օր, երբ առավոտյան լսել էի իմ հոգևոր հովվի գրույցը հավիտենական կյանքի մասին, սկսեցի մտածել իմ ընկերուհու մասին, որն այնքան էլ չէր հավատում Աստվածաշնչին: Ես ուզում էի նրա հետ խոսել այդ մասին, բայց տատանվում էի՝ վախենալով, որ նա կմերժի ու կհեռանա ինձանից:

Կարծում եմ, որ այսպիսի վախեր շատերն են ունենում: Նույնիսկ Պողոս առաքյալն էր մարդկանց խնդրում աղոթել իր համար, «որպեսզի իմ բերանը բաց անելիս ինձ խոսք տրվի, որ Ավետարանի խորհուրդը համարձակ հասկացնեմ» (Եփ. 6.19): Պողոսը իրեն համարում էր «ղեսպան» (Հմ.20)՝ Աստծո անունից խոսող: Մենք էլ այդպիսի ղեսպաններ ենք, և եթե մարդիկ մերժում են մեր պատգամը, ուրեմն մերժում են Նրան, ով ուղարկել է այդ պատգամը:

Իսկ ի՞նչն է մեզ ստիպում բարձրաձայնել: Մենք Աստծո նման հոգում ենք մարդկանց համար (Բ.Պետ. 3.9): Այս խորհուրդն ինձ օգնեց, որ զանգահարեմ Քեթրինին: Նա առանց ընդհատելու լսեց ինձ և սկսեց հարցեր տալ: Ապա Հիսուսից ներում խնդրեց ու որոշեց ապրել Նրա համար: Իմ ջանքերն արդարացված էին:

**Աղոթք** - Սիրելի՛ Յայր, քաջություն տուր ինձ օգնության ձեռք մեկնել նրանց, ովքեր չեն ճանաչել Քեզ: Իմաստունություն տուր՝ իմանալու, թե երբ և ինչպես խոսել Քո մասին: Ամեն:

**Ասված ուզում է, որ մենք Իր անունից խոսենք: Աղոթենք, որ Նա օգնի մեզ, որդեսպի իր քաջ վկաները դառնանք:**

Ամեն մեկը ինչ շնորհ որ ընդունել է, այն իրա՛ր մատակարարեցեք, որպես Աստծու պես-պես շնորհների լավ տնտեսներ: (Ա. Պետ. 4.10)

## **ԳԻՇՏ ՏՆՕՐԻՆԵԼ ՇՆՈՐՀՆԵՐԸ**

**Բ**րիտանացի հայտնի դերասան Դեյվիդ Սուչեն վերջին դրվագներն էր նկարահանվում բելգիացի մասնավոր խուզարկու էրթյուկ Պուլարոյի դերում, նաև թատրոնում էր խաղում, երբ ստանձնեց «իր կյանքի մեծագույն դերը»: Նա ճայնագրեց ամբողջ Աստվածաշունչը՝ «Մենդոցից» սկսած մինչև «Հայտնություն», ավելի քան երկու հարյուր ժամ:

Սուչեն հավատացյալ չէր, 1986 թ. մի օր հյուրանոցի իր համարում գտել ու կարդացել էր հռոմեացիներին ուղղված նամակը: Եվ այժմ, երբ ավարտել է Սուրբ Գրքի ճայնագրությունը, այդ ամբողջ աշխատանքն անվանում է «27 տարվա ծրագիր», որին ինքը ձգտել է: Բնականաբար, այդ տարիներին նա փոխվել է հոգեպես, հետազոտել և ուսումնասիրել Աստվածաշունչը, ձեռք բերել նոր շնորհներ և կյանքի նպատակ դարձրել դրա ճայնավորումը՝ այդ գործին նվիրելով նաև իր ամբողջ աշխատավարձը:

Սուչեի այդ քայլը ոգեշնչող օրինակ է այն բանի, թե ինչպես կարելի է Աստծուն փառավորելուն նվիրել բոլոր շնորհները և Նրա մասին պատմել ուրիշներին: Առաջին դարի հավատացյալներին ուղղված իր նամակում Պետրոսը հորդորում է այդպես տնտեսություն վարել: Հալածվելով Հիսուսին, այլ ոչ Կեսարին երկրպագելու համար՝ նրանք պետք է կենտրոնանային Աստծո համար ապրելու վրա, զարգացնեին իրենց հոգևոր շնորհները: «Եթե մեկը խոսում է, թող ինչպես Աստծու հրամաններ խոսի» (Ա. Պետ. 4.11): Մենք հնարավորություն ունենք զարգացնելու մեր շնորհները, «որպեսզի ամեն բանում Աստված փառավորվի Հիսուս Քրիստոսի միջոցով» (Հմ.11):

**Աղոթք** - Երկնավոր Չայր, երբեմն վատնում եմ ինձ տվածո՞ղ շնորհները: Խստացրու՛ իմ հանձնարարությունը, որպեսզի կարողանամ լավագույնս տնօրինել դրանք Քո փառքի համար: Ամեն:

**Ասված բոլորին սվել է արբեր շնորհներ: Կարևոր դրանք ծիս սնորհներն ու Նրա փառքի համար օգտագործելն է:**



Սավուղի որդի Դովնաթանը վեր կացավ ու գնաց Դավթի մոտ, և նրա ձեռքերը Տիրոջ կողմից զորացան: (Ա. Թագ. 23.16)

## **ԱՍՏԾՈՎ ՔԱՋԱԼԵՐՎԱԾ**

**Խ**ոստոմնալից գրող *Լենգաթոն* Հյուզը, որ երիտասարդ տարիքում մի հյուերանոցում վարորդ էր աշխատում, տեսավ, որ իրենց մոտ է իջևանել հայտնի բանաստեղծ Վաչել Լինդսեյը: Ամաչում էր, բայց համարձակվեց իր գրածներից մի քանիսը ցույց տալ անվանի հյուերին: Որքա՛ն մեծ էր Հյուզի ոգևորությունը, երբ Լինդսեյը հանրային մի միջոցառման ժամանակ քաջալերեց նրան ու գովեց ստեղծագործությունները: Այդ ոգևորությունը նրան օգնեց, որ աճեր ու հաջողությամբ շարունակեր իր ուղին գրական ասպարեզում:

Ամենափոքր քաջալերանքն անգամ մարդուն կարող է շատ առաջ տանել, եթե դա Աստծուց է գալիս: Սուրբ Գիրքը մի այդպիսի դեպք է պատմում: Դավիթը Սավուղից փախուստ էր ավել, որովհետև նա փորձում էր իրեն սպանել: Բայց Սավուղի որդի Հովնաթանը փնտրեց, գտավ Դավիթին և օգնեց, որ ուժ գտնի Աստծո մեջ: Նա ասաց. «Մի՛ վախեցիր, որովհետև եմ հայր Սավուղի ձեռքը քեզ չի գտնի, և դու կթագավորես Իսրայելի վրա» (Ա.Թագ. 23. 17):

Հովնաթանը ճիշտ էր: Դավիթը Իսրայելի թագավորն էր լինելու և եղավ: Իսկ քաջալերանքի արդյունավետ բանալին, որ առաջարկել էր Հովնաթանը «Աստծո գորություն» (Հմ.16) մեջ էր: Հիսուսի միջոցով Աստված մեզ տալիս է «հավիտենական մխիթարություն ու բարի հույս» (Բ. Թես.2.16): Երբ մենք մեր անձր խոնարհեցնենք Աստծո առջև, Նա մեզ կբարձրացնի այնպես, ինչպես ոչ ոք չի կարող: Անկախ նրանից, թե այս կյանքը մեզ համար ինչ է պատրաստել, բոլոր Նրան հավատացողներին հավերժական պայծառ ապագա է սպասվում:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, Քո տված քաջալերանքը հավասարը չունի: Խնդրում եմ հնարավորություն տու՛ր օգնեմ ուրիշներին, որ նրանք էլ Քեզանով զորանան: Ամեն:

**Եթե մեկից փառալերում ու խրախուսանք ես ստացել, դու էլ դասրաս եղիր նույնը անել ուրիշներին:**

Մարդուս կյանքը նրա ունեցվածքի շատությունից չէ: (Ղուկ.12.15)

## **ԱՆՍԱՍԱՆ ՀԱՎԱՏՔ**

**Ք**եյվիներ հոր մահից հետո մտավ հանգստյան տուն՝ նրա իրերը հավաքելու: Աշխատակիցները նրան հանձնեցին երկու փոքրիկ տուփ: Եվ Քեյվիներ հասկացավ, որ երջանիկ լինելու համար կարևոր չէ ստացածի առատությունը:

Նրա հայրը՝ Լարրին, միշտ պատրաստ էր ժպտով խրախուսել ուրիշներին: Նրա երջանկության աղբյուրը մեկ այլ «ստացվածք» էր, որ անհնար է տեղավորել տուփի մեջ: Դա Տեր Հիսուսի հանդեպ անսասան հավատն էր:

Տեր Հիսուսը մեզ հորդորում է ոչ թե տուն, ավտոմեքենա կամ այլ խնայողություններ ունենալ, այլ «Ձեզ համար երկնքո՛ւմ գանձեր դիզեցեք:...Որովհետև որտեղ որ ձեր գանձն է, այնտեղ էլ ձեր սիրտը կլինի» (Մատթ. 6.20-21):

Որտե՞ղ էր կենտրոնացած Լարրիի սիրտը: Ուրիշներին սիրելով՝ Աստծուն սիրելու մեջ: Նա իր ապրած հանգստյան տանը բոլոր հանդիպողներին ջերմորեն ողջունում էր ու քաջալերում: Եթե մեկը տխուր էր կամ լաց էր լինում, մխիթարում էր կամ աղոթում: Այսինքն՝ այդ մարդու միտքը կենտրոնացած էր Աստծո փառքի և ուրիշներին բարօրություն անելու վրա:

Մենք էլ հարցնենք ինքներս մեզ, թե կկարողանա՞նք ուրախանալ այն բաներով, որոնք կշեղեն մեր ուշադրությունը Աստծուն և ուրիշներին սիրելուց և ճշտենք, թե որտե՞ղ է մեր սիրտը: Որովհետև մեր արժևորածը մեր կենսակերպի հայելին է:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, սիրում եմ Քեզ և ուզում եմ, որ Դո՛ւ լինես իմ մեծագույն սերը: Տու՛յց տուր, թե ինչպես կարող եմ նմանվել Քեզ: Ամեն:

**Ի՞նչն է գերադասելի քեզ համար և ի՞նչ կարող ես անել դա հաստատելու համար:**



Դու ես իմ ապաստանը, պահպանելու ես ինձ նեղությունից: (Սաղմ. 32.7)

## ԱՊԱՅՈՎ ՁԵՌՔԵՐ

Հովիվ ու քանդակագործ Դագ Մըրգլիի կյանքում մեկը մյուսին էին հետևում ձախողումները. մայրը չհաղթահարեց քաղցկեղը, սիրած էակի հետ իր հարաբերությունը խզվեց, նյութական վիճակը վատ էր, աշխատանքի հեռանկարը՝ մշուշոտ: Եթե այդ ամենին էլ ավելացնենք այն հանգամանքը, որ նա ապրում էր մի նեղլիկ ձեռնահարկում, պատկերն ամբողջական կլինի: Ահա այդ միջավայրում էլ նա ստեղծեց «Թաքստոց» անունով իր գլուխգործոց քանդակը, որը պատկերում է Քրիստոսի ուժեղ ձեռքերը, որոնք բացված էին որպես ապաստան:

Արվեստագետն այսպես է բացատրել իր աշխատանքը. «Դա Քրիստոսի հրավերն է՝ թաքնվելու իր մեջ»: 32-րդ սաղմոսում Դավիթը գրել է, որ գերագույն անվտանգ վայրը Ինքը Աստված է, որն առաջարկում է մեր մեղքերից ազատում (Հմ.1-5) և քաջալերում, որ աղոթենք մեր դիմագրաված ամենազժվար պահերին անգամ (Հմ.6): Իսկ 7-րդ համարում սաղմոսերգուն հայտարարում է իր վստահությունը Աստծո հանդեպ. «Դու ես իմ ապաստանը, պահպանելու ես ինձ նեղությունից: Դու ինձ շրջապատելու ես փրկության երգերով»:

Դժվարությունների հանդիպելիս ու՞մ ես դիմում: Որքա՛ն լավ է իմանալ, որ երբ մեր երկրային կյանքը սկսի քանդվել, մենք կարող ենք գնալ դեպի Աստված, որը Հիսուսի արարքով մեզ տվել է հավիտենական ապահովություն:

**Աղոթք** - Հայր, Դու գիտես այն ժամանակները, երբ ես կյանքս առանց Քեզ եմ անցկացրել: Օգնի՛ր հրաժարվել անվտանգության իմ պատկերացումներից և վազել դեպի Քեզ: Ամեն:

**Ծանր հոգուերի, վախերի ու ծանրության ներք առժե Տե՛ր  
Հիսուսով անվսանգություն ու աղահոովություն գտնել Ասժո՛ղ  
աղասանում:**

Թե ինչի՛ համար պետք է աղոթենք ինչպես որ արժան է, չգիտենք, բայց Յոզիմ ինքը անբարբառ հառաչանքներով բարեխոս է լինում մեզ համար: (Յոզ. 8. 26)

## **ԵՐԲ ԱՂՈԹԵԼԻՍ ԼԵՁՈՒՆ ԿԱՊՎՈՒՄ Է**

**Ե**րբ փոքրիկ եղբայրս վիրահատվեց, շատ անհանգիստ էի: Մայրս բացատրեց, որ դա այնպիսի վիճակ է, երբ երեխայի լեզվի տակ մի թել կա, որը կպած է բերանի հատակին և դժվարացնում է ուտելու պրոցեսը, հետագայում կխանգարի նաև խոսելուն: Լեզվի կապվածությունը եզրույթն է, իհարկե, փոխաբերաբար օգտագործում ենք նկարագրելու համար մարդուն, որը կամ բառեր չի գտնում արտահայտվելու կամ շատ ամաչկոտ է:

Երբեմն մեզ հետ էլ է պատահում, որ լեզուն կապվում է, չգիտենք՝ ինչ ասել, սկսում ենք բառերը կրկնել, ոչ հստակ արտահայտվել և մեր զգացումներն ուղարկում ենք երկիրք՝ մտածելով, որ դրանք կհասնեն Աստծուն: Բայց այդպիսով մեր մտքերը խոտոր ճանապարհով ու չկողմնորոշված են գնում:

Դիմելով առաջին դարի հավատացյալներին՝ Պողոս առաքյալն ասում է, որ Սուրբ Հոգին կօգնի աղոթելիս հստակ արտահայտվել. «Հոգին օգնում է մեր տկարություններին, որովհետև թե ինչի՛ համար պետք է աղոթենք ինչպես որ արժան է, չգիտենք, բայց Հոգին ինքը անբարբառ հառաչանքներով բարեխոս է լինում մեզ համար» (Հռոմ. 8.26): Օգնություն հասկացությունն այստեղ ծանր բեռ կրելն է, իսկ «անբարբառ հառաչանքները» այն միջնորդական ներկայությունն է, երբ Սուրբ Հոգին մեր կարիքները հասցնում է Աստծուն:

Երբ աղոթելիս մեր լեզուն կապվում է, Սուրբ Հոգին հասնում է օգնության՝ մեր շփոթմունքն ու շեղումը դարձնելով կատարյալ աղոթք, որը մեր սրտերից հասնում է Աստծուն: Նա լսում է և պատասխանում, տալիս մեզ այն հանգստությունը, որի կարիքն ունենք:

**Աղոթք** - Սիրելի Յայր, շնորհակալ եմ, որ Քո Յոզիմ օգնության է հասնում, երբ դժվարանում եմ աղոթքս ձևակերպել: Ամեն:

**Աղոթքի համար համադասասխան բառեր չգտնելու դեպքում դիմե՛նք Աստծուն, որդեսգի Սուրբ Յոզիմ բարեխոսի մեզ համար:**

Արդ եղբայրներս, մինչև Տիրոջ գալուստը համբերո՛ղ եղեք: Ահա մշակը համբերությամբ սպասում է հողի պատվական պտղին, մինչև որ առաջին ու վերջին անձրևն առնի: (Քալ. 5.7)

## **ՄՊԱՍԵԼՈՒ ՅԱՆԿՈՒԹՅՈՒՆ**

**Կ**արող է զարմանալի թվալ, բայց սպասելը մեր ժամանակներում կարող է վտանգել մեր անդորրը: Ինֆորմատիկայի մասնագետ Ռամեշ Սիտարամն ուսումնասիրել է, թե համացանցից օգտվողները ինչպես են արձագանքում որևէ նյութ ներբեռնելիս: Պարզվում է՝ մենք որևէ տեսանյութ համացանցից ստանալու համար պատրաստ ենք սպասել ընդամենը 4-5 րոպե: Դրանից հետո հրաժարվողների թիվը 25 տոկոս է, իսկ տասը րոպե անց այդ թիվը կրկնապատկվում է: Ստացվում է, որ մենք անհամբեր մարդիկ ենք:

Հակոբոսը Հիսուսին հավատացողներին խրախուսում է չլքել Նրան, երբ սպասում էին Նրա երկրորդ գալստյանը: Քրիստոսի վերադարձը նրանց ստիպում է դիմակայել տառապանքներին և սիրել ու հարգել իրար (Հակ. 5. 7-10): Համեմատության համար օգտագործելով հողագործի օրինակը, որը համբերության համար սպասում է «հողի պատվական պտղին, մինչև առաջին ու վերջին անձրևն առնի» (Հմ.7), Հակոբոսը հավատացյալներին հորդորում է մինչև Հիսուսի գալը համբերությանը դիմանալ ճնշումներին: Իսկ երբ Նա վերադառնա, կշտկի բոլոր սխալները և կբերի խաղաղություն:

Հիսուսին սպասելիս երբեմն մեր համբերությունը չի բավականացնում: Սակայն Նրան սպասելիս եկե՛ք «արթուն մնանք» (Մատթ. 24.42), լինենք հավատարիմ (25. 14-30) և ապրենք Նրա բնավորությանն ու օրինակին հետևելով (Կող. 3.12):

**Աղոթք** - Տե՛ր Հիսուս, սպասում եմ Քո վերադարձին: Թեև աշխարհը մութ է և ցավերով, տառապանքով, անարդարությամբ ու անորոշությամբ լի, ես կսպասեմ Քո վերադարձին, նույնիսկ երբ ճշգրիտ օրն ու ժամը չգիտեմ: Ամեն:

**Թեև դժվար է սղասել Հիսուսի վերադարձին, բայց եկե՛ք համբերությամբ ու մեծ ցանկությամբ սղասե՛նք և Ի՛ր դասվիրանների համաձայն աղոթե՛նք:**

Լեռների վրայ ի՞նչ գեղեցիկ են ոտքերը նրա, ով խաղաղության լուրն է ավետում: (Ես. 52.7)

## **ԳԵՂԵՑԻԿ ՈՏՔԵՐ**

**1** 994-ին Ջոն Նեչը արժանացավ տնտեսագիտության բնագավառի Նոբելյան մրցանակի, որովհետև նրա մաթեմատիկական տեսությունը լայնորեն կիրառվում է տնտեսության մեջ, հատկապես օգնում շուկայական հարաբերություններում մրցակցությունը: Գիտնականի կյանքի ու կարևոր գյուտի մասին գրվել է գիրք և նկարահանվել ֆիլմ՝ «Գեղեցիկ միտք» վերնագրով:

Եսայի մարգարեն էլ օգտագործում է «գեղեցիկ» բառը՝ նկարագրելու համար ոտքերը, բայց ոչ թեորպես ֆիզիկապես տեսանելի հատկություն, այլ այն բանի համար, որ դրանց արածի մեջ է տեսնում գեղեցկություն. «Ի՛նչ գեղեցիկ են ոտքերը նրա, ով խաղաղության լուրն է ավետում»: (Ես. 52.7):

Բաբելոնում Աստծո հանդեպ անհավատարմության պատճառով 70-ամյա ստրկությունից հետո պատգամաբերները հասան քաղաքական խոսքերով, որ Աստված ժողովրդին շուտով վերադարձնելու է տուն, քանի որ «Տերը...փրկեց Երուսաղեմը» (Հմ.9):

Բարի լուրը չի վերագրվում Իսրայելի ռազմական հզորությանը կամ մարդկային որևէ ջանքի: Դա Աստծո «սուրբ բազկի» գործն էր «ի տես բոլոր ազգերի» (Հմ.10): Նույնը ճշմարիտ է նաև այսօր, որովհետև Քրիստոսի՝ մեզ համար արած զոհաբերության շնորհիվ մենք հաղթանակ ենք տարել մեր հոգևոր թշնամու նկատմամբ: Հռչակելով խաղաղության և մեզ չըջապատողների փրկության մասին՝ մենք այդպիսով դառնում ենք բարի լուրն ավետող:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ, որ իմ կյանք ես ուղարկում մարդկանց, որոնք ինձ հայտնում են Քրիստոսի զոհաբերության պատգամը: Օգնիր, որ ես էլ ուրախությամբ կարողանամ ուրիշներին պատմել այդ մասին: Ամեն:

**Եթե usացել ես Քրիստոսի զոհաբերության բարի լուրը, փոխանցի՛ր այն ուրիշներին:**

Մարդ ու անասուն դու ես ասրեցնում, Տե՛ր: ( Սաղմ. 35. 6)

## **ԲՈԼՈՐ ՄԵԾ ՈՒ ՓՈՔՐ ԱՐԱՐԱԾՆԵՐԸ**

**Մ**իշելը Թիմբեր անունով փոքրիկ ջրաշանը վարժեցնում էր, որ վերադառնա վայրի բնություն: Տարավ նրան լճակում լողալու լճակում, բայց կենդանին վազում ու փաթաթվում էր ոտքերին: Մի առավոտ, սակայն, Թիմբերը չվերադարձավ: Միշելը երկար որոնեց նրան, բայց անօգուտ: Շաբաթներ անց նա ջրաշան մի գանգ գտավ, ու ենթադրելով, որ իր շունն է, շատ վշտացավ: Սիրտս ցավում էր նրա համար, մյուս կողմից էլ հանգստացնում էի, թե կորցրածը սովորական մի կրծող է: Բայց իրականությունն այն էր, որ նրա համար էլ էի ցավում: Այդպես է նաև Աստված: Նրա սերը հասնում է մինչև երկինք և ներքև՝ մինչև իր ստեղծած ամենափոքր արարածը և կոչ է անում մեզ հոգ տանել նրա մասին (Մտ. 1. 28): Նա «ասրեցնում է մարդ ու անասուն» (Սաղմ. 35. 5-6)՝ ապահովելով կեր «անասուններին և ագռավի ձագերին» (146. 9):

Մի օր Միշելը նավարկում էր հարևան լճակում, երբ հանկարծ նկատեց Թիմբերին: Փաստորեն նա գտել էր մեկ այլ ընտանիք և հոգ էր տանում դրա ձագուկներին: Թիմբերը մոտեցավ իր նախկին տիրոջ նավակին: Միշելը ժպտալով շոյեց նրան ու ասաց.«Երևում է, որ դու լավ ես: Գեղեցիկ ընտանիք ունես»: Կենդանին ասես ժպտաց, պոչը թափահարեց ու լողաց դեպի իր նոր ընտանիքը:

Սիրում եմ ուրախ վերջաբանով պատմությունները, հատկապես երբ ինձ հետ են պատահում: Հիսուսը խոստացել է, որ իր Հայրը ինչպես կերակրում է թռչուններին, այնպես էլ կտա նրանց անհրաժեշտ ամեն ինչը (Մատթ. 6.25-26): Ոչ մի ճնճ-դուկ առանց «Հոր կամքի գետին չի ընկնի:...Ուրեմն մի՛ վախեցեք. դուք շատ ճնճողուկներից ավելի լավ եք» (10. 29-31):

**Աղոթք** - Հայր, հոգսերիս ու ցավերիս մասին Քեզ եմ ասում:  
Ամեն:

**Ասված դասրաս է մե՛ր բոլոր կարիքները հոգալու: Ուսի դրանք հանձնենք Նրա սնորհմանը:**

Ոչինչ հոգ մի՛ արեք, այլ ամեն բանում աղոթքով, աղաչանքով և գոհությանմբ՝ ձեր խնդրանքները թող հայտնի լինեն Աստծուն: (Փիլ. 4.6)

### **ՐԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՐԱՎԱՍՏԻԱՅՈՒՄ**

**Վ**երջին ժամանակներս ծնողներն իրենց ապագա երեխայի սեռի մասին հայտնում են բավական թատերական ձևերով: 2019-ի հուլիսին ցուցադրված մի տեսանյութում մեքենայից դուրս եկող կապույտ ծուխը նշան էր, որ տղա է ծնվելու: Սեպտեմբերին Տեխասում դաշտերը ջրող ինքնաթիռից հարյուրավոր շարասյուններով վարդագույն ջուր էր ցողվում՝ ի նշան այն բանի, որ աղջիկ է ծնվելու:

Բայց կա մեկ ուրիշ «հայտնություն», որը նշանակալից բաներ է բացահայտում այն աշխարհի մասին, որտեղ այդ մանուկներն ապրելու են: 2019-ի ավարտին Աստվածաշնչային առցանց մի ծրագիր հայտնեց, որ այդ տարվա համարը, այսինքն՝ ամենից ավելի լուսաբանված, արծարծված քննարկված թեման եղել է Փիլ. 4. 6-ը. «Ոչինչ հոգ մի՛ արեք, այլ ամեն բանում աղոթքով, աղաչանքով և գոհությամբ՝ ձեր խնդրանքները թող հայտնի լինեն Աստծուն»: Դա, իսկապես կարևոր բացահայտում է: Մարդիկ շատ բաների համար են անհանգստանում՝ սկսած զավակների կարիքներից, մինչև ընկերների դժվարությունները, բնական աղետներն ու պատերազմները: Բայց հուսադրողն այն է, որ նրանք այդ ամենի մեջ չեն մոռանում վերը նշված համարը, որտեղ ասվում է. «Ոչինչ հոգ մի՛ արեք»: Ավելին, նրանք խրախուսում են ուրիշներին և իրենք իրենց, որպեսզի «ամեն բանում» իրենց խնդրանքները ներկայացնեն Աստծուն, որովհետև հավատում են, որ կյանքի բոլոր տագնապնները կարելի է դիմագրավել «աղաչանքով և գոհությամբ»: Իսկ «տարվա համարին» հաջորդում է հետևյալ հատվածը. «Աստու խաղաղությունը, որ ամեն մտքից վեր է, ձեր սրտերն ու մտքերը Քրիստոս Հիսուսով կպահպանի» (Հմ.7) : Սա իսկապես կարևոր հավաստիացում է:

**Աղոթք** - Տե՛ր, որոշ օրեր.շաբաթներ ու տարիներ ճնշող կարող են լինել: Ծնորհակալ եմ Քո պարզևած այն խաղաղության համար, որ ինձ պահել ու պահում է միշտ: Ամեն:

**Անհանգստացնող իրավիճակներ կունենանք, սակայն Ասված խոսանում է մեզ հանգստացնել:**

Քո բոլոր ճանապարհներին ճանաչի՛ր նրան, որպեսզի նա ուղղի քո ճանապարհները, և ոտքդ չսայթաքի: (Առ. 3.6)

## **ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ՎԱՐԱՆՈՒՄԸ**

Հիմա ապրում ենք այնպիսի ժամանակներում, երբ մեզ բազմաթիվ ընտրություններ են առաջարկվում. անձեռոցիկից սկսած մինչև կյանքի ապահովագրություն: 2004 թ. հոգեբան Բերրի Շվարցը իր «Ընտրության տարաբանությունը» խորագրով գրքում գրում է, որ թեև ընտրության ազատությունը դրական ու կարևոր բան է, սակայն երբ ընտրության առիթները շատ են, դա կարող է ծանրաբեռնել ու վարանում առաջացնել: Բնականաբար, անձեռոցիկի ընտրության հարցում չկա կամ շատ քիչ է կասկածն ու անորոշությունը: Սակայն մեծ ու կենսական կարևորության որոշում կայացնելիս այդ զգացումները կարող են նույնիսկ թուլացնել մարդուն: Ուրեմն ինչպե՞ս կարելի է հաղթահարել այդ կասկածը և վստահորեն գնալ առաջ՝ ապրելով Հիսուսի համար:

Որպես քրիստոնյաներ՝ ճիշտ որոշումներ կկարողանանք ընդունել Աստծո իմաստությունը խնդրելով: Աստծո Խոսքը մեզ սովորեցնում է. «Ամբողջ սրտով հույսդ դի՛ր Աստծու վրա և մի՛ հպարտացիր քո իմաստությամբ» (Առ. 3.5): Միայն մեր դատողությանն ապավինելով՝ կարող ենք շփոթվել, շատ կարևոր մանրամասնություն անտեսել և սխալ ընտրություն կատարել: Բայց երբ մեզ տանջող հարցի պատասխանը գտնելու համար դիմենք Աստծուն, Նա «կուղղի մեր ճանապարհները» (Հմ.6) և ամենօրյա որոշումներ կայացնելիս մեզ կտա խաղաղություն ու վստահություն:

**Աղոթք** - Երկնավոր Հայր, գիտեմ, որ իմ բոլոր ընտրությունների պատասխաններն ունես: Երբ խնդրում եմ Քո իմաստությունը, ինձ տուր մտքի հստակություն և ուժ, որպեսզի Քեզ հետ արիաբար առաջ գնամ: Ամեն:

**Կարևոր որոշումներ ընդունելիս աղոթքով դիմենք Ասծուն, որ մեզ օգնի ճիշտ ընտրություն կատարել:**

Ուրախություն կրերի քեզ, կնորոգի քեզ իր սիրով և ուրախ կլինի քո մեջ զվարճությամբ: (Սոփ. 3.17)

## **ՍԻՐՈ ԵՐԳ**

**Շ**աբաթ օրը հետմիջօրեին գետափնյա զբոսայգում մարդիկ հանդարտ զբոսնում էին, ձկնորսներն իրենց գործով էին զբաղված, իսկ ես ու կինս նստած նայում էինք սևամորթ մի զույգի: Կինը հիացած նայում էր տղամարդուն, իսկ վերջինը իր մայրենի լեզվով ինքնամոռաց երգում էր իր սիրո երգը, որի հնչյունները մեղմ քամին մեզ էր հասցնում: Այս պատկերն ինձ հիշեցրեց Սոփոնիայի գիրքը: Թեև կարող է հարց առաջանալ, թե ինչու, որովհետև Սոփոնիայի ժամանակներում Աստծո ժողովուրդը խոտորված էր ճշմարիտ ուղուց, խոնարհվում էր կեղծ աստվածներին (1.4-5), Իսրայելի մարգարեներն ու քահանաները «պղծում են սրբությունները և ամբարշտանում օրենքը խախտելով» (3.4): Գրքի մեծ մասում հայտարարվում է, որ դատաստան ու վրեժխնդրություն է լինելու բոլոր ազգերի դեմ (հմ.8): Սակայն Սոփոնիան մեկ այլ բան էլ է նախատեսում, երբ գրում է. «Տերն ասում է... ժողովուրդներին կվերադարձնեմ իրենց լեզուն ըստ ազգի, որպեսզի բոլորը Տիրոջ անունը կանչեն... քո միջից պիտի հանեմ քո ամբարտավան չարությունը, և այլևս չես շարունակելու գոռոզանալ իմ սուրբ լեռան վրա: Քեզ կթողնեմ հեզ և խոնարհ ժողովուրդ: Իսրայելի մնացորդները կվախենան Տիրոջ անունից, անիրավություն չեն անի, սնոտի բաներ չեն խոսի, և նրանց բերանում նենգ լեզու չի գտնվի» (հմ. 8-13): Այդ մարդկանց համար Աստված կնմանվի այն փեսային, որը հաճույք է պարգևում իր սիրելիին. «Ուրախություն կբերի քեզ, կնորոգի քեզ իր սիրով և ուրախ կլինի քո մեջ զվարճությամբ» (հմ.17): Արարիչ, Հայր, Ռազմիկ, Դատավոր: Աստվածաշունչը այսպիսի անուններ է օգտագործում Աստծուն բնորոշելու համար: Բայց մեզանից քանի՞սն են Նրան տեսնում որպես երգիչ, որի շուրթերին սիրո երգ է հնչում մեզ համար:

**Աղոթք** - Մե՛ծդ Երգիչ, ուրախ եմ, որ երգում ես ինձ համար: Ամեն **Ասված մեր Արարիչն է, Հայրը, Փրկիչը, Ռազմիկն ու Դատավորը: Բայց մեր կյանքը լիովին կփոխվի, երբ Նրան դիտարկենք որդես մեզ սիրող ու մեզ համար ուրախացող Ասված:**



Ինչպես որ Քրիստոսը ձեզ ներեց, այնպես էլ դուք: (Կող. 3.13)

## **ԲՈԼՈՐ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՀԱՆԴԵՐՁ**

**Օ**ւրվեր Կրոմվելը 17-րդ դարի անգլիացի հայտնի ռազմական գործիչ է: Նրա ժամանակներում ընդունված էր, որ հայտնի մարդիկ ունենային իրենց դիմանկարները: Նաև ընդունված էր, որ նկարիչները մարդկանց դեմքի թերուլթյուններն ու պակաս գրավիչ կողմերը չէին պատկերում: Կրոմվելին, սակայն, դա դուր չէր գալիս, և նա զգուշացնում է նկարչին.«Դու ինձ պետք է նկարես այնպես, ինչպես ես կամ՝ խալերով, այտուցներով և մնացած բաներով: Այլապես քեզ չեմ վճարի»:

Ըստ երևույթին նկարիչը այդպես էլ վարվել է, որովհետև զորավարի դիմանկարում առկա են խալեր և դեմքի այլ անհարթություններ, որոնք մեր ժամանակներում հրապարակելուց առաջ համակարգչային ծրագրերով սրբագրվում են:

«Բոլոր թերուլթյուններով հանդերձ» արտահայտությունը նշանակում է, որ մարդիկ պետք է ընդունվեն այնպես, ինչպես իրականում կան՝ իրենց սխալներով, բացթողումներով ու խնդիրներով:

Թվում է, թե դժվար ու բարդ բան է: Բայց բավական է ավելի ուշադիր ու քննող հայացք գցել և կտեսնենք, որ մեր իսկ բնավորության մեջ կան բազում բացասական գծեր:

Շնորհակալ ենք, որ Աստված ներում է «մեր թերուլթյունները»: Կողոսացիներին ուղղված նամակի 3-ից էլ սովորում ենք շնորհք ցույց տալ ուրիշներին: Պողոս առաքյալը մեզ հորդորում է համբերատար, բարի ու կարեկից լինել նույնիսկ նրանց հանդեպ, ում սիրելը այնքան էլ հեշտ չէ և ներողամիտ լինել, քանի որ Աստված ներեց մեզ(Հմ.12-13): Նրա օրինակով մենք սովորում ենք սիրել ուրիշներին:

**Աղոթք** - Սիրո՛ղ Հայր, ցույց տուր իմ թերությունները, որոնք խանգարում են Քեզ ճանաչելուն: Օգնի՛ր լինել ավելի համբերատար, սիրող ու ներող, ինչպիսիս Դու ես: Ամեն:

**Բոլորս էլ թերություններ ու թուլություններ ունենք, բայց Տերը դասվիրում է միմյանց սիրել և ընդունել այնպես, ինչպես կամ:**

Ի՞նչ է ուզում քեզնից Տերը. իրավունք հաստատել, ողորմություն սիրել և պատրաստ լինել քո Տեր Աստծու հետևից գնալու: (Միք. 6.8)

## ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՍՈՒՍԸ

Հուսման կայսրության հիմնադիր Օգոստոս Օկտավիանոսը ուզում էր հայտնի դառնալ որպես օրենքի ու կարգուկանոնի իշխան: Թեև իր կայսրությունը կառուցել էր ստրուկների աշխատանքով, ռազմական նվաճումներով ու կաշառակերություններով, սակայն նրան հաջողվեց վերականգնել օրինական դատական համակարգը, քաղաքացիներին տվեց արդարություն, հռչակեց արդարադատության համակարգի աստվածուհի, որն այսօր կոչվում է տիկին Արդարություն: Նաև Մարիամին ու Հովսեփին բերեց Բեթղեհեմ, որպեսզի ծնվեր երկար սպասված իշխանը, որի հզորությունը պիտի տարածվի մինչև երկրի ծագերը (Միք. 5.2-4): Սակայն ո՛չ Օգոստոսը, ո՛չ էլ ամբողջ աշխարհը իրական արդարությունը ցույց տալու համար չէին կարող կանխատեսել, թե ինչպես էր ապրելու և մեռնելու Մեծ Թագավորը: Դարեր առաջ, Միքիա մարգարեի օրոք Աստծո ժողովուրդը դարձյալ թաղվեց ստի, խարդախության, անիրավության մեջ, «իրենց տունը լցրին ամբարշտութեամբ» (6.10-12): Աստծո սիրած ազգը կորցրել էր Նրան, բայց Նա ուզում էր նրանց ցույց տալ իրենց աշխարհը և այն, թե ինչ է նշանակում «ողորմություն սիրել և պատրաստ լինել քո Տեր Աստծու հետևից գնալու» (Հմ. 8): Իսրայելի վիրավոր, մոռացված ու անօգնական ժողովրդի համար արդարությունն անձնավորելու համար պետք էր ծառա-թագավոր: Միքիայի մարգարեությունն իրականացավ Հիսուսի մեջ՝ որպես Աստծո ու մարդկանց և անձանց միջև ճիշտ հարաբերությունների օրինակ: Եվ դա կատարվել է ոչ թե կարգուկանոնի մասին կայսեր հրամաններով, այլ մեր Ծառա Հիսուս Թագավորի ողորմածության, բարության ու հոգու ազատության շնորհով:

**Աղոթք** - Հայր, խնդրում եմ Հիսուսի անունով. օգնիր ինձ ճիշտ վարվել ուրիշների և բոլոր նրանց հետ, ուն դնում ես իմ կյանքում: Ամեն:

**Տեր Հիսուս Քրիստոսով մեզանից ակնկալվում է գործել արդար, սիրել ողորմածություն և խոնարհությամբ ֆայլել Աստծո հետ:**

Այսպես ձեր լույսը մարդկանց առաջ թող լուսավորի, որ ձեր բարի գործերը տեսնեն ու փառավորեն ձեր Դորը, որ երկնքում է: (Մատթ. 5.16)

## **ԱՌԱՆՑ ԲԱՆԱԶԵԿԻ**

**Ե**րբ Ձենը երիտասարդ էր, նրա կիրակնօրյա դպրոցի ուսուցիչը ավետարանչության դասին բացատրեց, թե ինչպես Աստվածաշնչի որոշ համարներ անգիր սովորել և դրանց մասին պատմել ուրիշներին: Ձենն ու իր ընկերները փորձում էին իրենց մեկ այլ ընկերոջը սովորեցնել այդ ամենը և ճշգրտորեն կենտրոնանում էին ուսուցչի ասած քայլերի, սուրբգրային համարների վրա: Մի տեսակ ամեն ինչ բանաձևերով էր արվում՝ առանց նկատի առնելու անձին:

Հիմա, տարիներ անց, Ձենն ու իր ամուսինը իրենց զավակներին են ցույց տալիս Աստծո հանդեպ ունեցած սերը և իրենց հավատի մասին պատմում նրանց: Ու դա անում են Աստծո, Աստվածաշնչի և Հիսուսի հետ իրենց անձնական հարաբերությունների, կենդանի սիրո ամենօրյա օրինակներով: Նրանք ցույց են տալիս, թե ինչ է նշանակում լինել «աշխարհի լույսը» (Մատթ. 5.14) և բարությամբ ու հյուրընկալ խոսքերով հասնել ուրիշներին: Ձենն ասում է.«Մենք չենք կարող կյանքի բառեր փոխանցել ուրիշներին, եթե ինքներս չենք տիրապետում դրանց»:

Եվ իրենց բարի, առաքինի ապրելակերպով նրանք զավակներին պատրաստում են, որ «ուրիշներին հրավիրեն իրենց հավատքին»:

Մարդկանց դեպի Հիսուսը առաջնորդելու համար մենք բանաձևերի կարիք չունենք: Կարևորն այն է, որ Աստծո հանդեպ մեր սերը մեզ պարտադրում է փայլել: Իսկ երբ Նրա սիրո մասին պատմում ենք ուրիշներին, Աստված նրանց էլ է մոտեցնում իրեն, որ ավելի լավ ճանաչեն իրեն:

**Աղոթք** - Սիրելի՛ Աստված, ուզում եմ, որ ուրիշներն էլ զգան սիրո այն կապը, որ ես ունեմ Քեզ հետ: Օգնի՛ր ինձ, որ քայլելիս ու խոսելիս դեպի Քեզ հրավիրեմ ուրիշներին: Ամեն:

**Բարի լուրի մասին ուրիշներին դասմենք առանց հասուկ բանաձևերի:**

Անհավատների հետ այլախառն լծակից մի՛ եղեք: (Բ. Կորնթ. 6. 14)

## **ԶԳՈՆ ԼԻՆԵԼ, ԵՐԲ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ Է ԱՌԱՋԱՐԿՎՈՒՄ**

Նդկաստանում առևտրիկների համար բացված քրիստոնեական մի դպրոց խոշոր նվիրատվություն ստացավ մի ընկերակցությունից: Ստուգելով, որ առաջարկվածը անհասանելի օգնություն է, և չունի ինչ-որ ետին նպատակներ, գումարն ընդունեցին: Սակայն շատ չանցած՝ նվիրատուն ուզեց ներկայացուցիչ ունենալ դպրոցի հոգաբարձություն մեջ, և տնօրենը, չուզենալով վտանգել կրթօջախի արժեքները, վերադարձրեց նրանց գումարը՝ ասելով. «Ավելի կարևոր է Աստծո գործերն անել Աստծո ճանապարհով»:

Օգնությունը մերժելու բազմաթիվ պատճառներ կարող են լինել: Աստվածաշնչում մի օրինակ կա. երբ քարոզված հրեաները վերադարձան Երուսաղեմ, Կյուրոս թագավորը նրանց հանձնարարեց վերակառուցել Տիրոջ տաճարը (Բ. Եզ. 3): Իսկ երբ նրանց թշնամի հարևաններն ասացին. «Մենք էլ ենք ուզում տաճարը կառուցել ձեզ հետ, որովհետև ինչպես դուք, այնպես էլ մենք պաշտում ենք ձեր Տեր Աստծուն» (Բ.Եզ.4.2), Իսրայելի առաջնորդները մերժեցին: Որովհետև կարծում էին, որ եթե ընդունեն այդ առաջարկը, տաճարի վերակառուցումը կվրտանգվի, և կռապաշտությունը կթափանցի իրենց համայնք: Այդպես էլ կար: Իսրայելի որոշումը ճիշտ էր, քանի որ «իրենց հարևաններն» արեցին ամեն ինչ տաճարի կառուցումը կասեցնելու համար:

Սուրբ Հոգու օգնությամբ և իմաստուն հավատացյալների խորհուրդներով կարող ենք ճիշտ ընտրություն կատարել և հրաժարվել ընկերական թվացող որոշ առաջարկներից, որոնք հոգևոր վտանգներ են պարունակում:

**Աղոթք** - Սիրո՛ղ Հայր, Դու գիտես իմ կարիքները: Օգնի՛ր, որ իմաստուն ու ճիշտ ընտրություն կատարեմ և իմանամ, թե երբ կարելի է համագործակցել ուրիշների հետ: Ամեն:

**Ուշադիր լինենք, երբ մեզ օգնություն է առաջարկվում: Ծիճք ընտրություն կատարենք Աստծո գործը չխաթարելու համար:**

Եվ երբ գնամ ու ձեզ համար տեղ պատրաստեմ, նորից կգամ ու ձեզ ինձ մոտ կվերցնեմ, որպեսզի ուր որ ես եմ, դուք էլ լինեք: (Յուդի. 14. 3)

## ՄԵԶ ՀԱՄԱՐ ՏԵՂ ՊԱՏՐԱՍՏԵԼ

**Ո**ւզում էինք մի շնիկ ձեռք բերել, և տասնմեկ տարեկան դուստրս ամիսներ շարունակ պատրաստվում էր, ուսումնասիրում շան համար անհրաժեշտ ամեն բան: Երբ իմացանք, որ ավելի ճիշտ է տան սենյակները կենդանուն ցույց տալ աստիճանաբար, նրա համար առանձին սենյակ պատրաստեցինք: Վստահ եմ, որ մինչև մեծանալը, դեռ անակնկալներ կլինեն, բայց աղջկապ հրճվալից պատրաստությունը շատ մանրակրկիտ էր:

Դստերս այդ նախապատրաստությունն ինձ հիշեցրեց Քրիստոսի՝ կյանքը Իր ժողովրդի հետ կիսելու ցանկությունը և նրա համար տուն պատրաստելու խոստումը: Իր երկրային ծառայությունների ավարտին Հիսուսը աշակերտներին հորդորում էր վստահել Իրեն. «Աստժողուն հավատացեք ու ի՛նձ հավատացեք» (Հովհ. 14:1): Ապա խոստացավ. «Եվ երբ գնամ ու ձեզ համար տեղ պատրաստեմ, նորից կգամ ու ձեզ ինձ մոտ կվերցնեմ, որպեսզի ուր որ ես եմ, դուք էլ լինեք» (Հմ. 3):

Աշակերտներին դժվարություններ էին սպասում, սակայն Տեր Հիսուսն ուզում էր՝ նրանք իմանան, որ Ինքը միշտ գործում է, որպեսզի նրանց բերի տուն՝ Իր մոտ:

Կրկին դառնալով դստերս մանրամասն նախապատրաստություններին՝ ես կարող եմ պատկերացնել, թե որքան ավելի մեծ է մեր Փրկչի ուրախությունը, երբ իր մանրակրկիտ պատրաստությունով օգնում է յուրաքանչյուր մարդու հավիտենական կյանքը կիսելու Իր հետ:

**Աղոթք** - Տեր Հիսուս, շնորհակալ եմ, որ ինձ համար տեղ ես պատրաստում: Օգնիր, որ հույսս դնեմ Քեզ վրա և չվախենամ այս կյանքի տագնապներից, որոնք կփորձեն հայացքս Քեզնից կտրել:

**Թող ֆառալեքսն լինի այն խորհուրդը, թե Տեր Հիսուսը տեղ է դրած քեզ համար:**

Բռնեցե՛ք փոքրիկ աղվեսներին, որ ապականում են այգիները: (Երգ երգոց 2.15)

## **ՓՈՔՐ ԱՂՎԵՍՆԵՐ**

**Օ**ղաչու՛ն, չկարողանալով թեյի բաժակը տեղավորել հատուկ պահոցի մեջ, այն դրեց կենտրոնական սեղանիկին: Հետո, երբ ինքնաթիռը հանդիպեց օդային արգելքի ու ցնցվեց, թեյը թափվեց կառավարման վահանակին, և օդանավի շարժիչն անջատվեց: Ի վերջո ինքնաթիռն անվտանգ վայրէջք կատարեց, բայց երբ ամիսներ անց նույնը պատահեց մեկ այլ ընկերության պատկանող անձնակազմի հետ, արտադրողը հասկացավ, որ խնդիր կա: 300 միլիոն դոլարանոց օդանավի բաժակակալները շատ փոքր էին: Այդ աննշան թվացող վրիպումը պատճառ էր դարձել սարսափելի պահերի:

Փոքր մանրամասնությունները կարող են խորտակել մեծ ծրագրեր, ուստի Երգ երգոցի հերոսն իր սիրեցյալին հորդորում է բռնել իրենց սիրո «այգին ապականող փոքրիկ աղվեսներին» (2.15): Նա տեսել էր, որ աղվեսները բարձրանում էին պատերին և խաղող փնտրելով՝ փչացնում որթատունկերը: Դժվար է նրանց բռնելը, հատկապես գիշերային մթուժյան մեջ, բայց պետք է անտեսել:

Ի՞նչն է սպառնում ձեր ամենամտերիմ հարաբերություններին: Հնարավոր է՝ դրանք մեծ օրինախախտումներ չեն, փոքր վրիպումներ են, որոնք, սակայն խաբխլում են ձեր սիրո հիմքերը: Փոքր զանցանքները, գումարվելով իրար, կարող են վտանգել անգամ ամենածաղկուն բարեկամությունն ու ամուսնությունը: Թող Աստված օգնի մեզ, որպեսզի բռնենք փոքր աղվեսներին: Եկե՛ք ներում խնդրենք և ներենք ուրիշներին՝ մշակելով մեր այգիները:

**Աղոթք** - Հայր, թող Քո արտասովոր սերը սովորական ձևով հոսի իմ մեջ: Ամեն:

**«Փոքր աղվեսները» մի՞չս էլ սղառնում են մեր կյանքին ու հարաբերություններին, սակայն Տիրոջ օգնությամբ կկարողանանք հաղթել դրանց:**

Եվ այն տարիների դիմաց, ինչ որ մորեխը, ջորյակն ու թրթուրը կերան, կհատուցեն ձեզ... առատորեն կուտեք, կհագնաք: (Յով. 2. 25-26)

### **ՎԵՐԱԿԱՆՉՆԵԼ ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԸ**

**Մ**այրս պատմել է, որ 1960-ական թվականներին հորս հետ ամուսնանալու պատճառով ինքը կիսատ է թողել քոլեջի ուսումը, բայց տնարարություն ուսուցիչ դառնալու նրա երազը չի մարել: Եվ երեք երեխա ունենալուց հետո առանց քոլեջի վկայականի՝ նա, որպես սննդաբանի օգնական, աշխատանքի անցավ Լուիզիանայի առողջապահական համակարգում: Պատրաստում էր առողջարար կերակուրներ և սովորեցնում առողջ ապրելակերպի գաղտնիքները: Զբաղվելով իր սիրած գործով՝ մայրս ասում էր, որ Աստված իսկապես լսել է իր աղոթքները:

Մեր կյանքում էլ այդպիսի բան կարող է պատահել: Մեր ծրագրերը ցույց են տալիս մեկ ճանապարհ: Իսկ Աստծո հետ անցկացրած մեր ժամանակն ու կյանքը կարող են դառնալ Նրա կարեկցություն, սիրո ու վերականգնող արարքները պատկերացնելու գեղեցիկ օրինակներ: Աստված ասաց Հուդայի ժողովրդին (Հով. 2. 21), որ ինքը կհատուցի նրանց կրած վնասները և «այն տարիների դիմաց, ինչ որ մորեխը, ջորյակն ու թրթուրը կերան» (Հմ.25): Նա շարունակում է օգնել մեզ՝ հաղթահարելու մեր մարտահրավերները և հասնելու մեր չիրականացված երազանքներին: Քանի որ մենք ծառայում ենք Քավիչ Աստծուն, որը հարգում է մեր զոհաբերությունները Իրեն և պարգևատրում մեզ:

Անկախ նրանից, թե մենք ինչ մարտահրավերներ ենք հաղթահարում կամ ինչ անկատար երազներ ունենք, կարող ենք կանչել վերականգնող Աստծուն և փառաբանել Նրան:

**Աղոթք** - Յո՞ր Աստված, շնորհակալ եմ Քո տված փրկագործության ու վերականգնումի խոստման համար: Օգնի՛ր, որ կյանքի բոլոր բնագավառներում վստահեմ Քեզ: Ամեն:

**Աստված վերականգնում ու նորոգում է մեզ: Այդ գիտակցությամբ սղասենք Նրան:**

Սերմանվում է ապականությանը և հարություն է առնում անապականությանը: (Ա.Կորնթ. 15.42)

### **ՎԵՐ ԿԵՆԱԼ ՊԱՐԵԼՈՒ**

**Մ**ի հայտնի տեսաներիցում երբեմնի բալետի պարուհի Մարթա Գոնսալես Սալզանան, որը տառապում է Ալցհեյմերի հիվանդությամբ, նստած է անվասայլակին: Սակայն ասես հրաշք է կատարվում, երբ հնչում են Չայկովսկու «Կարապի լիճը» բալետի հնչյունները: Կնոջ թուլացած ձեռքերը դանդաղ բարձրանում են, և երաժշտության զարգացման հետ մեկտեղ նա սկսում է նստած տեղը պարել: Թեև նրա միտքն ու մարմինը հիվանդ են, տաղանդը դեռ արթուն է:

Անդրադառնալով այս տեսաներիցին՝ մտաբերում եմ Կորնթացիներին ուղղված առաջին նամակում Պողոսի ասածը հարույթյան մասին: Նա մարմինը նմանեցնում է սերմի, որը թաղվում է հողում և ասում.«Այդպես էլ մեռելների հարույթյունը. սերմանվում է ապականությամբ և հարույթյուն է առնում անապականությամբ: Սերմանվում է անարգությանը և հարույթյուն է առնում զորությանը: Սերմանվում է շնչավոր մարմին, և հարույթյուն է առնում հոգևոր մարմին» (Հմ. 15.42-44): Ճիշտ այնպես, ինչպես անմիջական կապ կա սերմի ու բույսի մեջ, մեր հարույթյունից հետո էլ մենք կդառնանք «մի ամբողջություն» և մեր անհատականությունն ու տաղանդը կզարգանան այնպես, ինչպես չի եղել մինչ այդ:

Երբ սկսում է հնչել «Կարապի լիճը» բալետի մեղեդին, Մարթան նախ ներքև է նայում՝ ասես հիշելով, թե ինչ չի կարող անել այլևս: Հետո մոտենում է մի մարդ ու բռնում նրա ձեռքը: Այդպես պիտի լինի նաև մեր դեպքում: Փողերը կփչեն (Հմ.52), մի ձեռք կբռնի մեզ ու կպարեցնի այնպես, ինչպես երբեք չենք պարել:

**Աղոթք** -Տեր, փառաբանում եմ քեզ, որպեսզի ոչինչ չկորչի, այլ վերականգնվի ապագայում: Ամեն:

**Յուսով նայե՛նք ու հավասան՛ք, որ ամեն ինչ կկարողանանք անել, եթե նույնիսկ այսօր ի վիճակի չենք:**



Ամեն մեկը բերեց իր սրտից բխածը. նրանք Տիրոջն էին նվիրաբերում այն ամենը, ինչ անհրաժեշտ էր վկայության խորանի, նրա կահավորանքի, բոլոր սրբազան զգեստների համար: (Ել. 35. 21)

## **ԱՆՑՅԱԼՈՒՄ ԿՈՐՍՎԱԾ**

**1** Ցրդ դարում Կորեայի թագավոր Յունգ Ջին, զայրացած իր երկրում տիրող շռայլությունից ու անտնտեսավարությունից, մի շարք փոփոխություններ մտցրեց: Մասնավորապես նա արգելեց ոսկեթել ասեղնագործության ավանդական արվեստը՝ համարելով այն չափազանց չքեղություն: Եվ այդ բարդ արվեստի մասին գիտելիքները մոռացվեցին ու դարձան անցյալի հուշ:

2011-ին գիտնական Սիմ Յուն Օզը որոշեց վերականգնել այդ հնագույն արվեստը և երկար ուսումնասիրությունից հետո դա նրան հաջողվեց:

Ելից գրքում նույնպես հիշատակումներ կան ուխտի տապալանակի կառուցման համար կատարված շռայլությունների, ներառյալ Ահարոնի քահանայական հանդերձը ոսկե թելով պատրաստելու մասին: Հմուտ արհեստավորները «Ոսկու թերթերը թելեթել կտրում էին, որպեսզի դրանք կապեն կապույտ, ծիրանի ու կարմիր ժապավենով և նրբահյուսս բեհեզով» (Ել. 39.3): Ի՞նչ պատահեց այդ նուրբ արհեստին, հագուստները մաշվեցին և վե՞րջ, թե՞ թալանվեցին: Իզու՞ր էր այդ ամբողջ աշխատանքը: Ո՛չ երբեք: Այդ ամենը կատարվեց, որովհետև Աստված էր այդպես տնօրինել:

Աստված մեզանից յուրաքանչյուրի համար որոշակի բան է նախատեսել: Մեր Երկնավոր Հոր համար կատարված ցանկացած պարտականություն դառնում է այն ոսկե թելը, որը ձգտում է դեպի հավիտենություն:

**Աղոթք** - Երկնավոր Հայր, օգնիր, որ կարողանամ ընտրել Քեզ ըստ ամենայնի ծառայելը: Ամեն:

**Ասված մեզ սվել է զանազան բարիքներ ու օրհնություններ:**  
**Օգտագործենք դրանք Նրա փառքի համար:**

Փիլիպպոսն էլ սկսեց խոսել և այս գրքից սկսելով՝ նրան Դիսուսի մասին ավետարանեց: (Գործք. 8.35)

## **ՊԱՐՁ ՁԵԿԵՐՈՎ**

**Է**լեկտրոնային նամակը կարճ էր, բայց շտապ: «Փրկության խնդրանք. ուզում եմ ճանաչել Տեր Հիսուսին», - գրված էր դրանում: Ես զարմացած էի, որովհետև ի տարբերություն իր դժկամ ընկերների ու ընտանիքի, որոնք դեռ չեն ընդունել Քրիստոսին, այս մարդը համոզելու կարիք չուներ: Իմ պարտականությունն էր ուղղակի նրան հայտնել Սուրբ Գրքի հիմնական մտքերը, դրանց համարները և այլ վստահելի աղբյուրներ, որոնք կարող էին օգնել նրան: Այդտեղից արդեն հավատքով Աստված նրան կառաջնորդեք: Նման պարզ ավետարանչությունն ցույց տվեց Փիլիպպոսը, երբ անապատի ճանապարհին հանդիպեց եթովպիացի պալատական գանձապահին, որը բարձրաձայն կարգում էր Եսայի մարգարեի գրքից: Փիլիպպոսը նրան հարցրեց. «Կարդացածդ արդյոք հասկանո՞ւմ ես» (Գործք 8.30): «Ինչպե՞ս կկարողանամ, եթե մեկն ինձ չառաջնորդի», - պատասխանեց մարդը, և պարզաբանելու համար «Փիլիպպոսն սկսեց խոսել և այս գրքից սկսելով՝ նրան Հիսուսի մասին ավետարանեց» (Հմ.35): Սկսելով այնտեղից, որտեղ մարդիկ կան և պարզ ավետարանչություն անելով, ինչպես ցույց տվեց Փիլիպպոսը, Քրիստոսի պատգամը կարող է հաղորդակցվելու արդյունավետ միջոց լինել: Իրականում երբ երկուսը միասին ճամփա ընկան, մարդն ասաց. «Ահա ջուր. ի՞նչն է ինձ արգելում, որ մկրտվեմ» (Հմ.36): Փիլիպպոսը համաձայնեց մկրտել նրան և «նա ուրախությամբ գնում էր իր ճանապարհով» (Հմ. 39): Ես շատ ուրախացա, որ մեր նամակագիրը պատասխանեց, որ ապաշխարել է, ընդունել Քրիստոսին, գտել եկեղեցի և հավատում է, որ վերածնվել է: Ի՛նչ գեղեցիկ ու հիանալի սկիզբ:

**Աղոթք** - Երկնավոր Դայր, ես ավետարանելու մասնագետ չեմ, ուստի ցույց տու՛ր ինձ Քրիստոսի փրկության բարի լուրը մարդկանց հայտնելու պարզ ու ազդեցիկ ձևերը: Ամեն:

**Մեր շուրջը կան մարդիկ, որոնք կարիք ունեն ծանոթանալու խոսքին: Տիրոջ օգնությամբ կարելի է դարձնել ձերնով օգնել նրանց:**

Աստված ստեղծեց երկրի գազաճյուղերն իրենց տեսակներով: (ԾՆ.1.25)

## **ԱՍԾՈՒ ԼԱՎ ՍՈՍԻՆՁԸ**

**Փ** ենտիլվանիայի պետհամալսարանի գիտնականները վերջերս մշակել են սոսնձի նոր տեսակ, որը չափազանց ամուր է կպցնում, միաժամանակ կարելի է հեշտ հանել: Նրանց գյուտը հիմնված է խխունջի լորձուկների վրա, որը չոր պայմաններում կարծրանում է, խոնավության մեջ՝ թուլանում: Հենց այդ հատկանիշի շնորհիվ էլ խխունջը ազատ տեղաշարժվում է խոնավ միջավայրում, միաժամանակ ապահով լինելով նաև ցամաքում:

Բնութիցիոն հերևոյթի ընդօրինակմամբ հայտնաբերված սոսինձը հիշեցնում է գերմանացի աստղագետ Յոհան Կեպլերի բնորոշումն իր հայտնագործությունների մասին: Նա ասել է, թե ինքը պարզապես մտածում է Աստծո խորհուրդների մասին: Աստվածաշունչը մեզ ասում է, որ Աստված ստեղծեց երկիրը և նրա մեջ եղած բոլոր բաները, երկրի բուսականությունը (Մն. 1.12), «ծովային կենդանիները և ամեն տեսակ թևավոր թռչունները» (Հմ.21), «երկրի գազաններն ու սողուններն իրենց բոլոր տեսակներով» (Հմ.25) և «մարդուն՝ իր պատկերով» (Հմ. 27): Երբ մարդկությունը հայտնաբերում է բույսի կամ կենդանու մի յուրահատուկ հատկանիշ, պարզապես հետաքրքրությամբ հետևում է Աստծո ստեղծագործական քայլերին:

Ստեղծագործական յուրաքանչյուր օրվա ավարտին Աստված ուսումնասիրում էր իր աշխատանքի արդյունքը և այն բնորոշում «լավ է» արտահայտությամբ: Աստծո ստեղծագործության մասին ավելին իմանալով ու ավելին բացահայտելով՝ մենք նույնպես պիտի գիտակցենք այդ հոյակապ գործի էությունը, լավ հոգ տանենք ու հռչակենք այն որպես բարի ու լավ գործ:

**Աղոթք** - Արարի՛չ Աստված, շնորհակալ եմ, որ ստեղծեցիր աշխարհը՝ եզակի ու կատարյալ ձևով: Քո գործը հիասքանչ է:  
ԱՄԵՆ

**Մեր շուրջը եղող ստեղծագործություններին նայելով՝ կեսնենք նրա մասնահե՛տքը: Ուսի դե՛ս է գովաբանել նրան:**

Եղբայրներս, գուցե աչառությամբ ունենաք հավատը մեր Տեր Դիսուս Բրիստոսի, որ փառքի Տերն է: (Գաղ. 2.1)

### **ԵՎ ՅՈՑ ՈՒՐԻՇՆԵՐ**

**2** 020-ին Լոս Անջելեսի մերձակայքում ողբերգություն տեղի ունեցավ. ուղղաթիռը վթարվեց, ինչի հետևանքով ինը հոգի զոհվեց: Դրանց թվում էին ամերիկացի հայտնի բասկետբոլիստ Կոբի Բրայանտը և նրա դուստրը: Լրատվամիջոցները, այդ աղետի մասին հայտնելով, այդպես էլ նշում էին, որ զոհվել են Բրայանտները և յոթ ուրիշներ:

Բնական ու հասկանալի է նման իրավիճակներում կենտրոնանալ հայտնի մարդկանց վրա, բայց պետք է հիշել, որ կյանքի մեծ համապատկերում չկան նման բաժանարար գծեր, որոնք մյուս յոթ զոհի կյանքը կդարձնեն պակաս կարևոր:

Ուղղակի երբեմն-երբեմն պետք է հիշել, որ յուրաքանչյուր մարդ արարած Աստծո աչքին կարևոր է: Հասարակությունը հարուստներին ու հայտնի մարդկանց այլ կերպ է ընդունում, իհարկե: Բայց փառքը մարդուն չի դարձնում առավել կարևոր, քան մեր գերացին է, փողոցում խաղացող մանուկը, մի դժբախտ երիտասարդ կամ հենց դու:

Երկրի վրա յուրաքանչյուր մարդ ստեղծված է Աստծո պատկերով (Ծն.1.27), հարուստ թե աղքատ (Առ.22.2): «Աստծո մոտ աչառություն չկա» (Հռոմ. 2.11) և նրանցից յուրաքանչյուրը Փրկչի կարիք ունի (3.23):

Մենք կփառաբանենք մեր մեծ Աստծուն, երբ եկեղեցիներում թե հասարակության մեջ հրաժարվենք կողմնակալությունից (Հակ. 2.1-4):

**Աղոթք** - Երկնավոր Դայր, օգնիր, որ սեր ու բարություն ցուցաբերեմ բոլորի հանդեպ՝ անկախ նրանց դիրքից: Ամեն:

**Դիսուսի օրինակին հետևելով՝ եկե՛ք բոլորին անաչառորեն սիրեմք:**

Կփնտրեք ինձ և կգտնեք, որովհետև ինձ փնտրելու եք ձեր ամբողջ սրտով: (Եր. 29.13)

### **ՈՐՏԵ՞Ղ Է ԱՍՏՎԱԾ**

**Մ**արտին Հենդֆորդի՝ 1987-ին պատրաստած «Որտե՞ղ է Վալդոն» մանկական գլուխկոտորուկների շարքի գլխավոր հերոսը հազած է կարմիր ու սպիտակ դժավոր վերնաշապիկ ու գուլպա, կապույտ տաբատ, սրճագուլյն կոշիկներ և կրում է դրանց համապատասխան գլխարկ ու ակնոց: Այսինքն՝ նկարագարգումներով խճողված էջերում Վալդոն բավական հնարամտորեն քողարկված է: Նրան միանգամից տեսնելը հեշտ չէ, բայց հեղինակը խոստանում է, որ ցանկության դեպքում հնարավոր է: Աստծոն փնտրելը, իհարկե, նման չէ Վալդոյին որոնելուն, բայց Արարիչը խոստանում է, որ մենք էլ կարող ենք գտնել Նրան:

Աստված Երեմիա մարգարեի միջոցով իր ժողովրդին սովորեցնում է, թե նրանք ինչպես ապրեն օտարերկրացի գերուկարգավիճակում (Եր. 29.4-9): Նա խոստանում է պաշտպանել նրանց, մինչև որ իր կատարյալ ծրագրի համաձայն կվերականգնի նրանց ազատությունը (Հմ.10-11): Աստված վստահեցնում է. «Դուք կկանչեք ինձ, կգնաք և կաղոթեք ինձ, ու ես կլսեմ ձեզ» (Հմ.12):

Այսօր, թեև Աստված իրեն բացահայտել է Հիսուսի պատմության ու Հոգու միջոցով, սակայն այս աշխարհի բազմազբաղության մեջ դյուրին է մեր ուշադրությունը շեղել այլ ուղղությամբ ու երբեմն դժվարանալ գտնել Աստծուն: Բայց ամեն բանի Արարիչն ու Պահպանողը հայտարարում է, որ իրեն պատկանողները միշտ կգտնեն իրեն, եթե փնտրեն ամբողջ սրտով (Հմ.13):

**Աղոթք** - Սիրող ու ամեն բան պահպանող Արարիչ, խնդրում եմ օգնիր, որ կարողանամ Քեզ փնտրել ամբողջ սրտով և վստահել, որ կկատարես Քո խոստումները: Ամեն:

**Շեղող իրավիճակները խանգարում են մեզ կարդալ Աստվածածունը և աղոթել: Խնդրեմք Տիրոջ աջակցությունը այդ փորձությունը հաղթահարելու համար:**

Ուղղամիտներին առաջնորդելու է իրենց կատարելությունը: (Առ. 11.3)

### **ՊԱՐԿԵՇՏ ԿՅԱՆՔ**

**Ք**ենիացի վազորդ Աբել Մուլթայը միջազգային դժվարին մրցաշարի ժամանակ, երբ ընդամենը մի քանի մետր էր մնացել հաղթանակի հասնելու համար, շփոթելով ցուցանակները և կարծելով, թե հասել է վերջնագծին, կանգ առավ: Նրան հետևող իսպանացի վազորդ Իվան Ֆերնանդես Անայան տեսավ Մուլթայի վրիպումը: Սակայն ոչ թե օգտվեց դրանից, այլ մոտեցավ մրցակցին, բռնեց ձեռքը և առաջնորդեց դեպի հաղթական գիծ: Երբ լրագրողները Անայային հարցրին, թե ինչու այդպես վարվեց, նա պատասխանեց, որ իրականում Մուլթայն էր արժանի ոսկե մեդալին: Իսկ եթե ինքը օգտվեր մրցակցի սխալից, այդ դեպքում նախ իր հաղթանակը չէր ունենա այն արժեքը, և հետո ի՞նչ կմտածեր մայրն իր մասին: Եվ ինչպես գրեց թղթակիցներից մեկը. «Անայան հաղթանակի փոխարեն ընտրեց ազնվությունը»:

Առականների գիրքն ասում է, թե պարկեշտությունը ու հավատարմությունը ապրողներն ընտրում են ոչ թե շահավետը, այլ ճշմարիտը. «Ուղղամիտներին առաջնորդելու է իրենց կատարելությունը» (Հմ. 11.3): Պարկեշտության այս դրսևորումը ոչ միայն ապրելու ճշմարիտ ձևն է, այլև խոստանում է ավելի լավ կյանք և ինչպես շարունակում է Առականների գիրքը, «անօրեններին կործանելու է իրենց գայթակղությունը» ( Հմ.3):

Եթե մոռանանք պարկեշտությունը, կարճատև «հաղթանակները» իրականում կտանեն ավելի մեծ պարտություն: Բայց երբ Աստծո զորությունը մեզ ձևավորում են հավատարմությունն ու ճշմարտությունը, մենք կդառնանք խոր ու կայուն բնավորություն մարդիկ, որ իրականում լավ կյանք են վարում:

**Աղոթք** - Պարկեշտ Աստված, Դու ազնիվ ես ու հավատարիմ: Ինձ ավելի՛ նմանեցրու Քեզ: Սովորեցրու՛ լինել առաքինի ու անսխալ: Ամեն:

**Պարկեճությունը մեր գլխավոր հասկանիչներից է լինելու: Ի՞նչ դեժf է անենf այն զարգացնելու համար:**

Ձեր ամբողջ հոգսը նրա վրա՝ գցեցեք: (Ա.Պետ. 5.7)

## ԱՂՈԹՔԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

**Ե**րբ Աբբահամ Լինքոլնը դարձավ ԱՄՆ նախագահ, շատ դժվարին շրջան էր երկրի համար: Լինքոլնը իմաստուն ու բարոյական բարձր նկարագրի տեր առաջնորդ էր, նրա հետ էին կապում երկիրը ոտքի կանգնեցնելու գործը: Բայց նա խոստովանել է, որ ինքը հուսահատություն պահեց շատ է ունեցել, երբ իրեն թվացել է, որ անկարող է իր պարտականությունը կատարել: «Բազմիցս ցանկություն եմ ունեցել ծունկի իջնել, որովհետև զգացել եմ, որ տեղ չունեմ գնալու: Իմ իմաստունության ու հնարավորությունների մասին եղած կարծիքը անբավարար է թվացել»:

Մենք էլ, երբ կյանքի մարտահրավերների առջև մեր սեփական իմաստունության կամ գիտելիքների մասին կասկածներ ունենանք, Լինքոլնի նման կհասկանանք, որ լիովին կախված ենք որևէ սահմանափակումից գերծ չիսուսից: Պետրոսը այդ մասին է հիշեցնում՝ գրելով.«Ձեր ամբողջ հոգսը նրա վրա՝ գցեցեք» (Ա.Պետ. 5.7):

Աստծո սերն իր զավակների հանդեպ զուգորդված է Նրա բացարձակ գորությունմբ՝ դարձնելով Նրան այն կատարյալ Աստվածը, որին կարելի է մոտենալ մեր բոլոր թուլություններով: Եվ ճիշտ է այդ աղոթքի էությունը: Մենք գնում ենք չիսուսի մոտ՝ խոստովանելով Նրան ու ինքներս մեզ, որ անկարող ենք: Եթե Լինքոլնն ասել էր, թե ինքը հուսահատ է, որովհետև տեղ չունի գնալու, ապա մենք բարի լուր ունենք. մենք կարող ենք գնալ Նրա մոտ:

**Աղոթք** - Բավարար Աստված, գիտեմ, ոչ առանց Քեզ ոչինչ չեմ կարող անել: Շնորհակալ եմ, որ միշտ ինձ հետ ես՝ ինձ կատարելապես ճանաչելու և կարիքի ժամանակ իսկական օգնական լինելու համար: Ամեն:

**Անկեղծ լինելու դեղինում կեսանենք, որ մենք էլ եմք անկարող: Դիմենք Ասծուն և խնդրենք Նրա օգնությունը:**

Հաստատուն միտք ունեցողին դու պահում ես կատարյալ խաղաղության մեջ, քանզի քեզ է հուսացել: (Ես. 26. 3)

## **ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ**

**Ք**անի ամիս շարունակ աշխատավայրում դժվարություններ ունեի, սաղրանքներ էի հաղթահարում: Սովորաբար անհանգիստ մարդ լինելով՝ այս անգամ, սակայն, զարմանալիորեն խաղաղ էի: Անհանգստանալու փոխարեն՝ կարողացա պատասխանել հանդարտ մտքով ու սրտով: Գիտեի, որ խաղաղությունը միայն Աստծուց կարող է գալ:

Ի հակադրություն այս դժվարին օրերի՝ իմ կյանքում կար մեկ այլ շրջան, երբ ամեն ինչ լավ էր, բայց, այնուամենայնիվ, ինչոր անհանգստություն տանջում էր ինձ: Հասկանում էի, որ դրա պատճառն այն է, որ փոխանակ Աստծուն ու Նրա առաջնորդությանը վստահելու՝ սեփական կարողություններին էի ապավինում: Հետագարձ հայացք գցելով՝ ես հասկացա, որ իսկական, Աստվածային խաղաղությունը որոշվում է ոչ թե մեր հանգամանքներով, այլ Նրա հանդեպ ունեցած մեր վստահությանը: Աստծո խաղաղությունը գալիս է, երբ մեր միտքը հաստատուն է (Ես. 26.3): Եբրայերեն հաստատուն բառը նշանակում է «վրան հենվել»: Աստծուն հենվելով՝ մենք անպայման կգգանք Նրա հանգստացնող ներկայությունը: Աստծոն կարող ենք վստահել՝ հիշելով, որ Նա խոնարհեցնում է գոռոզներին ու անբարիշտներին և մաքրում Իրեն սիրողների ճանապարհները (Հմ.5-7):

Երբ դժվարության մեջ խաղաղվեցի, հայտնաբերեցի, որ Աստծո խաղաղությունը ոչ թե հակամարտության բացակայությունն է, այլ ապահովության զգացումը նույնիսկ նեղության պահին: Մի խաղաղություն, որը զերազանցում է մարդկային հասկացողությունը և մեր սրտերն ու մտքերը պահպանում է ամենադժվարին պարագաներում անգամ (Փիլ. 4. 6-7):

**Աղոթք** - Հայր, օգնիր, որ վստահեմ Քեզ և անսասան միտք ունենամ: Շնորհակալ եմ կատարյալ խաղաղության համար, որը պարուրում է ինձ, երբ վստահում եմ Քեզ: Ամեն:

**Կյանքում մեր ունեցած դժվարությունների ու ցեղությունների ժամանակ հարկավոր է վստահել Ասծուն:**



Քանի որ այս երևացող բաներին չենք նայում, այլ աներևույթներին, որովհետև երևացողները ժամանակավոր են, իսկ աներևույթները՝ հավիտենական: (Բ. Կորնթ. 4.18)

## **ԱՆՑՆԵԼ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԱՐՄԱՆՆԵՐԸ**

**Մ**եզ համար շատ դժվար էր, երբ իմացանք, որ ամուսինս շատերի նման թագավարակի պատճառով ազատվելու էր աշխատանքից: Չնայած, հավատում էինք, որ Աստված կբավարարի մեր հիմնական կարիքները, այնուամենայնիվ, անորոշ վիճակը սարսափելի էր: Ու երբ փորձում էի կարգավորել խառնակ մտքերս ու զգացումներս, հիշեցի իսպանացի կաթոլիկ քահանա և բանաստեղծ Խուան դե լա Կրուսի (Յոհան Խաչի) «Մտա ներս, անհայտություն» բանաստեղծությունը: Այն պատկերում է դեպի հանձնում գնալու հրաշքը, երբ «իմացություն սահմաններն անցնելով» սովորում ենք «զանազանել աստվածայինը՝ իր բոլոր երանգներով»:

Եվ ես ու ամուսինս գտանք ելքը. ուշադրություն դարձնել այն ամենին, ինչի մեջ խորանալով՝ կարելի է Աստծուն գտնել մեր շուրջը: Պողոս առաքյալը հավատացյալներին հրավիրում է մի ճամփորդության՝ տեսանելիից դեպի անտեսանելին, արտաքինից դեպի ներքին իրականությունները և ժամանակավոր պայքարից դեպի «Հավիտենական կշիռ ունեցող փառքը» (Բ.Կորնթ. 4.17): Բայց նա իր մղած պայքարում կարեկցության կարիք ուներ: Նա հասկացավ, որ ամեն ինչ լավ կլինի, երբ «Հիսուսի կյանքն էլ մեր մարմնի մեջ հայտնվի: Որովհետև ամեն ինչ ձեզ համար է, որպեսզի շատացած շնորհը շատերի գոհությունը ավելանա Աստծու փառքի համար: Դրա համար չենք վհատվում, այլ թեև մեր արտաքին մարդը փչանում է, բայց մեր ներքին մարդն օրեցօր նորոգվում է» (Հմ.10, 15-16): Նրանք կարող էին իմանալ Քրիստոսի կյանքի հրաշալիքը, որ նոր բաներ էր ստեղծում:

**Աղոթք** - Հայր, աշխարհում շատ անորոշություններ կան, որոնք չենք հասկանում: Օգնի՛ր սովորեմ հետևել Քեզ՝ տեսնելու համար Քո հրաշագործությունները, որպեսզի հույսս չկորցնեմ: Ամեն:

**Անորոշությունների ու ցավերի մեջ փորձենք տեսնել մեր գիտակցության սահմաններից դուրս եղած ճշմարտություններ:**

Եթե ձեր մեղքերը արյան պես կարմիր են, ապա ես ձյան պես ճերմակ կդարձնեմ, եթե որդան կարմիր լինեն, կսպիտակեցնեմ ինչպես բուրդ: (Ես. 1.18)

## **ԱՍՏՎԱԾ ՄԱՔՐՈՒՄ Է ԲԾԵՐԸ**

**Պ**ատկերացնում եք, որ մեր հագուստներն ավելի գործնական լինելու համար ունենային ինքնամաքրվելու հնարավորություն: Ըստ ԲԻ ԲԻ ՍԻ ռազիոկայանի հաղորդման՝ չինացի գիտնականները մշակել են մի այնպիսի նյութ, որը բամբակյա կտորի վրա քսելով ուլտրամանուշակագույն ճառագայթի ազդեցությամբ մաքրում է հոտերն ու բծերը: Փաստորեն ինքնամաքրվող հագուստ ունենալու հեռանկարը անհնար չէ:

Կտորը այդպիսի եղանակով մաքրելը, ինչ խոսք, կարող է օգտակար լինել: Իսկ հոգու բծերը միայն Աստված կարող է մաքրել: Հին Հուդայում Աստված բարկանում է Իր ժողովրդի վրա, քանի որ նրանք «երես էին թեքել իրենից», հանձնվել էին ապականություն ու չարին, մեղքերով լի էին և երկրպագում էին կեղծ աստվածներին ( Ես. 1.2-4): Վիճակն ավելի վատ կլիներ, եթե նրանք փորձեին իրենք իրենց մաքրել զոհեր մատուցելով, խունկ ծխելով, բազմաթիվ աղոթքներով ու հավաքներով (Հմ.12-13): Միակ ճիշտ ուղին այն կլիներ, որ նրանք ուշքի գային և զղջումի սրտով իրենց հոգու բծերը բերեին սուրբ ու սիրող Աստծուն: Որովհետև միայն Նրա շնորհքը կարող էր նրանց հոգիները «ձյան պես ճերմակ դարձնել» (Հմ.18):

Երբ մեղք ենք գործում, չկա ինքնամաքրման ձև: Խոնարհությունամբ ու ապաշխարելով պիտի ընդունենք մեր մեղքը և այն դենք Աստծո՝ մաքրող լույսի տակ: Նա է միակը, որ մաքրում է հոգու բծերը, մեզ առաջարկում լիակատար ներում և նոր հաղորդակցում:

**Աղոթք** - Հայր, ներիր, երբ անտեսում եմ Քեզ ու ինքնուրույն փորձում ազատվել իմ մեղքերից: Գիտեմ, որ միայն Դու կարող ես մաքրել հոգիս: Ընդունում եմ ու զղջում մեղքերիս համար: Ամեն:

**Երբ հոգին բացահայտում է մեր մեղքերը, դրանցից ազատվելու միակ ձևը Տեր Հիսուսի միջոցով Ասծո մոտ գնալն է:**

Երբ ճաշկերույթ ես անում, կանչիր աղքատներին, խեղճերին, կաղերին, կույրերին: Եվ երանելի կլինես: (Պուկ. 14.13-14)

## **ԱՍՏՈՒ ԶՅՈՒՊԱՏՈՍԱՐԱՆԸ**

**Ց** 2 տարեկան այրի Լյուդմիլան Չելսիայում ունեցած իր սեփական տունը հայտարարել էր «Երկնային թագավորության հյուպատոսարան»՝ ասելով.«Իմ տունը Քրիստոսի թագավորության ընդլայնումն է»: Նա սիրով ընդունում է բարեկամների ու անձանոթների, որոնք ցավի ու նեղության մեջ են և կարիք ունեն սիրո ու հոգատարության: Կարեկցող ու ազդեցող հոգով նրանց տրամադրում է սնունդ ու քնելու տեղ: Ապավինելով Սուրբ Հոգուն՝ նա ոչ միայն հոգածություն է պատասխանում իր տան այցելուներին, այլև սրտանց ուրախանում է, երբ տեսնում է, թե ինչպես է Աստված պատասխանում նրանց ազդեցությունը:

Լյուդմիլան ծառայում է Հիսուսին, ի տարբերություն այն իշխանի, որի տանը մի շաբաթ օր Հիսուսը սեղան նստեց և որին ասաց, որ իր տանը հյուրընկալի «աղքատներին, խեղճերին, կաղերին, կույրերին» և ոչ թե նրանց, ովքեր իրեն կփոխհատուցեն (Պուկ. 14.13): Եթե փարիսեցին Տեր Հիսուսին հյուրասիրեց պարզապես հպարտանալու համար, ապա բարեպաշտ Լյուդմիլան տարիներ շարունակ մարդկանց հրավիրում էր իր տուն, որպեսզի «այն դառնա Աստծո սիրո և իմաստության գործիք»:

Ուրիշներին խոնարհությամբ ծառայելը այն ձևերից մեկն է, որով մենք կկարողանանք դառնալ «Երկնային թագավորության ներկայացուցիչներ»: Եվ այդ ծառայության ձևերը կարող են շատ տարբեր լինել: Այսօր մենք ինչպե՞ս ենք տարածելու Աստծո արքայությունը աշխարհի մե՛ր մասում:

**Աղոթք** - Տեր Հիսու՛ս, շնորհակալ եմ, որ հոգում ես կարիքավորների մասին: Օգնիր՝ նմանվեմ Քեզ և ուրիշների մասին հոգալով՝ նրանց ցույց տամ Քո սերը: Ամեն:

**Որդես Աստծո զավակներ՝ մեր դարձականությունն է հոգալ աղփասների ու կարոցյալների մասին:**



## Նյութերի ցանկ

Աղոթք.....	Հուն. 12, 19, 28, փետ. 6, 10, 20, մարտ 6, 11, 27
Ամուսնական հարցեր.....	փետ. 25
Անճկուլթյուն.....	Հուն. 4
Աշակերտություն.....	փետ. 18
Առաքելություն և նպատակ.....	մարտ 21
Աստվածաշնչի հեղինակություն.....	փետ. 18
Աստվածաշնչի ներշնչում.....	Հուն. 14
Աստվածաշնչի սերտողություն...Հուն. 14, 20, մարտ 11, 25	
Աստուծո սերն ու հոգածությունը.....	Հուն. 3, 24, 25 փետ. 8, 10, 11, 14, մարտ 3, 10, 12
Աստծուն վստահել.....	Հուն. 28, 30, փետ. 6, 12, 19, 21, մարտ 5, 19, 27, 28
Արդարամտություն.....	մարտ 26
Ավետարանչություն.....	փետ. 11, 24, մարտ 1, 8, 15, 22
Գոհունակություն.....	փետ. 21
Գուլթ.....	մարտ 4
Երջանկություն.....	Հուն. 26, փետ. 21, 28, մարտ 4
Ինքնապատկեր.....	Հուն. 29, մարտ 24
Խորհրդություն.....	Հուն. 11, մարտ 28
Խորհրդատվություն.....	փետ. 27
Ծառայություն.....	փետ. 13, մարտ 21
Կյանքի պայքարներ.....	փետ. 9, մարտ 5
Համբերություն.....	մարտ 7
Հավատքի պատմություններ.....	փետ. 20
Հավիտենական կյանք.....	մարտ 17
Հավատացյալների հարուլթյուն` .....	մարտ 20
Հեզություն.....	փետ. 2, 7, 9, 16, 23, մարտ 27
Հնազանդություն.....	փետ. 18, մարտ 18
Հոգեկան կարգապահություն.....	մարտ 25



Հոգևոր աճ.....	փետ. 17
Հպարտութիւն.....	փետ. 7
Հույս.....	Հուն 7, փետ. 21, 27, մարտ 29
Մահ.....	Հուն. 5, 31
Մատակարարութիւն և տալ.....	Հուն. 21, մարտ 2, 9, 16, 23
Մեղք.....	փետ. 25
Մեղքի թողութիւն.....	Հուն. 10, փետ. 3, մարտ 13, 30
Մտահոգութիւն.....	փետ. 6, մարտ 10
Ներել ուրիշներին.....	Հուն. 27, փետ. 22, մարտ 18
Շնորհակալութիւն.....	Հուն. 31
Ուրիշ քրիստոնյաների հետ ապրել.....	Հուն. 21, փետ. 26
Պաշտամունք.....	փետ. 4
Սեր՝ ուրիշների հանդեպ.....	փետ. 1, 8, 15, 22, մարտ 3, 13
Սուրբգրային պատմութիւններ.....	Հուն. 1, 8, 15, 22
Սուրբ Հոգի.....	մարտ 6
Ստեղծագործութիւն.....	փետ. 4
Վախ.....	Հուն. 28
Հավատք՝ Վարդանանք.....	փետ. 24
Տառապանք.....	Հուն. 4, 17, փետ. 5, 27, մարտ 29
Փրկութիւն.....	Հուն. 1, 2, 8, 9, 15, 16, 18, 22, 26, փետ. 27
Քաջակերութիւն.....	փետ. 17
Քրիստոսի անունները.....	մարտ 12
Քրիստոսի Ծնունդը.....	Հուն. 6
Քրիստոսի նման ապրել.....	փետ. 1, 7, մարտ 4, 11, 31
Քրիստոսին նմանութիւն.....	Հուն. 5, 13, 29, փետ. 20
Քրիստոս՝ Փրկիչ.....	Հուն. 23



## Նշումների համար



## Նշումների համար



## Կարևոր ազդ

Հարգելի՛ բարեկամ,

Եթե գիտեք մարդկանց, ովքեր ուզում են ունենալ այս գրքուկի հաջորդ համարները, կարող եք նրանց անունները գրել ներքևի կտրոնի վրա և ուղարկել հետևյալ հասցեով.

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն  
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18  
Հեռախոս՝ +374 10 54 35 76; +374 10 54 35 78  
Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am  
Կայքէջ՝ www.amaa.am

Արցախ

ք. Ստեփանակերտ

Ալեք Մանուկյան 7<sup>ա</sup>

Հեռ. +374 47 94 52 75

.....  
Անուն, ազգանուն .....  
Հասցե.....  
.....  
Հեռախոս.....  
.....